ISSN 1829-2003

ՎԱՐԶՔ

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՂ ՀԻՄՆԱԴՐԱՄ

RESEARCH ON ARMENIAN ARCHITECTURE

VARDZK

DUTY OF SOUL

N 21 2025

Ռաֆֆի Քորթոշյան
ԱՐԱՄՈ ԳՅՈՒՂԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

էջ 1

Սաթենիկ Խուրշուդյան
ՎԻՄԱԳՐԵՐՆ «ԱԿՕՍ»-Ի ԷՋԵՐՈՒՄ

էջ 27

Ռաֆֆի Քորթոշյան
ԽՆՁՈՐԵՍԿԻ ՍԲ. ՀՈՒՓՍԻՄԵ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՎԱՆԴԱՏԱՆ ՔԵՐՇԱՊԱՏԿԵՐՆԵՐՆ ՈՒ ՔԵՐՇԱԳՐԵՐԸ

էջ 35

Աշոտ Հակոբյան
ՆՊԱՏ ԼԵՌԱՆ ԳԱԳԱԹԻ ՎԱՆՔԸ

էջ 39

Էմմա Աբրահամյան
ՃԱԿՈՒՌԻ

էջ 45

Աշոտ Հակոբյան
ՓՐԿՎԱԾ ՄԱՍՈՒՆՔՆԵՐ ՍԱԼՆԱՊԱՏԻ ՍԲ. ԳՐԻԳՈՐ ՎԱՆՔԻՑ

էջ 61

Էմմա Աբրահամյան
ՎԱՆԻ ՏԻՐԱՄԱՅՐ ՍԲ. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԶԱՆԳԸ

էջ 63

Ռաֆֆի Քորթոշյան
ԵԶՆԱԳՈՄԵՐՑԻ ՄԵԼԻՔ ՄԻՐԶԱԽԱՆԻ ՆՈՐԱՀԱՅՏ ՏԱՊԱՆԱՔԱՐԸ

էջ 64

ՎԱՐՁՔ

N 21 2025

ԽՄԲԱԳՐԱԿԱԶՄ
EDITORIAL BOARD
ԷՄՄԱ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ
EMMA ABRAHAMIAN
ՌԱՖՖԻ ՔՈՐԹՈՇՅԱՆ
RAFFI KORTOSHIAN
ՀԱՍՄԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
HASMIK HOVHANNISSIAN

ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՉԵՎԱՎՈՐՈՂՆԵՐ
ԱՐՄԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ
ԼԻԱՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ-ՔՈՐԹՈՇՅԱՆ
Designers
ARMEN GEVORGIAN
LIANA HOVHANNISSIAN-KORTOSHIAN

ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՂ ՀԻՄՆԱԴՐԱՄ
RESEARCH ON ARMENIAN ARCHITECTURE FOUNDATION
Engaged in informational Activity

ՎԿԱՅԱԿԱՆ N 03Ա089223
ՏՐՎԱԾ 13.10.2010
Certificate No. 03Ա089223
Given 13.10.2010

ՀԱՍԱՐԻ ԹՈՂԱՐԿՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ
ՌԱՖՖԻ ՔՈՐԹՈՇՅԱՆ
Responsible for this issue
RAFFI KORTOSHIAN

ԵՐԵՎԱՆ, ՆԻԿՈԼ ԴՈՒՄԱՆ 16/1
Nikol Duman 16/1 , Yerevan, RA

raa-am.org
armenianarchitecture.org
artsakhmonuments.org
raayer@sci.am, raatransfer@yahoo.com
Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող հիմնադրամ RAA Foundation
010 52 15 25

© ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՂ ՀԻՄՆԱԴՐԱՄ
© Research on Armenian Architecture Foundation

ԱՐԱՄՈ ԳՅՈՒՂԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

Ռաֆֆի Քորքոշյան

ԱՐԱՄՈ. գյուղը հյուսիս-արևմուտքից (լուս.՝ Ա. Հախնազարյանի (ՀՃՈՒ), 1991 թ. և հոդվածագրի (ՀՃՈՒ), 2011 թ.)

Տեղադրություն. գտնվում է (35.630387, 36.135157) Սիրիայի Արաբական Հանրապետության Լաթաքիայի նահանգում՝ Լաթաքիա քաղաքից 33 կմ հյուսիս-արևելք՝ «...Ճէպէլ-Նէպիիւնիւս կամ Ճէպէլ-Տէրիւս ըսուած բարձր լերան վերայ...»[1]:

Բնակավայրը գոյացել է բարձր լեռնադաշտում՝ «...շրջապատուած հիւսիսէն ու հարաւէն լեռնակներով ու անտառներով»[2]: Նրա դիրքը «արեւմտքէն յարեւելք՝ և դէպ ի արեւմտեան հիւսիս իւր հայեցուածքն ունի...: Արեւմտեան կողմէն Միջերկրա-

1 Լաղաքիոյ հայաբնակ գիւղօրէից ստորագրութիւնը եւ գիւղացւոց արդի վիճակը, «Սիօն», 1866, № 7, 1 յուլիսի, էջ 97: Տե՛ս նաև **Sanjian A.**, The Armenian Communities in Syria Under Ottoman Dominion, Cambridge, 1965, p. 56. **Տէմիրճեան Վ.**, Գաւազանագիրք Լիբանանի եւ Սուրիոյ հայոց թեմերու առաջնորդութեանց, հ. Ա, Անթիլիաս, 1980, էջ 368:

2 **Այծեամն**, Նմոյշ մը Արամօ գիւղին հայ լեզուէն, «Հանդէս ամսօրեայ», 1907, № 1, յունուար, էջ 27:

ԱՐԱՄՈ. բնակելի տներ (լուս.՝ Ա. Հախնազարյանի, 1991 թ.)

կան ծովը զուարճալի տեսարան մի կը ներկայացնէ, ուսկէ կ'երեւին Կիպրոս կղզւոյն լերանց գագաթները, երբ պարզ երեկոյեան դէմ արեգակը իւր մայրը մտնելու ժամանակ ոսկեփայլ հրային ճառագայթները կը զարնէ անոնց վերայ: Իսկ առաւօտեան դէմ դէպ ի արեւմուտք դարձած ատեն, գիւղէն 2 ժամ հեռի բարձր լերան վերայէն արեգական ոսկէփունջ նշոյլները ծովեզերքէն մինչեւ լեռներուն ստորոտը 7-8 ժամ տարածութիւն ունեցող դաշտին վերայ ծագած ատեն սքանչելի տեսարան մի կը կազմեն մարդուս աչաց. հարաւէն Թարապուլուսի բարձրաձայր լեռները կ'երեւին, որոնք կ'երթան կը հասնին մինչեւ ի հիւսիս Ճէպէլ-Ագռայ կոչուած լեռը, որ Քէսապի բարձր լերանց մէկն է: Սոյն բնութեան գեղեցկութիւնը աւելի զգալի է գարնան ատեն, երբ գիւղի խրճթանման անշուք տներուն տանիքէն դէպ յարեւմուտս դիտած ատեն, լեռներուն բարձրութիւնը, ձորերուն խորութիւնը, դաշտին ընդարձակ տարածութիւնը միանգամայն մարդոյս աչաց առջեւ պարզուելով, և անդիու կողմն ալ ահագին ծովուն արեւելեան ափունքը Թարթուսի խորշէն մինչեւ Սուետիա (Սելեւկիա) թերակղզի մի կազմած, Լաղաքիայի դիրքն ու սահմանները կը տեսնուին»[3]:

Անվանում. գյուղանվան՝ մեզ հայտնի հնագույն հիշատակումը 1466 թվականից է՝ Յարամու ձևով[4], ավելի ուշ՝ 1864 թ., հիշվում է Արամայ տարբերակով[5]: Ի դարի սկզբին Իսկենտեր Գարաճյանը գյուղի պատմական անվանումների շարքում նշում է Արիմա, Ուրեմի և Ուրիմա անվանաձևերը[6], իսկ Սուքիաս Էփրիկյանը՝ Արամին[7]:

Ըստ ավանդության՝ «Գիւղն՝ իւր անունը առած է տ. Արամ անուն քահանայէ մը»[8]:

ԺԹ դարի վերջից հիմնականում հիշվում է Արամո անվանաձևով:

Այժմ արաբերեն փոքր-ինչ հնչյունափոխված պաշտոնապես կոչվում է عرامو:

Վարչական կացությունը. 1466 թ. գյուղը մտնում էր Շամ (կենտրոնը՝ Դամասկոս) աշխարհի Սակունյանց (կենտրոնը՝ Սալահ ալ-Դինի բերդ) երկրի[9], Օսմանյան կայսրության կործանման նախօրեին՝ Բեյրութի վիլայեթի Լաթաքիայի սանջակի Սահիյուն կազայի[10], 1920-1942 թթ.՝ Ֆրանսիական Սիրիայի Ալավիական Ինքնավար Պետության, իսկ հետո՝ Լաթաքիայի նահանգի սահմաններում[11]:

Այժմ Սիրիայի Արաբական Հանրապետության Լաթաքիայի նահանգի Ալ-Հաֆֆե գավառի Սլանֆե շրջանի կազմում է:

Բնակչություն. գրավոր աղբյուրներում գյուղը զուտ հայաբնակ է հիշվում դեռևս 1864 թ.[12], սակայն տեղաբնակների ավանդազրույցները[13], ինչպես նաև պահպանված նյութական մշակույթի հուշարձանները հուշում են, որ հայերն այստեղ ներկայություն են ունեցել առնվազն ԺԲ-ԺԳ դարերից: Սակայն գյուղի բնակչության թվաքանակին վերաբերող վիճակագրական տվյալները մեզ են հասել՝ սկսած Ի դարի սկզբներից: Ըստ այդ տեղեկությունների՝ զուտ հայաբնակ գյուղը 1903 թ. ուներ 50[14],

3 Լաղաքիոյ հայաբնակ գիւղօրէից..., էջ 97-98:
4 Նշվ. հոդվ., էջ 99:
5 Նշվ. հոդվ., էջ 97:
6 **Այծեամն**, նշվ. հոդվ., էջ 27:
7 **Էփրիկեան Ս.**, Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, հ. Ա, Վենետիկ, 1903-905, էջ 288:
8 **Թղթակից Բերիոյ** *(քին. Արսեն Հարությունյան)*, Կիլիկեան մոռացուած անկիւններ, «Արեւելեան մամուլ», 1906, № 49, 29 նոյեմբերի, էջ 1203:

9 **Չոլաքեան Յ.**, Պատմական Անտիոքի եւ շրջակայից բնիկ հայերն ու միւս հաւաքականութիւնները, Երևան, 2023, էջ 292:
10 **Սաֆրաստյան Ա.**, Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարքարանի կողմից Թուրքիայի Արդարադատության և Դավանանքների մինիստրության ներկայացված հայկական եկեղեցիների և վանքերի ցուցակներն ու թաքրիրները, «Էջմիածին», 1966, Թ-Ժ, էջ 112:
11 **زيدون الزعبي، عبد العزيز الحلاج، صهيب الزعبي، جاد الحلاج**، تطورخريطة التقسيمات الادارية في سورية: مئة عام من العلاقة الاشكالية بين المركز و المحليات، ٢٠٢٢، ص. ١٣-١٧.
Տե՛ս նաև **Չպուքճեան Պ.**, Ալաուիթ պետութիւն, «Սիւրիահայ տարեգիրք», Ա տարի, 1929, էջ 128, 140:
12 Լաղաքիոյ հայաբնակ գիւղօրէից..., էջ 97: Հմմտ. **Թոփուզյան Հ.**, Սիրիայի և Լիբանանի հայկական գաղթօջախների պատմություն (1841-1946), Երևան, 1986, էջ 50:
13 **Թղթակից Բերիոյ**, նշվ. հոդվ., էջ 1203:
14 **Էփրիկեան Ս.**, նշվ. աշխ., էջ 288:

ԱՐԱՄՈՆ. բնակելի տներ (լուս.՝ Ա. Հախնազարյանի, 1991 թ. և հոդվածագրի, 2011 թ.)

1906 թ.՝ 60[15], 1907 թ.՝ 70 տուն[16], իսկ 1911 թ.՝ 62 տուն՝ 353 բնակիչ[17]:

Հարյուրամյակներ շարունակ տարբեր փորձությունների դիմակայած գյուղի բնակչությունն անդառնալի կորուստներ է կրում ինչպես Մեծ եղեռնի, այնպես էլ 1919 թ. արաբական ապստամբության ժամանակ: Արամոն դատարկվում է, իսկ բնակիչները մինչև Ֆրանսիայի կողմից ապստամբության ճնշումն ապաստան են գտնում հարևան արաբ ընտանիքների մոտ: Նրանցից միայն մի մասն է վերադառնում գյուղ[18]:

1931 թ. ուներ ընդամենը 24 տուն՝ 125 հայ բնակիչ[19]:

1946-1947 թթ. հայրենադարձության ալիքը ևս մեծ վնաս է հասցնում Արամոյի դարավոր հայոց կյանքին: Դրա հետևանքով մեծապես նվազում է հայ բնակչության թիվը[20]. գյուղից և Լաթաքիայից 120 հոգի ներգաղթում է Սովետական Հայաստան[21]:

1958 թ. գյուղն ուներ 22 հայ տուն[22], 1970-ական թթ.՝ 100 հայ բնակիչ[23]:

2011 թ.՝ մեր այցելության ժամանակ, մշտապես բնակվում էին 5 տուն (16 շունչ) հայեր[24] (ևս 7 տուն՝ որպես ամառանոց) և 60 տուն ալևիներ:

2023 թ. գյուղի մնայուն բնակիչներն արդեն ալևիներն էին. «Լաթաքիա բնակող ու Արամոյի մէջ տուն ու պարտէզ ունեցողները [հայերը] հոս կ'ելլեն ամռան եւ արձակուրդի օրերուն...»[25]:

Տնտեսություն. 1864 թ. Լաթաքիայի եկեղեցու տեսուչ Զաքարիա վարդապետը գյուղաբնակների կենցաղային և տնտեսական ծանր պայմանների մասին գրում է. «...երբ այցելութեան ելայ Արամայ գիւղի հայազգի ժողովրդոց, թերեւս առաջին անգամ տեսած ըլլալուս է, սիրտս ի խոր խոցեցաւ, երբ տեսայ զիրենք լեռներու գլուխները, ամենախեղճ խրճիթներու ու ծերպերու մէջ պատսպարուած յետին աղքատութեամբ, որոնց ապրած կեանքը ոչ իրենց և ոչ իրենց ընտանեաց համար է, այլ զիրենք հարստահարող նըսէրի Մուգատտիմին[26]՝ որ երկ-

15 **Թղթակից Բերիոյ**, նշվ. հոդվ., էջ 1203:

16 **Այծեամն**, նշվ. հոդվ., էջ 27:

17 **Տունկեան Գ.**, Նիւթեր Լաթաքիոյ եւ շրջակայքի հայ ազգաբնակչութեան պատմութեան, Հալէպ, 1983, էջ 10: Հմմտ. նշվ. աշխ., էջ 33: Մովսես վարդապետ Ոսկերիչյանի կազմած 1911 թ. մարդահամարում գյուղի ազգատոհմերից հիշվում են՝ Ազրաքյան, Ասատուրյան, Աստուածատուրյան, Գազանճյան, Գասսիս, Գարուն (Գարունյան), Խելիլ (Խելիլյան), Խիչա (Խիչայան), Հակոբյան, Հայտար, Հանեսյան (Հաննեսյան), Հապիպյան, Հավաթ, Հատտեսյան (Հատտատ, Հըտտեսյան), Ճապուրյան, Մգտըսի (Մըգտիսի, Մըգտըսի), Յագուպյան, Նաամե, Նաումյան, Շավիթո, Սեֆերյան, Սողոմոնյան, Վանեսյան, Տերուս, Տիպե, Ֆարահյան (Ֆերահյան) (**Չոլաքեան Յ.**, նշվ. աշխ., էջ 333-336):

18 **Չոլաքեան Յ.**, Արամո գիւղի մօտիկ հայոց վանքը՝ Ս. Աստուածածին ու Ս. Գէորգ եկեղեցիներով, «Բանբեր Երևանի համալսարանի. հայագիտություն», 2021, № 2, էջ 34: **Նույնի՝** նշվ. աշխ., էջ 283:

19 **Միհասեան Մ.**, Եփրեմ եպիսկոպոս Տոհմունիի անտիպ տեղեկագիրը Լաթաքիոյ, Քեսապի ու շրջակայքի հայութեան իրավիճակին մասին (1931 թ.), «Բանբեր Հայաստանի արխիվների», 2018, № 126, էջ 194: Բնակչության նվազման հետ մեկտեղ գյուղի տվյալները հիմնականում ներկայացվել են հայաբնակ Ղնեմիե գյուղի հետ միասին. այսպես՝ երկու գյուղերը 1929 թ. ունեին *400* (**Չպուքճեան Պ.**, նշվ. հոդվ., էջ 140), 1940 թ.՝ *282* (Վիճակագրական տախտակներ 1940 տարւոյ, «Հասկ», 1941, № 3-4, էջ 55), իսկ 1943 թ.՝ *200* զուտ հայ բնակիչ (Բնակչութիւն Կիլիկիոյ թեմին, «Հասկ», 1944, № 5-7, էջ 100):

20 **Չոլաքեան Յ.**, նշվ. աշխ., էջ 199: 2011 թ. գյուղաբնակ Արիստակես Անդրիասյանը մեզ հայտնեց, որ 1947 թ. գյուղից Հայաստան է տեղափոխվել 24 ընտանիք:

21 Նշվ. աշխ., էջ 285: Հայտնի է, որ հայրենադարձների մեծ մասը բնակություն է հաստատում Նոր Արեշում (**Ղարիբյան Ա.**, Հայերեն նորահայտ բարբառների մի նոր խումբ, Երևան, 1958, էջ 9):

22 «Հասկ», 1958, № 8-9, էջ 361:

23 **Սասատէ Կ.**, Հայերու ներկայութիւնը Սուրիական ծովափին վրայ, «Գեղարդ սուրիահայ տարեգիրք», Հալէպ, Բ գիրք, 1976-1978, էջ 272:

24 Գյուղում բնակվող հայերի ազգանուններն են՝ Դարրուս (Տերուս, Անդրիասյան), Ղազընջի (Գազանճյան), Շաուիթո (Շավիթո) և Ֆարահ (Ֆարահյան, Ֆերահյան): Գյուղից հեռացել են Ազրաք (Ազրաքյան), Իսկենդեր, Հայտար, Հուար և Քասիս (Գասսիս) տոհմերը:

25 **Չոլաքեան Յ.**, նշվ. աշխ., էջ 286:

26 «Նըսէրի Մուգատտէմ սոյն անունամբ նշանակեալ գերդաստանի անուն է, անկրօն և առանց աղեաց մարդիկներ, որոնք գիւղացի հայոց վերայ քիչ քիչ ազդեցութիւնին մեծցնելով, սկսած են բռնանալ, և անոնց ձեռքը գտնուած բոլոր հայրենա-

րին տէրն է, զոր իրենք պարոն կ՚անուանեն: Ասոնց քաշած նեղուեց ականատես եղայ, ոչ ամառը դադարում ունին և ոչ ձմեռը, ոչ գիշեր և ոչ ցերեկ գիտեն»[27]:

Դրանցից բացի՝ «Տեղական իշխանութիւնն ալ կարեպէս ծանրացած է խեղճերուն վերայ, որու ձիաւորները թէ՛ պատճառաւ և թէ՛ առանց պատճառի երբէք պակսած չեն ասոնց բնակարաններէն, թէ՛ իրենք կը կերակրին և թէ՛ իրենց ձիանքը: Շաբաթն երկու երեք անգամ... տուրքերը պահանջելով իրենցմէ: Տասանորդական տուրքը, որ ըստ կանոնի և օրինաց տէրութեան 10 առ 0/0 է, իրենք չորսէն մէկ կ՚առնուն, իսկ թիւթիւնէն՝ 10000 կապ կ՚առնուն»[28]:

1906 թ. Արամոյի «Ժողովուրդն արհեստագործ է: Երկիրը հասութաբեր է, արմտիք, ծխախոտ, մետաքս, մեղր, ձէթ եւ ամեն տեսակ միրգեր»[29]:

Կրոնական կացությունը. հայտնի է, որ 1850-ական թվականների կեսերին, կորցնելով վերջին քահանային, գյուղը «...հոգեւոր եւ թեմական իմաստով բոլորովին անմխիթար վիճակի կը մատնուի»[30]: Այդ մասին է վկայում նաև 1864 թ. Լաթաքիայի եկեղեցու տեսուչ տեր Զաքարիա վարդապետը. «Եօթ ուր տարիէ ի վեր, ոչ եթէ առաջնորդի՝ այլ և ոչ կարգաւորի երես տեսած են, իրենց նորածին զաւակները ամիսներով և տարիներով առանց մկրտութեան մնացած են, իրենք անհաղորդ՝ ու ննջեցեալներին առանց օրհնութեան թաղման: Ազգութեան նշան եղող իրենց մայրենի լեզուին տեղ աղճատեալ արաբերէն խօսելով, լուսաւորչական եկեղեցւոյ հոգեւոր մխիթարութիւններէն այսպէս զուրկ մնալին ցաւօք սրտի կը յայտնեն մեզ...»[31]:

Իրավիճակը որոշ չափով կարգավորվում է, երբ 1860-ական թթ. առաջին կեսին լաթաքիացի Աստվածատուր էֆենդու «...ստիպելովը հոգեւոր այցելութիւններ կ՚ընէ սոյն գիւղօրէից մէջ դասապացի (Զմիւռնիա) Աթանաս վարդապետը, որոյ վարած պաշտօնը թէպէտ և ոչ ըստ փափաքանաց է, այլ մեծ նշանակութիւն ունի տեղւոյն վիճակին նկատմամբ»[32]:

Ի դարի սկզբին՝ 1906 թ., նշվել է, որ «...գիւղին գանգատը՝ ինչպէս բոլոր գիւղերունն ալ, կրօնական մխիթարութենէ զուրկ ըլլալնին է»[33]: Այնուհանդերձ, նույն թվականին վկայվել է, որ «Ժողովուրդն ընդհանուր առմամբ բարեպաշտ եւ եկեղեցասէր է: Երբէք տեղի չեն տուած օտարադաւան մարդորսներուն: Զիրար կը սիրեն եւ 50 տարիէ ի վեր դատ մը չեն ունեցած»[34]:

1929 թ. մշտական հոգևորական չունենալու հետևանքով գյուղի բնակիչները հանգուցյալներին ամփոփում էին առանց քահանայի[35]: Նույն թվականին «...Լաթաքիոյ հոգետան տեսուչ եւ շրջանի կաթողիկոսական փոխանորդ Եփրեմ ծ. վրդ. Տոհմունի կը լսէ գիւղացիներուն խնդրանքն...: 1929-էն ետք գիւղի հոգեւոր պէտքերը կը հոգայ Ղնեմիէ գիւղի քահանան՝ պարբերական այցելութիւններով»[36]:

2011 թ.՝ մեր այցելության ժամանակ, գյուղը մշտական քահանա չուներ:

Ծխական դպրոց. հիմնադրման ստույգ տարեթիվը հայտնի չէ: Առաջին անգամ հիշվում է 1906 թ. որպես մեկ վարժապետով մանչերու դպրոց[37]: Ամենայն հավանականությամբ, կրթօջախը երկար չի գործել[38] և փակվել է մինչև Մեծ եղեռնը:

Մեսրոպյան վարժարան. հիմնադրվել է 1929 թ. հիմնականում արաբախոս[39] գյուղաբնակների շրջանում գրական հայերենի իմացությունը բարձրացնելու նպատակով. «Տարագրութենէն վերադարձին... ստիպուած են իրենց զաւակները ղրկել գիւղէն 45 վայրկեան հեռու Ղընճպիյէ անուն մահմե-

կան կալուածքները և անշարժ սեփականութիւնները խլելով տիրած են, որոնց մէջ դարձեալ զիրենք բանեցնելով՝ բոլոր վաստակնին վարուցաննին մինչեւ անգամ գրեթէ բերանուն պատառը խլելով կը յափշտակեն» (Լադաքիոյ հայաբնակ գիւղօրէից..., էջ 100):

27 Լադաքիոյ հայաբնակ գիւղօրէից..., էջ 100: 1860-ական թթ. սկզբներից «Մուգատտիմներուն տրուելիք վարուցաններէն եղած արդեանց իրաւունքը, ...հիմակ քանի մի հիւպատոսաց կը տրուի: Վասն զի Մուգատտիմը բաւական ժամանակ կայ պարտական լինելով, Արամայ գիւղին (հանդերձ արտերովը) չորս մասին մէկը Գաղղիոյ հիւպատոսին անցած է 20.000 դահեկանի տեղ: Անցեալ տարի դարձեալ (1865 յունիս) Մուգատտիմը պարտքի համար բանտարկուելով, մնացեալ գիւղին երկու մասն ալ, որ 33.000 դահեկանի տեղ գրաւ դրուած էր, կ՚անցնի Լադաքիոյ ռուսաց հիւպատոս Մարգօ Իլիասին, իսկ միւս մէկ մասն ալ արդէն Ալի Հասան ըսուած տաճիկ Մուգատտիմին իշխանութեան տակն է: Ասոնք ամէնքն ալ, թէ՛ քրիստոնեայ և թէ՛ անքրիստոնեայ գիւղատէրերը ըստ առաջին սովորութեան խեղճ գեղացի հայոց ոսկորները կը ծծեն և բուրդին հետ մորթն ալ վիրաւորելով կը խուզեն» (Լադաքիոյ հայաբնակ գիւղօրէից..., էջ 101):

28 Նշվ. հոդվ., էջ 100:

29 **Թոքակից Բերիոյ**, նշվ. հոդվ., էջ 1203:

30 **Չոլաքեան Յ.**, նշվ. աշխ., էջ 287:

31 Լադաքիոյ հայաբնակ գիւղօրէից..., էջ 101:

32 Նշվ. հոդվ., էջ 102:

33 **Թոքակից Բերիոյ**, նշվ. հոդվ., էջ 1203:

34 Նույն տեղում: Նշվածին մասամբ հակասող տեղեկություն է փոխանցում Սուքիաս Էփրիկյանը, ըստ որի՝ «Բողոքականութիւնը հոս մուտ գտած է և հայ տղայք բողոքականաց վարժարանը կ՚երթան» (**Էփրիկեան Ս.**, նշվ. աշխ., էջ 288):

35 **Չպուքճեան Պ.**, նշվ. հոդվ., էջ 128, 140:

36 **Չոլաքեան Յ.**, նշվ. աշխ., էջ 284: Նկատի ունենալով, որ «...գիւղացիք առանձին քահանայ պահելու վիճակի մէջ չըլլալով, ամիսը երկու անգամ Ղընէմիյէի քահանան կ՚այցելէ իրենց ու կը պատարագէ...» (**Սինասեան Մ.**, նշվ. հոդվ., էջ 196): Այլ տեղեկությամբ՝ Սբ. Ստեփանոս եկեղեցում պաշտոնավարում էր Լաթաքիայից հյուր եկած մի քահանա, որը նաև մկրտության և պսակադրության արարողություն էր կատարում (**Չպուքճեան Պ.**, նշվ. հոդվ., էջ 140):

37 **Թոքակից Բերիոյ**, նշվ. հոդվ., էջ 1203:

38 **Սինասեան Մ.**, նշվ. հոդվ., էջ 197: Նկատի ունենալով այն, որ Մեծ եղեռնի նախօրեին զուտ հայաբնակ գյուղն արաբախոս էր (**Տունկեան Գ.**, նշվ. աշխ., էջ 33) կամ բարբառախոս. «Լեզուին ղընէմացւոց պէս արաբերէն է, եւ արաբախառն հայերէն մը կը խօսին՝ զոր իրենք միայն կը հասկնան» (**Թոքակից Բերիոյ**, նշվ. հոդվ., էջ 1203), կարծում ենք՝ գրական հայերենին անծանոթ լինելը դպրոցի՝ երկար տարիների բացակայության արդյունք է:

39 **Չպուքճեան Պ.**, նշվ. հոդվ., էջ 128, 140:

Սբ. Ստեփանոս եկեղեցին հարավ-արևմուտքից և արևելքից (լուս.՝ Ա. Հախնազարյանի, 1991 թ.)

տական գիւղին մէջ բացուած պետական վարժարանը: 1929-ին, ...յաջողեցանք պետական արտօնագիրով եւ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան կողմէ յատկացուած 25 անգլիական ոսկի կրթական նպաստով բանալ վարժարան մը եկեղեցւոյ շէնքին մէջ, Մեսրոպեան անունով, 35 երկսեռ փոքրիկներու համար, որոնցմէ 5-6 հատը՝ ալաուիթ երախաներ»[40]:

Ընդամենը մի քանի տարի հետո տեսանելի են դառնում դպրոցի ուսուցման արդյունքները. «1932-ի ամռան Բաբգէն Ա. Աթոռակից կաթողիկոս... կ'այցելէ նաեւ Արամո եւ Ղնեմիէ գիւղերը ու հրճուանքով ականատես կ'ըլլայ, թէ ինչպէս մանուկները հայերէն սորվել սկսեր էին նորաբաց դպրոցներուն մէջ»[41]:

Կրթօջախի հետագա գործունեությանը վերաբերող տեղեկություններ մեզ հայտնի չեն: Այնուամենայնիվ, այն գործում է մինչև 1949 թ. և փակվում[42] աշակերտության անբավարար թվաքանակի պատճառով[43]:

1958 թ. գյուղն ազգային դպրոց չուներ, և մանուկները հաճախում էին պետական վարժարան[44]: Նույն թվականին ամառային վարժարան է սկսում գործել Բերիո թեմի ազգային առաջնորդարանի ջանքերով[45]:

1996 թ. կրթօջախի շենքը վերածվում է առաջնորդական ընդունարանի[46]:

Սբ. Ստեփանոս եկեղեցի. գտնվում է գյուղի հյուսիսարևելյան եզրին (35.630679, 36.135578): Այն կից էր աղբյուրի հրապարակին[47], արևելքից և հարավից՝ գյուղական ճանապարհին, իսկ հյուսիսից և արևմուտքից՝ պարսպապատ շրջաբակին:

Եկեղեցին առաջին անգամ վկայվել է 1864 թ. որպես ավերակ, սակայն գործող կառույց. «Սոյն Արամայ գիւղին մէջ սուրբ Ստեփաննոսի անուամբ եկեղեցի մի կայ, մանաւանդ թէ աւերակ մը, բայց կ'երեւի թէ ի սկզբան հոյակապ շէնք մը եղած է, որուն կը վկայեն ահագին սիւներուն, խարիսխներուն և վարպետաշէն խոյակներուն մնացորդները, որոնք խառն ի խուռն կ'երեւին եկեղեցւոյն պատին մէջ անյարմարապէս հիւսուած և պատերուն վերայ կը տեսնուին շատ մի խաչքարեր Կիլիկիոյ տէրութեան կանգուն եղած ժամանակ քանդակուած...: Հիմակ եկեղեցւոյն առաստաղը չոր ծառի ճիւղերով ծածկուած ու վերան հող տարածուած է, որոյ տակ մարդ չը կրնար երկար կենալ թափած հողերէն և կամ անձրեւէն: Իսկ արդի սեղանը հասարակ քարով հիւսուած ու սեւ կաւով ծեփած է: Եկեղեցւոյն դուրսը հիւսիսակողման պատին երեսը խաչքար մի կայ պառկած դրուած 12 թիզ երկայնութեամբ, իսկ թեւերուն երկայնութիւնը ծայրէ ի ծայր 5 թիզ, մէջտեղը բեւեռ գամուած է, որ իւր հնութեանը նշան է: Դուրսը գաւիթը ուրիշ խաչքար մի այլ կայ կիսով չափ հողին մէջ կանգուն թաղուած, որոյ նոյնպէս կենդրոնը գամուած բեւեռը կ'երեւի»[48]:

Եփրեմ եպիսկոպոս Տոհմունուն փոխանցված տեղական ավանդազրույցի համաձայն՝ եկեղեցին վերանորոգվել է «Երուսաղէմէն փախստական զէյթունցի Աթանաս անուն վարդապետի մը միջոցաւ»[49]: Վերջինս հավանաբար Երուսաղեմի միաբան զեյթունցի Աթանաս վարդապետ Ատուրյանն է, որը հիշվում է 1871 թ.[50]: Հետևաբար նորոգությունը կատարվել է ԺԹ դարի վերջերին:

40 **Մինասեան Մ.**, նշվ. հոդվ., էջ 197: Տե՛ս նաև **Չոլաքեան Յ.**, նշվ. աշխ., էջ 284: 1929 թ. ուներ 35 աշակերտ (27 տղա, 8 աղջիկ) և 2 ուսուցիչ (**Մինասեան Մ.**, նշվ. հոդվ., էջ 199):

41 **Չոլաքեան Յ.**, նշվ. աշխ., էջ 284:

42 Նշվ. աշխ., էջ 285: Հայտնի է նաև, որ որոշ ժամանակ գործել է որպես միացյալ դպրոց Ղընեմիե և Արամո գյուղերի համար: Այդպես է հիշվում, օրինակ, 1940 թ. («Հասկ», 1941, № 5-6, էջ 80):

43 **Չոլաքեան Յ.**, Սուրիահայ դպրոցի պատմութիւն, հ. Բ, Երևան, 2021, էջ 161:

44 «Հասկ», 1958, № 8-9, էջ 361:

45 **Չոլաքեան Յ.**, նշվ. աշխ., հ. Բ, 2021, էջ 162:

46 **Չոլաքեան Յ.**, նշվ. աշխ., 2023, էջ 289:

47 Նշվ. աշխ., էջ 286: Չոլաքյանը տեղադրությունը սխալմամբ նշում է գյուղի արևմտյան մուտքին (նույն տեղում):

48 Լաղաքիոյ հայաբնակ գիւղօրէից..., էջ 98:

49 **Մինասեան Մ.**, նշվ. հոդվ., էջ 196:

50 **Մմբատ Քիւրատ**, Վեղարաւոր հերոսը կամ Բարթողիմէոս վ. Թաքաճեան, Կ. Պոլիս, 1909, էջ 6:



Սբ. Ստեփանոս եկեղեցին հարավ-արևմուտքից, արևելքից և հյուսիս-արևմուտքից (լուս.՝ հոդվածագրի, 2011 թ.)

Ավելի ուշ, որպես գործող կառույց, հիշվում է նաև 1906[51] և 1913[52] թվականներին:

1915-1920 թթ.՝ տեղահանության ընթացքում, եկեղեցին պղծվում և ավերվում է Արամո ներքափանցած շրջակա գյուղերի այլազգիների կողմից[53]:

1926 թ.[54] նորոգվում է ֆրանսիական իշխանությունների նյութական միջոցներով և վերստին նպատակին ծառայում[55]:

Տասնամյակներ անց դարձյալ նորոգության անհրաժեշտություն է առաջանում: 1958 թ. հուլիսին 6-ին Բերիո թեմի առաջնորդ Ղևոնդ արք. Չեպեյանը «...եկեղեցի հաւաքուած հաւատացեալներուն... թելադրեց, որպէսզի եկեղեցւոյ փլած տանիքը նորոգեն: Տիար Հապիպ Ֆարահ սիրայօժար կերպով յանձն առաւ իր անձնական ծախսով եկեղեցւոյ ամբողջական նորոգութիւնը կատարել: Շինարարական գործերու կարգադրութիւնը յանձնուեցաւ Լաթաքիոյ թաղականութեան ատենապետ տիար Յարութիւն Գույումճեանի, որ իր կարգին խոստացաւ նուիրել եկեղեցւոյ զանգակը»[56]: Նույն թվականի օգոստոսի 16-ին եկեղեցին օծվում է. «Նորոգուած էր եկեղեցին, շինուած էր Ս. Սեղանը իր յարակից մասերով և պատրաստ էր նաեւ զանգակը»[57]:

1996 թ. «...մասնակի բարեկոչոգութիւններ կատարուեցան եկեղեցւոյ շրջափակին մէջ...»[58]:

Սբ. Ստեփանոս եկեղեցին այժմ տեղաբնակ և լաթաքիաբնակ հայերի հոգածության ներքո է:

Ինչ վերաբերում է եկեղեցու ճարտարապետական նկարագրությանը, ապա այն 1981-1983 թթ. հայկական մշակույթի ուսումնասիրության և վավերագրման կենտրոնի հնագիտական առաքելության շրջանակներում ուսումնասիրել և մանրամասն ներկայացրել է իտալացի ճարտարապետ և արվեստաբան Ադրիանո Ալպագո-Նովելլոն. «Գիւղին մէջ կը գտնուի փոքրիկ եկեղեցի մը նուիրուած Սուրբ Ստեփաննոսի, սա մէկ տարածքով մեծ սրահ մըն է՝ բաժնուած երեք մասի, կոթաձեւ կամարներով, խորանը կոնաձեւ փորուած է հաստ պատին մէջ, արտաքնապէս ոչ ցցուն...: Եկեղեցիին արեւելումը կանոնական դիրքով է, մուտքը՝ արեւմուտքէն...: Եկեղեցւոյ վերանորոգման ատեն, ինչպէս տիպական երեւոյթ է հայկական աւանդութեան մէջ, կը տեսնուի թէ գործածուած են շարք մը որմնաքանդակներ եւ զարդաքանդակներ, որոնք, հակառակ իրենց կոշտ աշխատելաձեւին եւ գաւառային ճաշակին,

51 **Թղթակից Բերիոյ**, նշվ. հոդվ., էջ 1203:
52 **Մաֆրաստյան Ա.**, նշվ. հոդվ., էջ 112:
53 **Չպուքճեան Պ.**, նշվ. հոդվ., էջ 140:
54 Տե՛ս արձանագրությունը:
55 **Չպուքճեան Պ.**, նշվ. հոդվ., էջ 128, 140: Տե՛ս նաև **Սինասեան Մ.**, նշվ. հոդվ., էջ 196:
56 «Հասկ», 1958, № 8-9, էջ 361: Տե՛ս նաև **Ղեւոնդ արքեպիսկոպոս**, Արամոյի ուխտատեղիները, «Հասկ», 1959, № 8-9, էջ 61:
57 **Ղեւոնդ արքեպիսկոպոս**, նշվ. հոդվ., էջ 348:
58 **Չոլաքեան Յ.**, նշվ. աշխ., 2023, էջ 289:





Սբ. Ստեփանոս եկեղեցու ներքին տեսքը դեպի արևելք (լուս.՝ Ա. Հախնազարյանի, 1991 թ. և հոդվածագրի, 2011 թ.) և հատակագիծը (չափ.՝ Ա. Ալպագո-Նովելլոյի, 1980-ական թթ., արտատպ.՝ Ադրիանո Ալփակո Նովելլո, ՆՀվ. հոդվ., էջ 84 և հոդվածագրի, 2011 թ.)

բաւականաչափ հետաքրքրական են: Մասնաւոր յիշատակութեան արժանի է երկու մեթր երկայնքով մեծդի խաչքարը, որ այժմ կիսով թաղուած է հողին մէջ, հորիզոնական դիրքով, գործածուած իբրեւ հիմնաքար: Խաչքարը կազմուած է հսկայ զարդախաչէ մը, որ կարծես հանգչած է սիւնակի մը վրայ (ուր փորուած է պզտիկ խոռոչ մը՝ գուցէ կանթեղի կամ մոմի համար): Խաչին թեւերը ունին լուսնաձեւ վերջաւորութիւն, որով կը կոչուի Եղջերուական...: Կողմնակի տարածութիւնները լեցուն են բոլորաձեւ խաչերով եւ զարդերով նման անոնց՝ որոնք քանդակուած են շրջակայ գիւղերու տուներու (եւ եկեղեցիներու) գերաններուն, դռներուն եւ պատուհաններու շրջանակներուն վրայ, գիւղեր՝ որոնք կը գտնուին մօտակայ կրաբլուրին վրայ եւ այժմ կը կոչուին «մեռեալ քաղաքներ», որոնք հաւանաբար կառուցուած են Դ եւ Զ դարերուն միջեւ...: Մուտքի դրան երկու կողմերը հետագային զետեղուած են երեք փոքր խաչքարեր, քանդակուած գրեթէ քառակուսի սալերու վրայ, մինչ այդ անսովոր զարդաքանդակներով, անորոշ թուականի գործեր (սակայն անպայման վերոյիշեալ խաչքարերէն վերջ իրագործուած «զաւառային» աշխատանքներ), ուր՝ ոճային տարրերը նախնական են եւ ազդուած են տեղական ճաշակէ:

Ակներեւօրէն ժողովրդային գործեր են այն պարզ փորագրութիւնները, որոնք կատարուած են քարերու վրայ, հաւանաբար շրջակայքի ուխտաւորներուն կամ հաւատացեալներուն կողմէ, միշտ ուղղանկիւն քառակուսի մը (մինչ Կելդիքական խաչերուն կենդրոնը, օրինակ, կը գտնուի շրջանակ մը):

Եզրակացնելու համար ըսենք, որ եթէ որեւէ կարծիք այս մասին շատ կամայական պիտի ըլլայ, կրնանք սակայն յայտնել, թէ Սուրբ Ստեփաննոս եկեղեցիին համար գործածուած քարերը ամենահին վկայաբանութիւններէն մէկն են հայոց հնաւուրց ներկայութեան՝ Սուրիոյ մէջ, ինչքան որ ալ տարօրինակ թուի ատիկա, նկատելով այդ գիւղին համեստ վիճակը եւ տեղւոյն մեկուսի դիրքը: Գուցէ, սակայն, գործածուած քարակտորները բերուած են մօտակայ կառոյցէ մը, հաւանաբար վանատան մը շէնքէն»[59]:

Ավելացնելով վերոնշյալին՝ կարող ենք ասել, որ եկեղեցին (արտաքին չափերն են՝ 12 x 7,05 մ) ուղղանկյունաձև շրջագծով, միանավ և քարաշեն կառույց է (շարվածքն իրականացվել է միջին և փոքր չափերի սրբատաշ քարերով, իսկ անկյունային, մուտքի և լուսամուտների եզրային հատվածներում օգտագործվել են նաև մեծ չափերի սրբատաշ քարեր): Հարթ տանիքը (այժմ բետոնե) հենված է ար-

59 **Ադրիանո Ալփակո Նովելլո**, Հայկական ճարտարապետական կոթողները Սուրիոյ մէջ, «Շիրակ», 1989, № 8-9, էջ 84-85 (բնօրինակը՝ **Adriano Alpago Novello**, Monumenti Armeni in Siria, “Archeologia”, Aprile, 1987):



տաքին որմերին և հյուսիս-հարավ ուղղությամբ երկու կամարների վրա, որոնք սկիզբ են առնում հյուսիսային և հարավային զույգ որմնասյուներից: Արևելյան կողմում սրահից 3 աստիճան բարձր բեմով խորանն է, որն արևելյան կողմում ավարտվում է կիսաշրջան, իսկ հյուսիսային և հարավային կողմերում՝ ուղիղ եզրագծով: Խորանի արևելյան որմին առկա է 2, իսկ հարավային որմին՝ 1 խորշ: Եկեղեցու միակ մուտքը բացված է հյուսիսային ճակատից: Լուսավորությունն իրականացվում է հյուսիսային և հարավային որմերից բացված երեքական

Սբ. Ստեփանոս եկեղեցու որմերին առկա խաչքարերն ու խաչաքանդակները (լուս.՝ հոդվածագրի, 2011 թ.)

Սբ. Ստեփանոս եկեղեցու որմերին առկա խաչքարերը, խաչաքանդակները, այան խարիսխը և խոյակը (լուս.՝ հոդվածագրի, 2011 թ.)

(տասնամյակներ առաջ հարավային որմի արևմտյան և արևելյան լուսամուտները փակվել են քարե շարվածքով), ինչպես նաև արևելյան և արևմտյան որմերին առկա մեկական լուսամուտով:

Ըստ ճարտարապետական առանձնահատկությունների՝ այն թվագրում ենք ԺԸ դարով:

Եկեղեցու որմերին կան ավելի հին շինությունների (Դ-Զ դդ.) վերաօգտագործված խաչաքանդակներ և զարդաքանդակներ, ԺԶ-ԺԸ դդ. խաչքարեր և ԺԸ-Ի դդ. արձանագրություններ:

ա. Արձանագրություն. արտաքուստ եկեղեցու հյուսիսային որմի արևմտյան լուսամուտի ներքևի եզրաքարին՝ փորագիր, 6 տող.

Ս(ուր)ք խ(ա)չ(ս) | ... ՌՄԿԵ(՞) (1816): | Ս(ուր)ք խ(ա)չ(ս) | ՌՄԴ (1755): | Ս(ուր)ք խ(ա)չ(ս) | ՌՄԳ (1754):

Հրատ. *առաջին անգամ:*

բ. Արձանագրություն. մուտքի շրջանակին (այժմ՝ սվաղի շերտի տակ)՝ փորագիր, 4 տող.

Ս(ուր)ք խ(ա)չ(ս) | ՌՄԷ (1758): | [Ե]ս՝ Ք(րիստո)սի ծ(ա)ռ(ա) | տիրացու ...:

Հրատ. *առաջին անգամ:*



Արձանագրություն *ա* (լուս. և գրչ.՝ հոդվածագրի, 2011 և 2024 թթ.)

Արձանագրություն *բ* (լուս. և գրչ.՝ հոդվածագրի, 2011 և 2024 թթ.)

գ. Արձանագրություն. մուտքի ճակատակալից վեր ագուցված մարմարե սալիկին՝ փորագիր, 5 տող հայերեն և արաբերեն.

Հին թիւ | 1310: Հ(այո)ց սուրբ ե(կեղե)ցի, Ա(ռա)մս: | Ստեփաննոս: |

كنيسة القدّيس استيفانس | اعيد بناوها سنة ٩٢٦(١).

Թարգ. Սուրբ Ստեփանոս եկեղեցի, վերակառուցվեց 1926 թ.:



Արձանագրություն *գ* (լուս.՝ հոդվածագրի, 2011 թ.)

Հրատ. ***Չոլաքեան Յ.***, *նշվ. աշխ., 2023, էջ 288 (արաբերեն արձանագրությունը հրատարակվել է թարգմանաբար՝ հայերեն, բնօրինակին ոչ հարազատ):*

Ծանոթ. *կարծում ենք՝ 1310 թվականը շփոթության արդյունք է: Եթե այն վերծանում ենք հայոց թվականով, ապա ստացվում է 1861 թ., իսկ եթե հիջրի՝ 1892-1893 թթ.: Կառուցման 1310 թ. չի համապատասխանում շենքի ճարտարապետությանը, իսկ որմերին առկա ԺԸ դարի նվիրատվական արձանագրությունները բացառում են ԺԹ դարի թվականները:*

դ. Արձանագրություն. արևմտյան լուսամուտից վեր ագուցված մարմարե սալիկին՝ փորագիր, 6 տող հայերեն և նույն բովանդակությամբ արաբերեն.

Նորոգեցաւ եկեղեցիս հայոց | նուիրատուութեամբ | տիար Իլիաս Հապիպ Ֆարահի:| 1958, ١٩٥٨.|



Արձանագրություն *դ* (լուս.՝ հոդվածագրի, 2011 թ.)

تبرع لتجديد الكنيسة الارمنية | السيد الياس حبيب فرح .

Հրատ. ***Ղևոնդ արքեպիսկոպոս***, *նշվ. հոդվ., էջ 348:* ***Տէմիրճեան Վ.***, *նշվ. աշխ., էջ 371:* ***Չոլաքեան Յ.***, *նշվ. աշխ., 2021, էջ 157:* ***Նույնի՝*** *նշվ. աշխ., 2023, էջ 288: Ղևոնդ արքեպիսկոպոսը և Չոլաքյանը հրատարակել են միայն հայերենը:*

ե. Սրբապատկեր. «Տիրամայրը մանկան հետ», արձանագրությունը՝ ներկագիր, 5 տող.

Խնդրեցէք, եւ տացի ձեզ: | Նուէր Արամոյի հայոց եկեղեցւոյ, | տիրամայր Սաթենիկ Չէպէյեանէ: | Լեւոն Սապպաղեան, | 1/8/(19)59, Հալէպ:

Հրատ. *առաջին անգամ:*

Ծանոթ. *Ղևոնդ արք. Չեպեյանը «... 17 օգոստոսին պատարագած է Արամոյի Ս. Ստեփանոս եկեղեցւոյն մէջ և օծած՝ տիրամայր Սաթենիկ Չէպէեանի կողմէ նուիրուած նկարը՝ Ս. Աստուածածնայ» («Հասկ», 1958, № 8-9, էջ 362:* ***Տէմիրճեան Վ.***, *նշվ. աշխ., էջ 376-377):*

*Տիրամայր Սաթենիկ Չեպեյանը (Ատաբազար, 1883-Հալեպ, 1960 թթ.) Բերիո թեմի առաջնորդ Ղևոնդ արք. Չեպեյանի (1956-1967 թթ.) մայրն է: Առաջնորդը մոր հիշատակին նույն հեղինակի (Լևոն Սապպաղյան) մեկ այլ սրբապատկեր («Տիրամայրը մանկան հետ», նկարել է 5/5/1959 թ.) է նվիրել (14/02/1960 թ.) Հալեպի հայոց ծերանոցին: Տիրամայրը հայտնի է նաև նույն հաստատությանը կատարած այլ նվիրատվություններով: Հուղարկավորվել է Հալեպի Շեխ-Մագուդի հայ առաքելական գերեզմանատանը: 2007 թ. տեղի ազգային իշխանությունների անհոգության հետևանքով տապանաքարը տեղահանվել է (****Քորքոշյան Ռ.****, Հալեպի արձանագրությունները, Երևան, 2013, էջ 404-405, 587):*

Սրբապատկեր *ե* (լուս.՝ հոդվածագրի, 2011 թ.)

Արձանագրություն զ (լուս.՝ հոդվածագրի, 2011 թ.)

Սբ. Թորոս սրբատեղի-գերեզմանոց (լուս.՝ հոդվածագրի, 2011 թ.)

զ. Արձանագրություն. եկեղեցուց ոչ հեռու կառուցված սրահի մուտքին կից ագուցված մարմարե սալիկին՝ փորագիր, 6 տող հայերեն և արաբերեն.

Սրահ | Ս. Ստեփանոս եկեղեցւոյ, | կառուցուեցաւ նուիրատուութեամբ | Գ(ալուստ) Կիւլպէնկեան հիմնարկութեան, | Արամօ, 2002: | صالة كنيسة الارمن.

Թարգ. Հայոց եկեղեցու սրահ:

Սբ. Ստեփանոս եկեղեցուն կից գերեզմանոց. գոյացել է (35.630734, 36.135728) հավանաբար ԺԹ դարի վերջերին և նպատակին է ծառայել մինչև 1960-ական թթ.:

Ըստ Հակոբ Չոլաքյանի՝ տարածված էր Սբ. Ստեփանոս եկեղեցուն կից՝ հյուսիսարևելյան հատվածում՝ աղբյուրից ոչ հեռու[60]: 1960-ական թթ. «...գիւղի հրապարակը բարեզարդելու ատեն՝ գերեզմանատունը տեղափոխուած է Ս. Աստուածածին վանքի մօտիկ»[61]:

1980-ական թթ. սկզբներին Ադրիանո Ալպագո-Նովելլոն Սբ. Ստեփանոս եկեղեցու հյուսիսային կողմի փոքր բացատում նկատել է գերեզմանատան վերջին մնացորդները՝ մի քանի անընթեռնելի տապանաքարեր[62], ինչպես նաև շրջանակի մեջ հավասարաթև խաչ՝ «...խորանին դուրսի պատին մօտ, գերեզմանատան ցանկապատին մէկ հսկայ քարի մը վրայ...»[63]:

Արմեն Հախնազարյանի՝ 1991 թ. լուսանկարներից պարզվում է, որ մինչև վերոհիշյալ թվականը կատարվել է շրջապարսպի (եկեղեցուն կից է հյուսիսից և արևմուտքից) վերանորոգում (տե՛ս սույն հոդվածի էջ 5), որի ժամանակ էլ հավանաբար ծածկվել են հյուսիսային բացատի տապանաքարերը[64] և հին ցանկապատի խաչը: 2011 թ.՝ մեր այցելության ժամանակ, եկեղեցու հյուսիսային բակում տապանաքարեր գոյություն չունեին:

Սբ. Թորոս սրբատեղի-գերեզմանոց. ըստ տեր Զաքարիա վարդապետի վկայության՝ 1864 թ. գյուղի արևելյան կողմում՝ հովտաձև դաշտում, առկա էր գերեզմանատուն, «...և անոր ետեւի կողմը ցորեն ու գարի ծեծելու կալատեղ է: Քառորդ մի վեր՝ աւերակ մնացած ուխտատեղի մի կայ սուրբ Թորոս անուամբ»[65]:

Ճարտարապետական բեկորներ Սբ. Թորոս սրբատեղի-գերեզմանոցում (լուս.՝ հոդվածագրի, 2011 թ.)

60 **Չոլաքեան Յ.**, նշվ. աշխ., 2023, էջ 286, 303 և նշվ. հոդվ., էջ 41:
61 **Նույնի**՝ նշվ. աշխ., 2023, էջ 286 և նշվ. հոդվ., էջ 41:
62 **Ատրիանօ Ալփակօ Նովելլօ**, նշվ. հոդվ., էջ 85:
63 Նույն տեղում:
64 Ի տարբերություն մեր եզրակացության՝ Հակոբ Չոլաքյանը նշում է, որ բակի բարեկարգման աշխատանքները կատարվել են 1996 թ., որի ժամանակ էլ տապանաքարերը «...ծածկուած են հողի թանձր շերտով» (**Չոլաքեան Յ.**, նշվ. աշխ., 2023, էջ 291):
65 Լադաքիոյ հայաբնակ գիւղօրէից..., էջ 97:

2011 թ. գյուղաբնակ Արիստակես Անդրիասյանի ուղեկցությամբ այցելեցինք Սբ. Թորոս սրբատեղի (35.632367, 36.140103): Տեղում առկա էին ճարտարապետական բեկորներ և սալատապաններ: Ըստ մեր ուղեկցի՝ տասնամյակներ առաջ ալևիները տիրացել են սրբատեղիին, իսկ 2001 թ. սրբացված մի գերեզմանի վրա էլ կառուցել են զիարեթ (ալևիների սրբատեղի):

Սբ. Աստվածածին վանք. գտնվում է գյուղից 700 մ հյուսիս-արևմուտք (35.634321, 36.128748)՝ 161,000 քառ. մ մակերեսով անտառապատ օազիսի կենտրոնում: Բաղկացած է երկու՝ վիմափոր Սբ. Աստվածածին և քարաշեն Սբ. Գևորգ եկեղեցիներից[66], աղբյուրից[67] և օժանդակ այլ սենյակներից[68]:

Վանքն առաջին անգամ իր երկու եկեղեցիներով, որպես գործող կառույց, հիշվում է 1466 թ.: Ըստ Զաքարիա վարդապետի՝ շարունակաբար գործել է մինչև ԺԹ դարի սկզբները. «Սոյն երկու Հայոց եկեղեցիները տասն եւ հինգերորդ դարուն շէն եղած են, որոնք Մանգեանց կը կոչուէին, վասն զի արժանապատիւ Եփրեմ վարդապետը՝ որ Արիստակէս եպիսկոպոսի կողմէն Անտիոքայ առաջնորդ կարգուած էր, Քէսապ գիւղի մէջ հանդիպելով իրեն՝ հաղորդեց ինձ յիշատակարան մի, զոր հին Յայսմաւուրքի մի կողքէն օրինակած էր, և է այս. «Ի յաշխարհս Շամեայ, ի յերկիրս Սակունեանց, ի վանս սուրբ Աստուածածնի, ընդ հովանեաւ սրբոյն Գէորգեայ դէմ յանդիման գեղջն Յարամու, թվին ՉԺԵ: Թումա եպիսկոպոս և Սիմէօն քահանայ՝ Մանգեանց եկեղեցւոյ»: Սակայն ԺԵ դարէն ետքն այլ դարձեալ մինչեւ ներկայ դարուս սկիզբը շէն եղած պիտի ըլլան, վասն զի հարիւրամեայ ծերունի մի և ուրիշ պառաւ կանայք դեռ կը յիշեն և կը պատմեն նոյն վանքերուն վանահայր Գրիգոր վարդապետ մի, որու ժամանակ չափաւոր ստացուած ալ ունին եղեր յիշեալ վանքերը, արջառ, փեթակ, և շրջակայ արտորայք բոլոր իրենց էին, որոնց կը տիրեն հիմայ Մուգատտէմ ըսուած այն կողմերու գլխաւոր պէկին մարդիկը իրենց տիրոջմէն պարգեւ ընդունելով»[69]:

Վանքը 1912-1913 թթ. հիշվում է Կ. Պոլսի պատրիարքարանի ցանկում[70]:

Սբ. Աստվածածին վիմափոր եկեղեցի. չնայած որ ԺԹ դարի սկզբներից վանքը, մշտական վանահայր չունենալով, այլևս չի գործում, այնուամենայնիվ, եկեղեցին հատկապես Սբ. Աստվածածնի տոնին ուխտավորների պակաս չուներ: Այդ մասին 1907 թ. նշվել է. «Վերջինս ամէնէն նշանաւորն է, ուր Ս. Աստուածածին տօնին նոյն իսկ շրջակայ Նուսէյրի կոչուած արեւապաշտ ազգերէն ուխտի եկողներ կ'ըլլան ընծայաբերութեամբ»[71]: 1931 թ. Եփրեմ եպս. Տոհմունին գրում է. Սբ. Աստվածածինը «...ուխտատեղի է շրջակայ հայ գիւղացիներուն եւ ալաուիթներուն ալ: Տարին անգամ մը, ուխտաւորներու համար Ս. Պատարագ կը մատուցուի Ս. Աստուածածնայ վերափոխման տօնին օրը»[72]:

Արամոյի Սբ. Աստվածածնի Վերափոխման տոնի ուխտագնացությունն այլև չեն կազմակերպում՝ 1946-1947 թվականների հայրենադարձության ժամանակ հայ բնակչության թվի նոսրացման հետևանքով[73]: Չնայած դրան՝ 1959 թ. երբեմն այն կյանքի էր կոչվում. «Օգոստոս 16 Կիրակի, Ս. Աստուածածնայ վերափոխման տօնին... Արամոյի վիմափոր Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ պատարագեց Կիլիկիոյ միաբանութեան անդամներէն հոգր. տ. Թորգոմ աբեղայ Հանէշեան»[74]:

66 Որոշ հեղինակներ վիմափոր կառույց համարել են Սբ. Գևորգ եկեղեցին, իսկ քարաշենը՝ Սբ. Աստվածածինը: Նրանցից առաջինը տեր Արսենն է, որը 1906 թ. գրում է. «Գիւղին հիւսիսային կողմի լերան կողին վրայ վանք անուանեալ կիսայրէ բաղկացած եկեղեցի մը կայ *Ս. Գէորգ* անուն (Շատեր կը վկայեն, թէ երբ հոգեւոր պաշտօն կատարուի, եկեղեցիին հիւսիսային պատին վրայ ձիու մը վրայ հեծած Ս. Գէորգայ ստուերին շրջիլը տեսած են՝ որ կը տեւէ մինչեւ աբարողութեանց վերջանալը)» (**Թոքակից Բերիոյ**, նշվ. հոդվ., էջ 1203): Ըստ Հակոբ Չոլաքյանի՝ «Ալաուիները դեռ 19-րդ դարէն Արամոյի Ս. Աստուածածնայ եկեղեցւոյ ձախակողմեան խորանին մէջ տեղադրած են տարիի (խորհրդանշական տապան) ու ծածկած կանաչ լաթով: Խտրրի տարիին Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ տեղադրուած ըլլալուն պատճառով շփոթ ստեղծուած է ոմանց քով: Արաբ ազգագրագէտ Իպրահիմ Ումէյրին եւ իտալացի հնագէտ Ատրիանո Ալփակո Նովելլոն հայ աղբիւրներու կողմէ Ս. Աստուածածին կոչուող վիմափոր եկեղեցին կը կոչեն Ս. Գէորգ, իսկ քարուկիր եկեղեցին՝ Ս. Աստուածածին» (**Չոլաքեան Յ.**, նշվ. աշխ., 2023, էջ 294: Տե՛ս նաև **նույնի՝** նշվ. հոդվ., էջ 35): Հատկանշական է, որ 1864 թ. տեր Զաքարիա վարդապետը վիմափոր Սբ. Աստվածածին եկեղեցում ալևիների գերեզմանի գոյության մասին չի հիշատակում, սակայն նշում է, որ տեղացիները Խտրը են անվանում քարաշեն Սբ. Գևորգ եկեղեցին (Լադաքիոյ հայաբնակ գիւղօրէից..., էջ 98): Հայտնի է նաև, որ սկսած 1907 թ.-ից՝ վիմափոր Սբ. Աստվածածին եկեղեցին նշվում է որպես ալևիների ուխտատեղի (**Այծեամն**, նշվ. հոդվ., էջ 27: Տե՛ս նաև **Սինասեան Մ.**, նշվ. հոդվ., էջ 196): Հետևաբար կարծում ենք, որ խորհրդանշական գերեզմանը Սբ. Աստվածածին եկեղեցու ներսում տեղադրվել է ԺԹ դարի վերջին կամ Ի դարի սկզբին:

67 **Չոլաքեան Յ.**, նշվ. աշխ., 2023, էջ 303:

68 Հայտնի է, որ 1864 թ. Ռուսաստանի հյուպատոսն ամառանոց է կառուցում «...դաբնեաց անտառին մէջ սուրբ Աստուածածին վանքին կից..., ուր տեղ շինուած էր առաջ վանքին սենեակները: Սոյն ազգային սեփականութեան մի յափշտակուելուն վերայ Սրսոյ միաբան արժ. Եփրեմ վարդապետին սիրտն ալ վշտանալով, բարկացած էր գիւղացւոց (1865, սեպ. 12) թէ, ինչո՞ւ համար թողուցած են ազգային վանքի մի հողոյն վերայ օտարազգի պարոնին շէնք շինել տալու. և անձամբ ալ արգիլելու համար ձեռք զարկած էր: Բայց գիւղացիք անոր ոտքերը ինկնելով իմացուցած են՝ որ եթէ ազգային այդ պզտի իրաւունքը զոհուելու չըլլայ, խեղճ գիւղացիքը, որ արդէն գերի են պարոն հիւպատոսին, յետ այնորիկ թշուառութեան եւ տառապանաց ծանր շղթաներու տակ կաշկանդուելու պիտի դատապարտին: Վերջապէս Եփրեմ վարդապետը համոզուելով անոնց՝ ձեռնթափ եղած էր իւր ազգասիրական դիտաւորութենէն» (Լադաքիոյ հայաբնակ գիւղօրէից..., էջ 101):

69 Լադաքիոյ հայաբնակ գիւղօրէից..., էջ 98-99:

70 **Սաֆրաստյան Ա.**, նշվ. հոդվ., էջ 112:

71 **Այծեամն**, նշվ. հոդվ., էջ 27:

72 **Սինասեան Մ.**, նշվ. հոդվ., էջ 196:

73 **Չոլաքեան Յ.**, նշվ. աշխ., 2023, էջ 199:

74 «Հասկ», 1959, № 8-9, էջ 375:

Սբ. Աստվածածին եկեղեցին հարավից (լուս.՝ Ա. Հախնազարյանի, 1991 թ.)

Ըստ Հակոբ Չոլաքյանի՝ Ի դարի վերջերին «...եկեղեցին ամբողջապէս կը մնայ իսլամ հաւատացեալներու հովանաւորութեան տակ: Մայր խորանի խաչքարը սիմենթով կը պատուի ու կը ծածկուի կանաչ լաթով...: Օգոստոս 1994-ին, ...Լաթաքիոյ նահանգապետի հրամանով ...խաչքարի վրայի սիմենթը հանուեցաւ եւ հայկական խաչքարը երեւան ելաւ, ինչպէս նաեւ այդ վայրը արձանագրուեցաւ հայապատկան տարածք՝ Բերիոյ թեմի անունով»[75]: Այս տեղեկությունը, սակայն, մասամբ ստույգ չէ, քանի որ 1980-ական թթ. սկզբներին Ադրիանո Ալպագո-Նովելլոն տեսել է խորանի խաչքարը[76], իսկ 1991 թ. Արմեն Հախնազարյանի լուսանկարներում սեղանի խաչքարը ցեմենտով պատված չէր:

Այս ամենով հանդերձ՝ «...վանքի վիմափոր եկեղեցին մինչեւ այսօր ալ կունենայ մեծ թիւով ուխտաւորներ: Ձախակողմեան խորանը կանաչով ծածկուած տարիին է, նաեւ իսլամական սուրբ գիրքեր եւ իրեր: Հայոց կը մնայ գլխաւոր խորանը, ուր զետեղուած են մեծ խաչքարը, հայերէն եկեղեցական գիրքեր եւ սրբանկարներ: Ընդհանուր ուխտավայր է տեղի հայոց եւ ալաուիներուն»[77]:

Եկեղեցու ճարտարապետական մանրամասնեի նկարագրության առաջին հեղինակը տեր Զաքարիա վարդապետն է: 1864 թ. նա նշել է, որ կառույցն ունեցել է երեք խորան, «...որ յետոյ մեծ շարժ մի պատահելով աջակողմեան խորանին մէջտեղէն առաստաղովը դէպ ի աւագ խորանին առջեւ փլուած է»[78]:

Սբ. Աստվածածին եկեղեցու խորանի սեղանի խաչքարը 1991 թ. առանց ցեմենտի (լուս.՝ Ա. Հախնազարյանի)

75 **Չոլաքեան Յ.**, նշվ. հոդվ., էջ 37 և նշվ. աշխ., 2023, էջ 295-296:

76 **Ատրիանօ Ալփակօ Նովելլօ**, նշվ. հոդվ., էջ 85:

77 **Չոլաքեան Յ.**, նշվ. աշխ., 2023, էջ 298:

78 Լաղաքիոյ հայաբնակ գիւղերէից..., էջ 98: Կարծում ենք, որ այս տեղեկությունը հավաստի չէ: Վարդապետը հյուսիսային

Մբ. Աստվածածին եկեղեցին հարավ-արևմուտքից, հարավ-արևելքից և արևելյան ճակատի հարավային քարաշեն հատվածը (լուս.՝ հոդվածագրի, 2011 թ.)

1980-ական թթ. սկզբներին եկեղեցին ուսումնասիրել և նկարագրել է Ադրիանո Ալպագո-Նովելլոն. «...ճարտարապետական յատուկ շահեկանութիւն մը կը ներկայացնէ, շարք մը ժայռափոր կառոյցներ, որոնց համար գործածուած եւ բնական քարայրները, աւելի կամ պակաս կարեւոր յաւելումներով եւ կառուցումներով, առհասարակ արտաքին պատերով: Վանքին բնակելի մասերը այժմ բոլորովին փլած են, սակայն յստակօրէն ճանաչելի են զանազան բաժանումներով: Լաւ վիճակի մէջ պահուած կը մնայ եկեղեցին...: Յատակագիծը կը ներկայացնէ եկեղեցին՝ կազմուած մէկ սրահէ, որուն հիւսիսային պատը բնական ժայռ մըն է, խորանը բաժնուած է մկրտարանէն, միեւնոյն ժայռին մէջ փորուած մոյթով մը. մկրտարանը իր կարգին, միակտուր սրբատաշ քար մըն է, նոյնպէս փորուած ժայռի մէջ, որուն հարաւային մասը հիւսուած է հաստ պատուածքով: Մայր խորանը պարզ ժայռ մըն է, որուն վրայ դրուած է՝ անօրինակ չափերով, նեղ եւ շատ երկար խաչքար մը: Մկրտարանը բաժնող սիւնին կռթնած է երկրորդ խորան մը, ծածկուած գոյնզգոյն սփռոցներով (մեր այցելութեան ժամանակ խորանին վրայ կը գտնուէր «Քուրան» մը, սա ապահով ցոյց մըն է, որ եկեղեցին երբեմն կը ծառայէր թէ՛ քրիստոնէական եւ թէ՛ մահմետական աղօթավայր): Իրականին մէջ, կառոյցը Դ դարու Ասորական եկեղեցիի մը մնացորդացն է, անծանօթ ծագումով, սակայն հնութեան յստակ նշաններով: Զուրկ է գեղարուեստական որեւէ գեղազարդական տարրէ, որ պիտի թելադրէր ճշգրիտ թուական մը»[79]:

2018 թ. եկեղեցի է այցելում Հակոբ Չոլաքյանը և գրում. «...նկատելի է միայն հարաւային կողմէն, ուր կը գտնուի մուտքը: Արեւմտեան եւ հարաւային կողմերը՝ մուտքի եւ աջակողմեան փլուզուած խորանին տեղ բարձրացած քարուկիր պատերուն մէջ ագուցուած են մեծ մասով հին կառոյցներու պատկանող խաչաքանդակ քարեր: Այսպէս՝ *ա.* Մուտքի բարաւորին վրայի շարքին մէջ տեղադրուած է եռանկիւնաձեւ քար մը, որուն վրայ կլոր պսակի մը մէջ փորագրուած է հաւասար եռանկիւն թեւավոր խաչ...: *բ.* Մուտքի աջ կողմի պատի շարուածքին մէջ կայ ելունդաւոր, ուղղանկիւն եւ հաւասար թեւավոր խաչաքանդակ...: *գ.* Շրջապատին մէջ կերեւին նաեւ պսակաձեւ քանդակներ, որոնց մէջ փորագրուած են հաւասար թեւերով խաչեր...: *դ.* Մուտքի բարաւորին վրայ կայ հաւասար թեւերով ու միագիծ փորուածքով այլ խաչաքանդակ մը....: Եկեղեցւոյ մէջ կանգուն են կեդրոնական եւ ձախակողմեան խորանները, գաւիթի յատակէն շուրջ կէս մեթր բարձրադիր պատին ետեւ: Անոնք բնական այրե-

խորան է համարել խորանից մկրտարան տանող վիմափոր միջանցքը, իսկ փլուզված հարավային (աջակողմյան) խորանի հետք մենք չենք տեսել:

79 **Ադրիանո Ալպագո Նովելլո**, նշվ. հոդվ., էջ 85:

Սբ. Աստվածածին եկեղեցու ներքին տեսքը դեպի արևելք (լուս.՝ հոդվածագրի, 2011 թ.)

րու մէջ են: Մայր խորանը սրբատաշ քարերով պատած կամար ունի, ձախին՝ մկրտարանը ժայռափոր է, միակ ժայռափոր հատուածը: Ձախակողմեան խորանին մէջ զետեղուած են կանաչ ծածկոցով ծածկուած տարիին, իսլամական գիրքեր: Մայր խորանի վերի կամարին վրայ կայ երկու խաչաքանդակ, աջ կողմինը հաւասար թեւերով ճառագայթաձեւ ծայրերով խաչաքանդակ է: Խորանին վրայ յետնաբար սեւ մելանով գրուած է արաբերէն Ալլահ՝ Աստուած բառը: Խորանին կեդրոնը փոքրիկ սեղանի վրայ կանգնած է խաչքարը...: Կանաչ լաթերով փաթաթուած խաչքարին առջեւ կերեւէին նաեւ քրիստոնէական սրբապատկերներ ու հայերէն Աստուածաշունչ: Խաչքարը նեղ ու երկար մարմարէ քար է, որուն վրայ կերեւին յայտնապէս հայկական երկու համաչափ խաչաքանդակներ»[80]:

Ամփոփելով 2011 թ. մեր ուսումնասիրությունը՝ կարող ենք նշել, որ համամիտ լինելով Ալպագո-Նովելլոյի հետ՝ կառույցի վիմափոր հատվածները (հյուսիսային, արևմտյան և արևելյան որմի հյուսիսային) թվագրում ենք Դ դարով, իսկ քարաշեն հատվածները (հարավային), ըստ կառուցողական առանձնահատկությունների, հիմնականում՝ ԺԳ-ԺԴ դդ.:

80 **Չոլաքեան Յ.**, նշվ. հոդվ., էջ 38-39 և նշվ. աշխ., 2023, էջ 299-300: Պետք է նշել, որ Չոլաքյանը սխալմամբ միակ ժայռափոր հատված է համարում եկեղեցու մկրտության ավազանի բաժինը, ինչպես նաև կրկնում է Զաքարիա վարդապետի կարծիքը՝ հյուսիսային (ձախակողմյան) խորան համարելով խորանից մկրտարան տանող վիմափոր միջանցքը:

Եկեղեցու հարավային որմի արևմտյան հատվածից մուտք ենք գործում սրահ, որը լուսավորվում է հարավային պատի երկու և խորանի մեկ լուսամուտներով: Սրահի արևմտյան և հյուսիսային որմերը վիմափոր են: Կենտրոնում առկա է քարաշեն

Սբ. Աստվածածին եկեղեցու խորանի սեղանի խաչքարը (լուս.՝ հոդվածագրի, 2011 թ.)

Սբ. Աստվածածին եկեղեցու ներքին տեսքը դեպի արևմուտք, հյուսիսարևելյան մասը և հատվածներ առաստաղից (լուս.՝ հոդվածագրի, 2011 թ.)

որմնապատում, որը վերևում արևելյան հատվածով միանում է ժայռին, իսկ արևմտյանով՝ արևմտյան վիմափոր թաղին հենված քարաշեն կիսակամարին: Առաստաղն անկանոն է՝ մասամբ վիմափոր, քարաշեն կամ բնական ժայռ: Սրահի հարավային կեսը ծածկված է արևելք-արևմուտք երկարող կիսագլանաձև քարաշեն թաղով, որը հյուսիսային կողմում (կենտրոնում) հենված է բնական ժայռին: Հյուսիսային կեսի արևմտյան հատվածը ծածկված է հյուսիս-արևելք–հարավ-արևմուտք ուղղությամբ կիսագլանաձև վիմափոր թաղով, իսկ հյուսիսարևելյան կեսը հիմնականում վիմափոր է:

Սրահի հյուսիսարևելյան անկյունում մկրտության վիմափոր խորշն է, որի արևելյան կողմից անցում է կատարվում վիմափոր միջանցք, իսկ վերջինիս հարավային կողմից՝ եկեղեցու միակ խորան: Մկրտության խորշում տեղադրված է Դ-Զ դդ. սյան



Սբ. Աստվածածին եկեղեցու մկրտության ավազանը և հատակագիծը (լուս. և չափ.՝ հոդվածագրի, 2011 թ.)

Սբ. Աստվածածին եկեղեցու որմերին առկա խաչքարերն ու խաչաքանդակները (լուս.՝ հոդվածագրի, 2011 թ.)

խոյակ, որի վրա միակտոր քարից կերտված մկրտության շարժական ավազանն է: Միջանցքի արևելյան որմին առկա է իրար կից երկու խորշ, իսկ արևմտյան որմը սրահից բաժանողի վիմափոր սյունն է, որին արևմուտքից կից տեղադրվել է խորհրդանշական գերեզմանը: Խորանը սրահից մոտ 30 սմ բարձր է, վիմափոր է միայն հյուսիսային հատվածը, որտեղ առկա է խորշ: Սուրբ սեղանը շեղված է դեպի հյուսիս, որի վրա կանգնեցվել է խաչքար: Վերջինիս ծավալները հուշում են, որ այն ի սկզբանե կերտվել է որպես սուրբ սեղանի պատվանդան: Այժմ սեղանն ամբողջությամբ պատված է կանաչ կտորով և մեզ հնարավոր չի եղել պարզել մեր ենթադրության իսկությունը: Եկեղեցու որմերին առկա են ԺԳ-ԺԸ դդ. խաչաքանդակներ և հայերեն մեկ արձանագրություն:



Խաչքար է (լուս. և գրչ.՝ հոդվածագրի, 2011 և 2024 թթ.)

է. Խաչքար. ագուցված է խորանի որմնակամարից վեր, արձանագրությունը՝ փորագիր, 1 տող.

Յ(իսու)ս Ք(րիստո)ս:

Հրատ. *առաջին անգամ:*

Սբ. Գևորգ քարաշեն եկեղեցի. գտնվում է Սբ. Աստվածածին եկեղեցու մոտ՝ «...նոյն բակին մէջ դէպի արեւելակողմը»[81]:

Կառուցման ստույգ թվականը հայտնի չէ: Ըստ ճարտարապետական առանձնահատկությունների՝ այն թվագրում ենք ԺԳ-ԺԴ դդ.[82]:

Թեպետև ԺԹ դարի սկզբներին վանքն արդեն չէր գործում, բայց և այնպես Սբ. Գևորգ եկեղեցին նույնպես կարևոր ուխտատեղի էր շրջակա գյուղերի հայ և ալևի բնակիչների համար: Զաքարիա վարդապետի փոխանցած տեղեկությունների համաձայն՝ 1864 թ. առկա էր եկեղեցու միակ սեղանը[83], իսկ «Շրջակայ գեղացիք երբ կ'ուզեն իրենց խօսքը հաւատարմացընել, հեռուանց սուրբ Գէորգի յիշեալ եկեղեցին ցուցնելով *վահիաղ ըլ-խըտր*[84] կը կանչեն:

81 Լադաքիոյ հայաբնակ գիւղօրէից..., էջ 98:

82 Ըստ Եփրեմ վարդապետ Տոհմունու տեղեկությունների՝ այն կառուցվել է Աթանաս վարդապետի կողմից (**Սինասեան Մ.**, նշվ. հոդվ., էջ 196): Սակայն եթե նա նկատի ունի ԺԹ դարում հիշվող զեյթունցի Աթանաս վարդապետին, ապա այն չի համապատասխանում իրականությանը:

83 Լադաքիոյ հայաբնակ գիւղօրէից..., էջ 98:

84 Արաբերեն՝ երդում. ասվում է խոսքի ճշմարտացիությունը հաստատելու համար (**Չոլաքեան Յ.**, նշվ. հոդվ., էջ 30) և բառացի նշանակում է «Խըտրի կենաց», խոսակցական՝ «Խըտրի արև», իսկ բուն իմաստն է «Խըտրը վկա»:

Սբ. Գևորգ եկեղեցին արևմուտքից և հարավ-արևելքից (լուս.՝ Ա. Հախնազարյանի, 1991 թ. և հոդվածագրի, 2011 թ.)

Նմանապէս մեծ ու պզտիկ ամեն պարագայի մէջ իբր օգնութիւն իրենց *եա՛խտոր* կը պօռան»[85]:

Հայտնի չէ, թե եկեղեցին մինչև երբ է ծառայել որպես ուխտատեղի, սակայն համաձայն արևմտյան ճակատին առկա արձանագրության՝ վերանորոգվել է 1903 թ.: Ըստ 1906 թ. մի թղթակցության էլ՝ այն շարունակում էր ծառայել որպես ուխտատեղի[86]: Ինչևէ, կարծում ենք, որ Ի դարի առաջին կեսին արդեն վանքի հիմնական ուխտատեղին համարվում էր Սբ. Աստվածածին եկեղեցին, իսկ Սբ. Գևորգը հետզհետե անտեսվել է:

2011 թ.՝ մեր այցելության ժամանակ, լքված և կիսավեր էր: Դրանից հետո է՛լ ավելի է վնասվել: 2018 թ. Հակոբ Չոլաքյանը եկեղեցում նույնիսկ նկատել է գանձախուզության և ավերածության հետքեր. «Գանձագողները մեծ աւերածութիւններ կատարած են...: Խորանի եւ մկրտութեան աւազանը քանդած ու հոն մեծ փոս մը բացած են»[87]:

Ինչ վերաբերում է եկեղեցու ճարտարապետությանը, ապա 1980-ական թթ. սկզբներին այն այսպես է նկարագրել Ադրիանո Ալպագո-Նովելլոն. «Յատակագիծը կը բաղկանայ մէկ աղօթասրահէ, աջին ու ձախին պատուած են երկու զոյգ լայնանիստ կամարներ, որոնք կ'երկարին մինչեւ բեմ եւ կը մխրճուին պատին խորութեան մէջ, բեմին հիւսիսային կողմը կը բացուի մկրտարանը՝ փորուած պատին հաստութեան մէջ, եւ հարաւային կողմը՝ ուրիշ խորշ մը, որ գուցէ կը ծառայէ եկեղեցւոյ սպասները դնելու: Տանիքը, որ այժմ փլած է, հաւանաբար տափարակ եղած է, ինչպէս են ընդհանրապէս տանիքները հարաւային նահանգներու մէջ...: Դուրսը, հարաւային կողմի պատին վրայ, յիշատակութեան արժանի է քարի վրայ քանդակուած ժամացոյց մը, նոյնիսկ եթէ աշխատանքը շատ կոշտ է (հաւանաբար գործն է հովիւի մը եւ կամ ուխտաւորի մը), միջօրէական ժամացոյց՝ կոփուած քարի վրայ, յիշենք որ արեգակնային ժամացոյցը յատկանշական է հայոց մշակոյթին եւ յաճախ գործածուած տարր մըն է՝ ճարտարապետական զարդերու մէջ, մինչ բաւականին հազուագիւտ է ան «բիւզանդական» կոչուող տարածութեան մէջ»[88]:

2018 թ. ականատես Հակոբ Չոլաքյանը գրում է. Սբ. Գևորգը «...քառանկիւն շէնք է, 11,30 x 7,30 մ չափով: Պատի լայնքը 95 սմ է՝ երկու իրարու ագուցուած շարքերու հիւսուածքով: Պատերը կանգուն են, շարուածքը կատարուած է ուղիղ գիծով, կոշտ տաշուած քարերով, անկիւնաքարերը մեծ են...: Սրբատաշ քարերով պատուած է մուտքին ... արտաքին երեսը...: Միանաւ եկեղեցի է: ... Սրբատաշ քարերով կազմուած են խորանի, մկրտութեան

85 Լաղաքիոյ հայաբնակ գիւղօրէից..., էջ 98:
86 **Թղթակից Բերիոյ**, նշվ. հոդվ., էջ 1203:
87 **Չոլաքեան Յ.**, նշվ. հոդվ., էջ 39-40 և նշվ. աշխ., 2023, էջ 301:
88 **Ատրիանո Ալփակո Նովելլո**, նշվ. հոդվ., էջ 85-86:

Սբ. Գևորգ եկեղեցու ներքին տեսքը դեպի արևելք (լուս.՝ Ա. Հախնազարյանի, 1991 թ. և հոդվածագրի, 2011 թ.)

եւ հանդիպակաց նմանատիպ խորշերու կամարները...: Մենք ճիշդ չենք գտներ Ալփակո Նովելլոյի այն կարծիքը, որ տանիքը եղած է տափարակ...: Արեւելեան եւ արեւմտեան կողմերը մնացած հատուածներէն կարելի է հաստատապէս ըսել, որ տանիքը ունեցած է քարէ կամարակապ շարուածք, իսկ արտաքին պատերէն դուրս ելած սալքարէ ցուիքը տակաւին կայ տեղ-տեղ...: Եկեղեցին հարաւային պատին վրայ ունի նեղ պատուհան, խորանին վրայ կիսակլոր բարաւորով լուսամուտ մը ալ կայ, որ դէպի խորան կը նայի որոշակի թեքութեամբ մը: Ալփակո Նովելլոն եկեղեցւոյ հարաւային արտաքին պատին վրայ կը նկարագրէ միջօրէական ժամացոյց մը: Մենք նման բան չտեսանք: Պատը կանգուն է»[89]:

2011 թ. մեր ուսումնասիրությունների շնորհիվ կարող ենք ավելացնել, որ եկեղեցին (արտաքին չափերն են՝ 11,20 x 6,70 մ) ուղղանկյունաձև, միանավ և քարաշեն (շարվածքն իրականացված է միջին և փոքր չափերի կոպտատաշ քարերով, սրբատաշ են արևմտյան մուտքը, հյուսիսային և հարավային որմնակամարները և խորանի կամարը) կառույց է: Սրահը թաղածածկ է եղել (այժմ փլուզված է), որը հյուսիսում և հարավում հենված է եղել որմնասյուներից բարձրացող որմնակամարներին, արևելքում՝ խորանի որմնակամարին, իսկ արևմուտքում՝ արևմտյան որմին: Սրահն արևելյան կողմում ավարտվում է կիսաշրջան խորանով՝ ծածկված գմբեթարդով: Խորանի որմին առկա են զույգ խորշեր: Ամբողջ կառույցն ունեցել է հարթ տանիք, եզրային հատվածներում պահպանվել է ծածկասալերի մի մասը: 1991 թ. Արմեն Հախնազարյանի նկարներից երևում է, որ խորանը սրահից մոտ 80 սմ բարձր է եղել: 2011 թ. բեմի կենտրոնական հատվածը փլուզված էր, իսկ 2018 թ. Հակոբ Չոլաքյանի լուսանկարներում երևում է, որ այն ամբողջությամբ ավերվել է: Եկեղեցու հիմնական մուտքը բացված է արևմտյան ճակատից, իսկ հյուսիսային և հարավային ճակատներից բացված է ևս մեկական մուտք, որոնք այժմ փակված են: Լուսավորությունն իրականացվում է արևելյան որմի միակ լուսամուտով: Եկեղեցու որմերին առկա են ԺԴ-ԺԶ դդ. խաչաքանդակներ:

Ը. Արձանագրություն. եկեղեցու արևմտյան մուտքից վեր ագուցված մարմարե սալիկին՝ փորագիր, 2 տող.

[Նո]ր(ո)գ[եցաւ] | 1903:

Հրատ. **Ղեւոնդ արքեպիսկոպոս**, նշվ. հոդվ., էջ 348:

Արձանագրություն Ը (լուս.՝ հոդվածագրի, 2011 թ.)

89 **Չոլաքեան Յ.**, նշվ. հոդվ., էջ 39-40 և նշվ. աշխ., 2023, էջ 300-301: Հարկ է շեշտել, որ Չոլաքյանի այն նշումը, թե «Հիսիսային պատը կոթնած է ժայռերու» (նույն տեղում), չի համապատասխանում իրականությանը, քանի որ այն առնվազն մոտ 1 մ հեռու է ժայռերից:



Սբ. Գևորգ եկեղեցին հարավ-արևմուտքից, հարավից, արևելքից, ներքին տեսքը դեպի արևմուտք, որմերին՝ խաչաքանդակներ, մկրտության ավազանի հատվածը և հատակագիծը (լուս. և չափ.՝ հողվածագրի, 2011 թ.)

Ծակ քար. վիմափոր լուսամուտը գտնվում է Սբ. Աստվածածին եկեղեցու հարավարևմտյան եզրին՝ մուտքից ոչ հեռու՝ այժմյան եկեղեցուց դուրս: Արաբերեն կոչվում է «դագաթ ալ-շահուգ»: «Դագա»

Ծակ քար (լուս.՝ հոդվածագրի, 2011 թ.)

Աղբյուրի տեղահանված գուռը (լուս.՝ Ա. Հախնազարյանի, 1991 թ. և հոդվածագրի, 2011 թ.)

նշանակում է «...պատուհան, լուսամուտ, իսկ «շահուգ»-ը կապոյտ հազն է: Հայերը... երբ Աստուածածնայ վերափոխման տօնին հոս ուխտի կու գային, քահանային ձեռամբ նոր մկրտուած կամ հիւանդ մանուկները կը մտցնէին լայն կողմէն ու նեղ կողմէն դուրս կը հանէին: Իբրեւ թէ այս սուրբ լուսամուտը հիւանդութիւններ կը բուժէր»[90]:

Հավանական ենք համարում, որ մինչև հարավային որմի վերջին նորոգությունն այն ծառայել է որպես եկեղեցու լուսամուտ:

Վանքի աղբյուրը. գտնվում է վանքի դիմաց՝ փոքրիկ զառիթափի ստորոտում[91]: Այժմ ունի բետոնե ջրավազան: Միակտոր քարից կերտված գուռը 1991 թ. Արմեն Հախնազարյանը տեղահանված է տեսել: 2011 թ.՝ մեր այցելության ժամանակ, այն երեսնիվեր ընկած էր ճանապարհի եզրին, իսկ ըստ Հակոբ Չոլաքյանի՝ 2018 թ. «...բերանքսիվար գլորած է զառիթափին վրայ»[92]:

Սանդեր. Սբ. Գևորգ եկեղեցու մուտքի աջ կողմում գտնվում է միակտոր քարից կերտված ցոռենծեծի երկու սանդ: Առաջինի՝ «...վերի տիամեթրը 70 սմ, շրջագիծը՝ 234 սմ, բերանի երիզի լայնքը՝ 10 սմ, արտաքին հասակը 48 սմ, փորուածքի խորութիւնը ձագարաձեւ՝ 35 սմ: Երկրորդ սանդին... տիամեթրը՝ 108, շրջագիծը՝ 320 սմ, հասակ՝ 48 սմ, խորութիւնը տաշտաձեւ՝ 37 սմ»[93]:

Սանդեր (լուս.՝ հոդվածագրի, 2011 թ.)

90 **Չոլաքեան Յ.**, նշվ. հոդվ., էջ 40 և նշվ. աշխ., 2023, էջ 301:
91 Նշվ. հոդվ., էջ 41 և նշվ. աշխ., 2023, էջ 303:
92 Նշվ. հոդվ., էջ 41 և նշվ. աշխ., 2023, էջ 303:
93 **Չոլաքեան Յ.**, նշվ. հոդվ., էջ 41:

Հատվածներ նոր գերեզմանոցից (լուս.՝ հոդվածագրի, 2011 թ.)

Նոր գերեզմանոց. գտնվում է վանքի առջև: Գոյացել է 1960-ական թթ. հետո, երբ Սբ. Ստեփանոս եկեղեցուն կից գտնվող հին գերեզմանոցում այլևս թաղումներ չեն կատարվել[94]. «Արեւմտեան բաժինը յատկացուած է ալաուիներու, իսկ արեւելեան կողմը՝ հայոց: Լաթաքիա բնակող արամոցիները մինչեւ օրս իրենց թաղումները կը սիրեն կատարել գիւղին մէջ»[95]:

2011 թ. գերեզմանոցում հիմնականում անմշակ սալատապաններ էին և 1 արձանագիր գերեզման:

թ. Տապանաքար. երկաստիճան պատվանդանի վրա, ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ տապանաքարի երեսին, փոքրագիր, 3-ական տող նույն բովանդակությամբ հայերեն և արաբերեն.

Աստ հանգչի | Պօղոս Շաուիթօ, | 1947-2007: |

هنا يرقد | بوغوص شاويتو | ١٩٤٧-٢٠٠٧.

Հրատ. *առաջին անգամ:*

Տապանաքար թ (լուս.՝ հոդվածագրի, 2011 թ.)

Սբ. Թումա վանք. գտնվում է Արամո գյուղից 1 կմ հարավ-արևելք (35.620945, 36.140235): Վանքի հյուսիս-արևմուտքում անհիշելի ժամանակներից՝ հավանաբար վանքի ամայացումից հետո, գոյացել է Տեյր Թումա գյուղը[96], որն արաբերեն պաշտոնապես կոչվում է նույն ձևով՝ دير توما :

Վանքն առաջին անգամ վկայվել է 1864 թ. որպես ավերակ շինություն. «Յիշեալ Արամայ գիւղին լերանը ետեւի կողմը և անոր հարաւային ստորոտը ուրիշ վանք մի այլ կայ Տէր Տումա անուամբ, որ կ'երեւի թէ Տար Տումա պիտի ըլլայ, որ արաբացուց լեզուով Թումայի տունը կամ վանքը կը նշանակէ: Բայց հիմակ բոլորովին երեսէ ինկած է և ոչ ուխտատեղի է, ինչպէս վերոյիշեալ սուրբ Աստուածածնի և սուրբ Գէորգայ եկեղեցիները...»[97]: Այնուամենայնիվ, նշված թվականին այն տեղի ալևիների համար ուխտատեղի էր, և վերջիններս եկեղեցու խորանի վրա տեղադրել էին խորհրդանշական գերեզման. «Եկեղեցւոյ աւագ սեղանին վերայ գերեզմանաձեւ շէնք մի կ'երեւի ետքէն շինուած, ուր տեղ այլազգի և նըսէրի *(իմա՝ ալևի)* կոչուած աղանդաւորք ուխտի կ'երթան, սեղանին վերայի գմբէթը և պատը կործանուած է, ու այլազգեաց ձեռքով յետոյ հասարակ պատ մի հիսուած է»[98]:

Ի դարի կեսերին ալևիները վանքը ցանկանում են վերածել աղոթարանի, «սակայն կառավարութիւն արգիլած է»[99]: Ավելի ուշ նրանք «...ուզած են սրբավայրին կից, ձախին բացուած տարածութեան մէջ գիւղական հանդիսութիւններու սրահ կառուցել եւ եկեղեցին իբրեւ մագամ *(իմա՝* աղոթարան*)* գործածել: Պետութիւնը արգելք հանդիսացած է: Հանդիսութիւններու շէնքը կիսատ մնացած է»[100]:

94 **Չոլաքեան Յ.**, նշվ. աշխ., 2023, էջ 286 և նշվ. հոդվ., էջ 41:

95 Նշվ. աշխ., 2023, էջ 303 և նշվ. հոդվ., էջ 41:

96 Հայտնի է, որ 1980-ական թթ. շատ փոքր գյուղում «...այլեւս ոչ մի քրիստոնեայ ընտանիք կը բնակի» (**Ատրիանօ Ալիսակօ Նովելլօ**, նշվ. հոդվ., էջ 85-86:

97 Լաղաքիոյ հայաբնակ գիւղօրէից..., էջ 99: Ավերակ է հիշվում նաև Ի դարի սկզբին (**Թղթակից Բերիոյ**, նշվ. հոդվ., էջ 1203: Հմմտ. **Այծեամն**, նշվ. հոդվ., էջ 27):

98 Լաղաքիոյ հայաբնակ գիւղօրէից..., էջ 99: Տե՛ս նաև **Ղեւոնդ արքեպիսկոպոս**, նշվ. հոդվ., էջ 350:

99 **Ղեւոնդ արքեպիսկոպոս**, նշվ. հոդվ., էջ 350:

100 **Չոլաքեան Յ.**, նշվ. աշխ., 2023, էջ 304:

Սբ. Թումա վանքը հյուսիսից, հարավ-արևմուտքից, հարավից և արևմուտքից (լուս.՝ Արմեն Հախնազարյանի, 1991 թ. և հոդվածագրի, 2011 թ.)

Վանքն այժմ գտնվում է Լաթաքիայի հնագիտության գրասենյակի հսկողության ներքո[101]:

Ինչ վերաբերում է ճարտարապետական մանրամասներին, ապա այն առաջինը նկարագրել է Զաքարիա վարդապետը. «Սոյն սուրբ Թովմայի եկեղեցին բուն իրեն յատկացեալ ձեւ մի ունի: Բաց ի

101 Նույն տեղում:

Սբ. Թումա վանքի եկեղեցին հյուսիսից, հյուսիս-արևմուտքից, ներքին տեսքը դեպի արևելք և արևմուտք (լուս.՝ հոդվածագրի, 2011 թ.)

տաճարի աւագ դռնէն ունի նաեւ ուրիշ դուռ մի ատեանին բերանը, որով եկեղեցւոյն սրահը դասէն ու սեղանէն կը բաժնուի: Սոյն դրան թէ՛ կողմնակի և թէ վերին ու ստորին վիմափոր քանդակները սքանչելի տիպ մի ունին, բայց ափսոս որ կիսով չափ աւրուած են...: Առաստաղը որ ամբողջ կը կենայ, սրբատաշ քարերով հիւսուած է և մէջտեղի կեդրոնի քարը հասարակ խաչ մի կը ներկայացնէ հաւասար թեւերովը, որուն կեդրոնը բոլորակաձեւի մէջ կրկին խաչ քանդակուած է»[102]:

1906 թ. տեր Արսեն Հարութիւնեանը գրում է. Սբ. Թումա վանքը «...յունական ձեւով խորանի եւ դասի տեղեր ունի: Գմբէթի ներքեւի կեդրոնի քարը յունական խաչ մ'ունի»[103]:

1980-ական թթ. վանք այցելած Ադրիանո Ալպագո-Նովելլոյի նկարագրությամբ՝ «Կառոյցը ունի մէկ բաժանում, խորանին մասը կէս բոլորակ է, դուրսէն յայտնի (անսովոր երեւոյթ՝ հայկական աշխարհէն ներս), տանիքը՝ կազմուած յարդախառն շաղախով, այժմ բոլորովին քանդուած է: Արեւմտեան կողմը հետագային աւելցուած է ընդարձակ ծածկուած սրահ մը, շատ նման հայկական վանքերու գաւիթներուն: Առաստաղը կազմուած է կոփուած քարերու խաչաձեւումով: Թէեւ այս կառոյցը զուրկ է որեւէ արձանագրութենէ եւ գեղազարդարում է, սակայն հաստատ կրնանք ըսել, որ յարաբերաբար արդի ժամանակներու հայկական ճարտարապետութեան կը պատկանի ան (նոյնիսկ եթէ գաւիթը կրնանք մօտեցնել խաչակիրներու կարգ մը ճարտարապետական գործերուն)»[104]:

2018 թ. Հակոբ Չոլաքյանը գրում է. «Եկեղեցական կառոյցը ...երեք մաս ունի, գաւիթը, որ քառաթեւ գմբեթաւոր քառակուսի կառոյց մըն է...: Գմբեթի չորս թեւերը կը միանան վերը վարպետօրէն ագուցուած խաչքարի մը, որուն կեդրոնը, շրջագիծի մը մէջ, կայ խաչի քանդակ մը...: Կողմի պատերուն վրայ ունի մէկական քառանկիւն պատուհան ու երկուքական կամարաձեւ լուսամուտներ...: Խորանի բաժինը դուրսէն կիսակլոր շրջագիծ մը կը ձեւացնէ, դարձեալ՝ երկու կողմէն մէկ անկիւնաքարով աւելի նեղ...: Որքան որ նկատելի է, Զաքարիա վարդապետին յիշատակած խորանին վրայ յետնաբար շինուած ծածկը չկայ, ոչ ալ խորանին մէջ տեղադրուած տարիիը»[105]:

Ըստ 2011 թ. մեր ուսումնասիրության՝ կարող ենք ավելացնել հետևյալը. վանքը բաղկացած է եկեղեցուց և գավթից: Վերջինս քառակուսուն մոտ շինություն է (արտաքին չափերն են՝ 8,94 x 8,50 մ): Շարվածքն իրականացվել է միջին և մեծ չափերի

102 Լաղաքիոյ հայաբնակ գիւղօրէից..., էջ 99: Տե՛ս նաև **Ղեւոնդ արքեպիսկոպոս**, նշվ. հոդվ., էջ 350:

103 **Թղթակից Բերիոյ**, նշվ. հոդվ., էջ 1203: Հմմտ. **Այծեամն**, նշվ. հոդվ., էջ 27:

104 **Ադրիանո Ալպագո Նովելլո**, նշվ. հոդվ., էջ 85-86:

105 **Չոլաքեան Յ.**, նշվ. աշխ., 2023, էջ 305:



Սբ. Թումա վանքի հատակագիծը (չափ.՝ Ա. Ալպագո-Նովելլոյի, 1980-ական թթ., արտատպ.՝ Ատրիանօ Ալփակօ Նովելլօ, նշվ. հոդվ., էջ 86 և հոդվածագրի, 2011 թ.), գավիթը հարավ-արևմուտքից, ներքին տեսքը դեպի արևելք, հարավ և հյուսիս (լուս.՝ հոդվածագրի, 2011 թ.)

անմշակ, կոպտատաշ և սրբատաշ (առավել պատասխանատու հատվածներում) քարերի համադրությամբ: Հարթ տանիքով գավիթը ծածկված է խաչվող թաղով, որի կենտրոնական հատվածում միակտոր քարից կերտված խաչաձև փականի քարն է: Գավթի հիմնական մուտքը բացված է արևմտյան ճակատից, իսկ հյուսիսային և հարավային ճակատներում առկա է ևս մեկական մուտք, դրանցից հյուսիսայինը փակված է: Լուսավորությունն իրականացվում է հյուսիսային և հարավային որմերի երկուական լուսամուտով: Որմերին առկա են ավելի հին կառույցի ճարտարապետական բեկորներ, իսկ հիմնական մուտքի հյուսիսային կողին՝ հայերեն արձանագրություն: Գավիթը նորոգվել է 1991 թ.-ից հետո՝ մինչև 2011 թ.:

Եկեղեցին (արտաքին չափերն են՝ 11,29 x 6,60 մ) ուղղանկյունաձև, միանավ և քարաշեն (շարվածքը՝ միջին և փոքր չափերի կոպտատաշ քարերով) կառույց է: Փլուզված ծածկը հյուսիսում և հարավում հենված է եղել որմնասյուներից բարձրացող որմնակամարներին: Սրահն արևելյան կողմում ավարտվում է արտաքուստ շեշտված կիսաշրջան խորանով: Եկեղեցու միակ մուտքն արևմտյան շքամուտքից է՝ գավթից, որն այժմ փակված է: Լուսավորությունն իրականացվել է հյուսիսային և հարավային որմերի մեկական, իսկ արևելյան որմի միակ լուսամուտով, որոնցից պահպանվել է միայն հյուսիսայինը: Ըստ ճարտարապետական առանձնահատկությունների՝ այն թվագրում ենք ԺԲ-ԺԳ դդ.:

Սբ. Թումա վանքի գավթի թաղը, խաչաձև փականի քարը, եկեղեցու մուտքը՝ գավթից, ավելի վաղ կառույցի ճարտարապետական բեկորներ գավթի որմերին (լուս.՝ հեղվածագրի, 2011 թ.) և եկեղեցու ներսում ալևիների խորհրդանշական գերեզմանը (լուս.՝ Ա. Հախնազարյանի, 1991 թ.)

ժ. Արձանագրություն. գավթի արևմտյան մուտքի հյուսիսային կողին՝ փորագիր, 10 տող.

...թ [մ]տեք ի գա[ւ|իթ] [սուրբ] եկեղեցւոյս ... | ... [շէ]ք զտ(է)ր Թե|[ոդոր]ոս եւ առ ըն[դ] ... | ... զայր Ստեփա[ննոս] ... | ...Խ(ա)չտ(ու)ր | ... զԿիրաւկոս, | ... | ... Ծեր Պաւղոս ... | թ...ա...մ... | ...մ...:

Հրատ. *Լաղաքիոյ հայաբնակ գիւղօրէից..., էջ 99:* ***Ղեւոնդ արքեպիսկոպոս****, ճշվ. հոդվ., էջ 350:* ***Տէմիրճեան Վ.****, ճշվ. աշխ., էջ 374:* ***Չոլաքեան Յ.****, ճշվ. աշխ., 2021, էջ 149:* ***Նույնի****՝ ճշվ. աշխ., 2023, էջ 303:*

Ծանոթ. *Զաքարիա վարդապետը գրում է. «Իսկ տաճարին աւագ դրան հարաւային շեմին լայնադիր քարերուն մէկուն վրայ կերեւին հայկական երկաթագիրներ կիսամաշ եւ դժուարընթեռնլի...» (Լաղաքիոյ հայաբնակ գիւղօրէից..., էջ 99): Հավանաբար նույն արձանագրության մասին խոսելիս Արսեն քահանան նշում է. «Պատուհանի մը եզերքը խոշոր քար մը զետեղուած է, որու վրայ յունական (թերեւս արաբերէն) գրերով բառեր կան անընթռնելի» (****Թղթակից Բերիոյ****, ճշվ. հոդվ. էջ 1203): Նույնը կրկնում է նաև Այծյամանը. «Վանքին պատուհաններուն միոյն եզերքը յունական եւ օտար (արամական լեզու կը կարծեն տեղացիք) արձանագրութիւններ կան» (****Այծեամն****, ճշվ. հոդվ., էջ 27): 1958 վանք այցելած Բերիո թեմի առաջնորդ Ղևոնդ արք. Չեպեյանն արձանագրության մասին նշում է. «Մայր դրան պատին վրայ արձանագրութիւններ կան: Հազիւ քանի մը գիրեր կրցանք կարդալ» (****Ղեւոնդ արքեպիսկոպոս****, ճշվ. հոդվ., էջ 350):*



Արձանագրություն ժ (լուս. և գրչ.՝ հեղվածագրի, 2011 և 2024 թթ.)

ՎԻՄԱԳՐԵՐՆ «ԱԿՕՍ»-Ի ԷՋԵՐՈՒՄ

Սաթենիկ Խուրշուդյան

Հայ ժողովրդի դարավոր պատմությունն անխզելիորեն կապված է նաև գաղթաշխարհի հետ: Տարաբնույթ իրադարձություններով պայմանավորված՝ հայերը ստիպված են եղել իրենց կենսագործունեությունն ապահովել նաև Մայր հայրենիքից հեռու: Հայաբնակ հոծ գաղութներ են ստեղծվել Եվրոպայում, Մերձավոր Արևելքում, Հնդկական ենթացամաքում, Փոքր Ասիայում, այժմյան Ռուսաստանի Դաշնության մի շարք մարզերում և այլուր: Հիշյալ վայրերում հայի ինքնության պահպանման առանցքային գործոններից մեկը գիրն է եղել, որն արտահայտվել է ինչպես ձեռագիր մատյանների ընդօրինակմամբ, եկեղեցիների որմերին և կոթողներին վիմագրեր փորագրելով, այնպես էլ հետագայում գրքի ու պարբերական մամուլի հրատարակությամբ: Այսպես՝ հայկական հնագույն գաղթավայրերից մեկը Կ.Պոլիսն է (այժմ՝ Ստամբուլ), իսկ պոլսահայ գաղութը թերևս եղել է Փոքր Ասիայի ամենահայաշատ կենտրոնը: Այստեղ ընդօրինակված բազմաթիվ ձեռագրեր են մեզ հասել, տեղում լայն ծավալների էր հասել տպագիր գրքի հրատարակությունը, իսկ մի քանի անուն պարբերական մամուլի էջերում տպագրվել-հանրայնացվել են քաղաքական, ազգային, պատմաբանասիրական, հնագիտական և թեմատիկ այլ ուղղվածությամբ հոդվածներ:

Ի թիվս այլ ուշագրավ աղբյուրների՝ պոլսահայ մամուլի էջերում ամբարված է հայ գրավոր ժառանգությունը լուսաբանող վիթխարի նյութ: Այդ շարքում մեզ հատկապես հետաքրքրում են այն հոդվածներն ու հաղորդումները, որոնք անմիջականորեն կապված են հայ վիմագրության հետ, ուստի սույն հրապարակմամբ սկսում ենք հայ գրավոր ժառանգությունն ուսումնասիրող մի շարք, որի հիմնական նպատակը հայ և օտարալեզու մամուլի էջերում ցրված և ցավալիորեն հաճախ նաև կորսված վիմագրերն ի մի բերելը, դասակարգելն ու համապատասխան քննություն իրականացնելն է: Իբրև այդպիսին՝ մեր հավաքչական աշխատանքները սկսել ենք Կ.Պոլսում հրատարակվող «Ակօս» շաբաթաթերթից[1] (1996-2024 թթ.):

Հավելենք, որ «Ակօս»-ում հիշատակված վիմագրերը ներկայացնում ենք ժամանակագրական կարգով՝ շարադրանքում նշելով հոդվածի հեղինակին (եթե հայտնի է) և խորագիրը, իսկ տողատակում՝ շաբաթաթերթի տարին, համարը, օրանունը և էջը: Որոշ վիմագրեր վերծանել ենք բացառապես հոդվածներում առկա լուսանկարների հիմամբ:

ա. Սարգիս Սերովբեան, **«Անին ինչպէս ծախեցինք յոյներուն»**[2].

Հոդվածում հիշատակվում են Վարագա Սբ. Նշան վանքի Սբ. Գևորգ գավթի մեջ գտնվող Պետրոս կաթողիկոսի և Սենեքերիմ թագավորի տապանաքարերի արձանագրությունները, որոնք հոդվածագիրը մեջբերում է Վիեննայի Մխիթարյան միաբանության անդամ հայր Ներսես Սարգիսյանի «Տեղագրութիւն ի Փոքր և ի Մեծ Հայս» գրքից.

Թվին. ԴՃՀԱ (1022): Այս է հանգիստ տն. Պետրոսի կթղիկոսին., որ ի Տրապիզոն զգետն Ճրոխ. արգելաց. առաջի Վասիլ արքային[3]*:*

Այս է հանգիստ Սենեքերիմ թգորին., թվին ԴՃՀԸ (1029)[4]*:*

Առաջին արձանագրությանն անդրադարձել է նաև Հ. Օրբելին[5], որի վերծանությունը համապատասխանում է վերոհիշյալ օրինակին, իսկ Ղևոնդ Փիրղալեմյանի մոտ այսպես է.

«Թվին ՆՀԱ (1022) ...»[6]:

Սակայն պետք է նկատել, որ Պետրոս Գետադարձի մահվան թվականն ընդունված է համարել 1058-ը: Մաղաքիա արք. Օրմանյանը նշում է. «Պետրոս հեռուէն լսելով եւ դիտելով իր հայրենեաց տառապանքը, եւ ցաւագին հառաջանքներ արձակելով, կը կնքէ իր կեանքը Սեբաստիոյ վանքին մէջ, 1058-ին ատենները, եւ կը թաղուի նոյն վանքին մէջ»[7]:

1 1996 թվականից Ստամբուլում հրատարակվող քաղաքական, հասարակական շաբաթաթերթ, որն առաջին հայերեն-թուրքերեն երկլեզու պարբերականն է: Հիմնադրվել է հայազգի մտավորական Հրանտ Դինքի կողմից՝ Թուրքիայի հայերի խնդիրները հանրայնացնելու նպատակով: Ցավոք, 2007 թվականի հունվարի 19-ին իր իսկ հիմնած խմբագրության մուտքի մոտ սպանվեց Հրանտ Դինքը: Թերթը լույս է տեսնում առ այսօր:

2 **Սերովբեան Ս.**, Անին ինչպէս ծախեցինք յոյներուն, «Ակօս», 2010, № 751, 20 օգոստոսի, էջ 4: Հմմտ. **Սերոբեան Ս.**, Պետրոս Գետադարձ եւ Տրապիզոնի Ամենափրկիչ վանքը, «Քուլիս», 1984, № 894, 15 մարտի, էջ 10:

3 **Սարգիսեան Ն.**, Տեղագրութիւն ի Փոքր եւ ի Մեծ Հայս, Վենետիկ, 1864, էջ 256: Հմմտ. **Սերովբեան Ս.**, Անին ինչպէս ծախեցինք յոյներուն, էջ 4:

4 **Սարգիսեան Ն.**, նշվ. աշխ., էջ 257: Հմմտ. **Սերովբեան Ս.**, Անին ինչպէս ծախեցինք յոյներուն, էջ 4:

5 **Орбели И.** Избранные труды. Ереван, 1963. С. 475.

6 **Տեր-Ստեփանյան Ա.**, Վիմագրերը Մատենադարանի ձեռագրերում, «Վարձք», 2016, № 11, էջ 20:

7 **Օրմանեան Մ.**, Ազգապատում, Ա, Էջմիածին, 2001, էջ 1461:

Վարագավանք (լուս.՝ Ս. Կարապետյանի (ՀՃՈՒ), 2004 թ.)

Ուստի վերոնշյալ 1022 թվականը կաթողիկոսի ոչ թե մահվան, այլ Գետարգելության թիվն է[8]: Հարկ է նշել, որ Օրմանյանը Պետրոս Գետադարձի ամփոփման վայրը նշում է Սեբաստիան, իսկ Հ. Ոսկյանը՝ Վարագավանքը՝ ելնելով տեղում առկա տապանաքարի գոյությամբ: Նա նկարագրում է Վարագավանքի Ս. Գևորգ եկեղեցու գավիթը՝ զարդարված սրբապատկերներով, և գրում. «Այստեղ կը ցուցուին գերեզմանները կաթողիկոսի մը, թագուհիի մը և թագաւորի մը: Կաթողիկոսն է Պետրոս Գետադարձ, որուն տապանագիրն է թվին ԴՃՀԱ ...»[9]:

բ. Սարգիս Սերովբեան, **«Ամենափրկիչ վանք»-ի յիշատակարանը»**[10].

Ինչպես նշում է հոդվածագիրը, Տրապիզոնի Սբ. Ամենափրկիչ վանքի արձանագրության մասին առաջին անգամ գրվել է Ազգային հիվանդանոցի «Սուրբ փրկիչ» ամսաթերթում (1980, № 363, հունվար), ապա՝ «Քուլիս» հանդեսի էջերում[11]: Սույն հարթ քարը, որի ողջ մակերեսը զբաղեցնում է 14 տողանի արձանագրությունը, բաժանված է երեք բեկորի, որից պահպանվել են միայն երկուսը: Սերովբյանն արձանագրությունը տրոհել է վերջակետերով, գրի առել՝ պահպանելով բանաստեղծական հանգավորումը, ինչպես ժամանակին ընդօրինակել է Մինաս վրդ. Բժշկյանն իր «Պատմութիւն Պոնտոսի, որ է Սեաւ ծով» աշխատության մեջ[12]:

Սերովբյանը վիմագրի պակաս հատվածները լրացրել է՝ օգտվելով Բժշկյանից: Սակայն կորած քառորդ մասի վրա արձանագրված 12-րդ տողի առաջին կեսը ևս պակասում է Բժշկյանի մոտ, ուստի հեղինակն այդ հատվածը պարզապես կետանշել է:

Տրապիզոնի Սբ. Ամենափրկիչ վանքի արձանագրությունը (լուս.՝ Զ. Սարգսյանի (ՀՃՈՒ արխիվ), 2011 թ.)

Ստորև ներկայացնում ենք հիշյալ վիմագրի մեր ընթերցումը՝ օգտվելով երջանկահիշատակ Զավեն Սարգսյանի՝ ՀՃՈՒ արխիվում առկա լուսանկարից, նշելով սղված և պակաս (համապատասխանաբար կլոր և ուղղանկյուն փակագծերում) բառերը, ինչպես նաև որոշ բառերում առկա տարընթերցումները.

Փառաց տաճարս ա(ստուա)ծա(յ)ին, յերկրի դրախտ կեն[ա]ց փայտին, կանգնեալ յանուն Ամենափրկ|չին, ի յութիարիւր թուականի յեւթանասուն եւ եր[ե]քին (1424 թ), ի կաթ(ո)ղիկոսութե(ա)ն հայոց մեծաց տ(է)ր | Պաւղոսի ուղ(ղ)ափառի, ի ժամանակս բարեպաշտի Կիր Ալէքս թագաւորի: Խոճա Ստեփաննոսն պատուելի | շինեաց զտաճարս հրաշալի իւր յիշատակ անջնջելի եւ ծնաւղաց իւր կրկնակի եւ կենա|կցին իւրոյ Մելիքա Խ(ա)թունին եւ զաւակաց իւրոց մեծի եւ փոքու: Արդ, ես՝ խոճա Ստեփաննոսս, ստա|ցա ի հալալ արդեանց իմոյ զտեղի վանացս իւր անդաստանովն եւ շինեցի զլուսազարդ տաճարս յիշատակ հո|գւոյ իմո եւ ի վայելումն մանկանց Սիոնի եւ ետու ի մ[ի]աբանք ս(ուր)ք ուխտիս ես՝ Խոճա Ստեփանոսս եւ իմ որդիքս զի հասա|[ռակ] ամ(ենայն) քրիստոնէից է վանքս եւ կրաւնաւորաց որք [բն]ակեալ են ի սա եւ ա(ստուծո)յ տուն եւ ոչ որ չունի իշխանութիւն | [ոչ յի]մոց եւ ոչ յաւտարաց, իբրեւ զմարմնաւոր հայրենիք իշխել ի վեր(այ) վանացս: Այլ ազատ է ազատի | [եւ

8 **Տեր-Ստեփանյան Ա.**, նշվ. հոդվ., էջ 22:

9 **Ոսկեան Հ.**, Վասպուրական-Վանի վանքերը, մաս Ա, Վիեննա, 1940, էջ 273:

10 **Սերովբեան Ս.**, «Ամենափրկիչ վանքի»-ի յիշատակարանը, «Ակօս», 2010, № 752, 27 օգոստոսի, էջ 4:

11 **Սերոբեան Ս.**, Պետրոս Գետադարձ եւ Տրապիզոնի Ամենափրկիչ վանքը, էջ 10-11:

12 **Բժշկեան Մ.**, Պատմութիւն Պոնտոսի, որ է Սեաւ ծով, Վենետիկ, 1819, էջ 83:

ա(ստուծո)յ տուն այլ] միայն զխնամս տանելո[վ եւ զամենայն] մարմնական կարիք ս(ուր)ք վանացս կատարելով: | [Ս(ուր)ք Նշանս աստուածընկալ յիշատակ է Խոճա] Ստեփաննոսին եւ որդ(ւ)ո(յ) իմո(յ) պ(ա)ր(ոն) Մկըրտչին | ... հրամանաւն ա(ստուծո)յ կատարեցի ս(ուր)ք տաճարս | [եւ մատուռ նորին] ս(ուր)ք Կարապետին եւ շուրջապատ իւր պարսպով | [յիշատակ ինձ եւ ծնաւղաց իմոյ եւ ամենայն ազգա]կանաց:

Տարընթերցում. ***Բժշկյանի*** *մոտ «տաճարս»-ի փոխարեն՝ «տաճար», «ի յութիարիւր»-ի փոխարեն՝ «ի ութն հարիւր», «թուականի»-ի փոխարեն՝«թուականին», «յեւթանասուն-ի փոխարեն՝ «եօթանասուն», «Պաւղոսի»-ի փոխարեն՝ «Պօղոսի», «Խոճա»-ի փոխարեն՝«Խօճայ», «Ստեփաննոսն»-ի փոխարեն՝ «Ստեփաննոսըն», «զտաճարս»-ի փոխարեն՝ «տաճարս», «իւր»-ի փոխարեն՝«յիւր», «ծնաւղաց»-ի փոխարեն՝«ծնողաց», «խոճա»-ի փոխարեն՝«խոճայ», «անդաստանովն»-ի փոխարեն՝ «անդաստանաւն», «հոգւոյ իմո»-ի փոխարեն՝ «հոգւոյ իմոյ», «Սիոնի»-ի փոխարեն՝ «Սիովնի», «միաբանք»-ի փոխարեն՝ «միաբանից», «Խոճա»-ի փոխարեն՝ «խօճայ», «կրաւնաւորաց»-ի փոխարեն՝ «կրօնաւորաց», «յաւտարաց»-ի փոխարեն՝ «յօտարաց», «մարմնական»-ի փոխարեն՝ «մարմնաւոր», «Խոճա»-ի փոխարեն՝ «խօճայ», «որդ(ւ)ո(յ) իւրո(յ)»-ի փոխարեն՝ «որդւոյ իւրոյ», «Մկըրտչին | ... հրամանաւն ա(ստուծո)յ կատարեցի ս(ուր)ք տաճարս | եւ մատուռ»-ի փոխարեն՝ «Մկրտչին եւ մատուռ», «շուրջապատ»-ի փոխարեն «շրջապատ», «ծնաւղաց»-ի փոխարեն՝ «ծնողաց», «իմոյ»-ի փոխարեն՝ «իմոց»:* ***Սերովբեանի*** *մոտ «ա(ստուա)ծա(յ)ին»-ի փոխարեն՝ «ածային», «կաթ(ո)ղիկոսութե(ա)ն»-ի փոխարեն՝ «կաթ(ո)ղիկոսութեան», «Ալէքս»-ի փոխարեն՝ «Ալեքսի», «Ստեփաննոսն»-ի փոխարեն՝ «Ստեփաննոս», «իւր»-ի փոխարեն՝ «իբր», «իւրոյ»-ի փոխարեն՝ «իւրոց», «մեծի եւ»-ի փոխարեն՝ «մեծիի», «Ստեփաննոսս»-ի փոխարեն՝ «Ստեփաննոս», «հոգւոյ իմո»-ի փոխարեն՝ «յոգիոյ իմո», «յիմոց»-ի փոխարեն՝ «իմոյ», «վանացս»-ի փոխարեն՝ «վանայցըս», «Ստեփաննոսին»-ի փոխարեն՝ «Ստեփաննոսի», «որդ(ւ)ո(յ) իւրո(յ)»-ի փոխարեն՝ «որդու իմո», «Մկըրտչին»-ի փոխարեն՝«Մկրտչին», «զս(ուր)ք»-ի փոխարեն՝«ս(ուր)ք», «Կարապետին»-ի փոխարեն՝«Կարապետն»:*

Բժշկյանի աշխատությունից կարողանում ենք պարզել մեզ համար կարևոր մի հարց. դա արձանագրության նախնական տեղադրությունն է, որի մասին հստակ հիշատակություն կա վարդապետի մոտ: Այսպես՝ «Եկեղեցնայ դրան վրայի մեծ միակտուր մէրմէռ վիմին վրա գրած է այս յիշատակագիրը»[13], մինչդեռ հոդվածագիրը տապանաքարը տեսել է Տրապիզոնի՝ թանգարանի վերածված Սբ. Սոֆիա եկեղեցու մոտ[14]: Հոդվածագրի գրառումներից տեղեկանում ենք, որ Ամենափրկիչ վանքին անդրադարձել է նաև Ճեվաք Շենթյուրքը 1975 թ. Ստամբուլում տպված իր «Տրեբիզոնդ» գրքում, որտեղ ևս նշում է, որ այն գտնվում է Այա Սոֆիայի թանգարանում[15]:

13 Նշվ. աշխ., էջ 85:

14 **Սերովբեան Ս.**, «Ամենափրկիչ վանքի»-ի յիշատակարանը, էջ 4:

15 **Şentürk C.**, Trebizonad, İstanbul, 1975, s. 51-53.

Բեղրետտին թաղամասում հայտնաբերված տապանաքարերը (լուս.՝ արտատպ. Կիւրեղ Ս., նշվ. հոդվ., էջ 4)

գ. Սարգիս Կիւրեղ, **«Հայրենակիցի գիտակցութիւնը պահեց տապանաքարը»** և Սարգիս Սերովբեան, **«Շիրմաքարերը կը խօսին»**[16].

Ստամբուլի Կասըմփաշայի Բեղրետտին թաղամասի բնակիչներն իրենց պատմական արժեքներին տեր կանգնելու համար 2011 թ. միություն են հիմնում: Այդ թաղամասը նախապես հաշվառված էր որպես պահպանության արժանի վայր: Ճանապարհաշինարարական աշխատանքների ժամանակ հայտնաբերվում է հայերեն արձանագրությամբ երկու տապանաքար: Միության ատենապետ Սուլեյման Սոնկուրն ապահովում է քարերի անվտանգությունը, ապա լուսանկարում և ներկայացնում հուշարձանների պահպանությամբ զբաղվող խորհրդին: Սերովբյանը պնդում է, որ այնտեղ գերեզմանատուն է եղել, որը հայկական մի շարք գերեզմանատների նման ավերվել է[17]: Վերջինս ներկայացրել է տապանագրերից մեկի վերծանությունը՝ առանց թվականի, իսկ մյուսն անընթեռնելի համարելով՝ նշում է միայն թվականը: Ահա տապանագրերի վերծանությունները.

Այս է տ(ա)պ(ա)ն վանե|ցի Սարգսի որդի | մահտեսի Տէր Աբրա|համին, որ փոխե|ցաւ առ Ք(րիստո)ս, թ(վ)ին | ՌԵԼԹ (1690):

[Այս է] տապան | [հան]գստեան | ...թացի Խա[ն]ճի | Յակո|[բի կ]ողակիցըն | ...ռէնցիան | [հա]նգեաւ | [թվին] ՌՍԼԲ (1783):

դ. Սարգիս Սերովբեան, **«Վերին Եփրատի ուխտագնացութիւնը»**[18].

16 **Կիւրեղ Ս.**, Հայրենակիցի գիտակցութիւնը պահեց տապանաքարը; **Սերովբեան Ս.**, Շիրմաքարերը կը խօսին, «Ակօս», 2011, № 792, 10 յունիսի, էջ 4:

17 Նույն տեղում:

18 **Սերովբեան Ս.**, Վերին Եփրատի ուխտագնացութիւնը, «Ակօս», 2011, № 795, 1 յուլիսի, էջ 4:

Խաչքարի արաբերեն արձանագրությունը (լուս.՝ Բ. Քորթոշյանի (ՀՃՈՒ), 2007 թ.)

Հոդվածը նվիրված է Դերջան գավառի Ապարանք գյուղի Սբ. Դավիթ վանքին: Հիշատակվում է հայկական ամենաբարձր խաչքարը (5 մ բարձրությամբ)[19], որի նեղ կողմի վրա առկա է արաբերեն արձանագրություն՝ ըստ հոդվածագրի թվագրված սելջուկյան իշխան Նաստէտտինի շրջանով, այն է՝ 1191-1194 թթ.[20]:

Այնինչ նշված արձանագրությունն ընթերցել և թարգմանել է Ռաֆֆի Քորթոշյանը՝ այն համարելով սելջուկ սուլթան Ղիյաս Ալ-Դին Քեյխոսրովի ժամանակաշրջանի՝ 1194 թ.[21]:

ե. Ֆունտա Թոսուն, **«Ս. Մինասին նախագիծը պատրաստ է»**[22].

Ըստ հոդվածագրի՝ Էրզրում քաղաքի մերձակա Կես գյուղի Սբ. Մինաս եկեղեցին կառուցվել և օծվել է 1790 թ. հին և փլատակ մի եկեղեցու տեղում, որի

Սբ. Մինաս եկեղեցին (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2010 թ.)

մասին վկայում է տաճարի որմերից մեկում ագուցված խաչքարի[23] արձանագրությունը[24].

Թուին Հայոց ՌՃՀԹ (1730):

Հավանական ենք համարում, որ խոսքը Քոսյանի նշած «ներքուստ դրան որմին մէջ հաստատուած... սպիտակ մարմարիոն փոքր»[25] խաչքարի արձանագրության մասին է, որի ամբողջական արձանագրությունն է. *«Յիշտկ. է Մուսէս Գուլա Տեփանոս ՌՃՂԹ (1740)»*[26]:

Կարծում ենք նաև, որ արձանագրության թվականը բավարար հիմք չէ մտածելու, թե այն ավելի հին եկեղեցու տեղում է կառուցվել: Միգուցե խաչքարը բերվել է այլ տեղից կամ մոտակա գերեզմանատան խաչքարերից է եղել, որ պարզապես ծառայել է որպես շինաքար:

զ. [Խմբագրական] **«Մշակութային եղեռնի նոր օրինակ մը եւս»**[27].

Թուրքիայում, ցեղասպանության ուրացմանը զուգահեռ, ոչնչացվում են հայկական բոլոր հետքերը, ճարտարապետական կոթողները: Մալքարայի քաղաքապետարանի ձեռնարկած քաղաքաշինության աշխատանքների ժամանակ հայտնաբերվել են շիրմաքարեր, որոնք օգտագործվել էին որպես կոյուղու կափարիչներ: «Ակօս»-ին այս տեղեկությունը հաղորդել է Իլմիր Պայազօղլին, որի վկայությամբ՝ Մալքարայի հայկական գերեզմանատունը թալանվել է 1950 թ., և քաղաքապետ Հասան Թյուբյունճյուն այդ շիրմաքարերը գործածել է որպես

19 **Հրայր Բազէ**, Խաչքար, Երևան, 2017, էջ 5, 415:
20 **Մերովբեան Ս.**, Վերին Եփրատի ուխտագնացութիւնը, էջ 4:
21 **Հրայր Բազէ**, նշվ. աշխ., էջ 413:
22 **Թոսուն Ֆ.**, Ս. Մինասին նախագիծը պատրաստ է, «Ակօս», 2012, № 833, 30 մարտի, էջ 1:

23 Armenian Architecture: A Documented Photo-archival Collection on Microfiche, Project Director: V. L. Parsegian, Zug, Switzerland, V. 6; pt. 2, 1988-1989, Mf. 76. 2010 թ. եկեղեցի այցելած ՀՃՈՒ հիմնադրամի արշավախումբը խաչքարը չի տեսել (ըստ արշավախմբի անդամների տեղեկության):
24 **Թոսուն Ֆ.**, նշվ. հոդվ., էջ 1:
25 **Քոսեան Յ.**, Բարձր Հայք, հ. Բ՝ Կարնոյ գիւղերը, Վիեննա, 1926, էջ 177:
26 Նույն տեղում:
27 «Ակօս», 2012, № 840, 18 մայիսի, էջ 1:

Մալքարայում հայտնաբերված տապանաքարը (լուս.՝ արտատպ. «Ակօս», 2021, № 840, 18 մայիսի, էջ 1)

կափարիչներ[28]: Ստորև հոդվածում առկա լուսանկարի հիման վրա մեր կողմից արված վերծանությունը.

[Այ]ս է տապան հանգստեան | ... Ծառուկի կողակից | [Մա]ռեամին, որ հանգեաւ ի | .. [թվի]ն հ(ա)յ(ոց) ՌՄՂԴ ՌՀԱ (1835):

է. [Խմբագրական] **«Խոնարհած Ս. Սարգիս տաճարը»**[29].

Սալմաստ գավառի նախկին հայաբնակ Դրիշկ գյուղում պահպանվել են Սբ. Սարգիս եկեղեցու ավերակները[30]: Ըստ հոդվածի՝ խորանախորշի աջ կողմի պատի քարերից մեկին նկատելի է մի եղծված գիր[31].

Ես ... այ... 1804[32]*:*

Հարկ է նշել, որ արձանագրությունը տեսել է ՀՃՈՒ հիմնադրամի արշավախումբը՝ «Խորանից հարավ՝ որմնասյան արևմտահայաց երեսին, պատահական դիրքով...»[33], որի ճիշտ ընթերցումն է. *«...էս | յ(ի)շ(եցէք) | Ք(րիստո)ս, թվ(ին) Ռ/ՃԵ (1656)»*[34]*:*

28 Նույն տեղում:
29 «Ակօս», 2013, № 887, 19 ապրիլի, էջ 2:
30 Եկեղեցու մասին տե՛ս **Կարապետյան Ս.**, Հայաստանի պատմություն, հ. Բ՝ Սալմաստ, Երևան, 2017, էջ 139-141:
31 «Ակօս», 2013, № 887, 19 ապրիլի, էջ 2:
32 Նույն տեղում:
33 **Կարապետյան Ս.**, նշվ. աշխ., էջ 141:
34 Նույն տեղում:



Սբ. Սարգիս եկեղեցու արձանագրությունը (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2011 թ. և գրչ.՝ Ս. Դանիելյանի (ՀՃՈՒ), 2017 թ.)

ը. Սարգիս Սերովբեան, **«Սաւրայի հայոց գերեզմանատունը»**[35].

2013 թ. ապրիլի 19-ին Ատրպատականի հայոց թեմի առաջնորդ տեր Գրիգոր ծ. վրդ. Չիֆթճյանը տեղագրման նպատակով այցելում է Սալմաստի նախկին հայաբնակ Սավրա գյուղի հայկական գերեզմանատուն: Հոդվածագիրը մեջբերում է վարդապետի արձանագրած փաստերը: Հարյուրավոր տապանաքարերից միայն մի քանիսի վրա են պահպանվել արձանագրություններ[36]: Այսպես.

ՌԽ (1591)[37]*:*

Յիշ[ատա]կ է Սբ. խաչս Մարիամին, թվ[ին] ՌՄԻԲ (1773)[38]*:*

Հարկ է նշել, որ արձանագրությունները տեսել է ՀՃՈՒ հիմնադրամի արշավախումբը: Դրանց ճիշտ ընթերցումներն են. *«...է... | թվին ՌԽ/Ա (1592)»* և *«Յիշ(ատա)կ է ս(ուր)բ խաչս Մարք(ա)րիտին, թվ(ին) ՌՄԻԸ (1779)»*[39]*:*

Սավրայի հայոց գերեզմանատան՝ 1591 թ. խաչքարը (լուս. և գրչ.՝ Ս. Կարապետյանի, 2011 և 2017 թթ.)

35 «Ակօս», 2013, № 888, 26 ապրիլի, էջ 4:
36 Նույն տեղում:
37 Նույն տեղում:
38 Նույն տեղում:
39 **Կարապետյան Ս.**, նշվ. աշխ., էջ 444:

Սավրայի հայոց գերեզմանատան՝ 1773 թ. տապանաքարը (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2011 թ. և գրչ.՝ Ս. Դանիելյանի, 2017 թ.)

Բաղեշի եկեղեցին (լուս.՝ Ս. Դանիելյանի, 2018 թ.)

Թ. Սարգիս Սերովբեան, **«Քարեղէն քաղաքը՝ Բաղէշ կամ Պիթլիս»**[40].

Հոդվածագիրը հիշատակում է Բաղէշ քաղաքի չորս վանքերը՝ Ամլորդու, Գոմաց Սբ. Աստվածածին, Ավեխու Սբ. Աստվածածին, Խնդրակատար Սբ. Աստվածածին՝ նշելով, որ բացի այս չորս վանքերից՝ քաղաքի մեջ կան նաև չորս հոյակապ եկեղեցիներ: Դրանցից հիշատակում է Կարմրակ Սբ. Նշանը և նրա որմերին պահպանված արձանագրությունը.

ՌՅԼԳ | 1884:

Ժ. Ույկար Կյուլթեքին, **«Շրջուն շիրմաքարեր»**[41].

Ստամբուլի Քարթալի շրջանում՝ քաղաքապետարանին պատկանող շինություններից մեկի տարածքում պատահաբար հայտնաբերված բազմաթիվ շիրմաքարերի մեջ ուշադրության արժանացավ մի տապանաքար, որի վրա գրված էր.

Կ. | Խալֆա | Կարապ(ե)տ | Պալեան:

Հիշատակված անձն ազգային բարերար Կարապետ Ամիրա Պալյանն է՝ Օսմանյան կայսրության արքունի ճարտարապետը: Հեղինակն է Ստամբուլի մի շարք նշանավոր շինությունների: Թե ինչպես են այդ տապանաքարերը հայտնվել այդտեղ, քաղաքապետարանը հրաժարվել էր որևէ մեկնաբանություն տալ: Ուսումնասիրող Բարս Թուղլաճին[42] իր «Պալյանների ընտանիքը» ուսումնասիրության մեջ հիշատակում է, որ Կ. Պալյանը թաղված է Պեշիկթաշի հայոց գերեզմանատանը: Այս տեղեկության կողքին կցում է շիրմաքարի լուսանկարը՝ նշելով, որ տապանաքարերն այժմ կորսված են: Նմանօրինակ է Փանկալթիի երբեմնի հայոց գերեզմանատունը, որի մարմարյա շիրմաքարերը որպես սալահատակ գործածվել են պանդոկների, Ստամբուլի ռադիոկայանի և այլ վայրերի շինարարության մեջ[43]:

Մեր կատարած ուսումնասիրությունները թույլ են տալիս այդ հարցի շուրջ որոշակի պարզաբանումներ անել՝ մեջբերելով Կ. Պոլսում տպագրված թերթերից մեկում առկա նյութը. «Կառավարութիւնը որոշած է Փանկալթիի հայոց գերեզմանատունը «իսթիմլիք» (պետականացնել) ընել...»[44]: Ավելի ուշ թուրքական «Sabah» թերթը հրապարակում է «Ստամբուլի հնագույն ընտանիքները» խորագրով ցանկ, որում տեղ են գտել նաև հայազգի Պալյանները: Նշվում է, որ Կ. Պալյանը կառուցել է 7 պալատ, 4 գործարան, 1 մզկիթ, 2 հիվանդանոց, 3 դպրոց, 2 ջրամբար, 7 եկեղեցի[45]: Թուրքական «Dünya Bülteni» լրատվականի փոխանցմամբ՝ Ստամբուլի Սկյուտար թաղամասի Սուրբ Խաչ հայկական գերեզմանոցի տարածքում բացվել է Պալյանների ընտանիքի հուշահամալիրը, որտեղ էլ 2020 թ. ՀՃՈՒ հիմնադրամի արշավախումբը տեսել է Կ. Պալյանի տապանաքարը:

Ժա. Ծովինար Լոքմակէօզեան, **«Առանց Արցախի չկայ Հայաստան, ինչպէս չկայ Արցախ առանց Հայաստանի»**[46].

Հոդվածագիրը շրջագայության ընթացքում Արցախի Ասկերանի շրջանի Դաշուշեն գյուղում տեսել

40 **Սերովբեան Ս.**, Քարեղէն քաղաքը՝ Բաղէշ կամ Պիթլիս, «Ակօս», 2015, № 974, 2 յունուարի, էջ 4:

41 **Կիւլթէքին Ու.**, Շրջուն շիրմաքարեր, «Ակօս», 2015, № 977, 23 յունուարի, էջ 1:

42 Բարսեղ Միքայելի Թուղլաճյան, հայ բանասեր: Թուրքական մամուլում և գրականության մեջ տպագրվել է Բարս Թուղլաճի գրական անվամբ:

43 **Կիւլթէքին Ու.**, նշվ. հոդվ., էջ 1:

44 «Ազատամարտ», 1911, № 761, 3/16 դեկտեմբերի, էջ 3:

45 **Tanielyan T.**, «Sabah», 2016, № 12:

46 **Լոքմակէօզեան Ծ.**, Առանց Արցախի չկայ Հայաստան, ինչպէս չկայ Արցախ առանց Հայաստանի, «Ակօս», 2015, № 975, 9 յունուարի, էջ 3:

Կարապետ Պալյանի տապանաքարը (լուս.՝ Ա. Հակոբյանի (ՀՃՈՒ), 2020 թ.)

Դաշուշենի աղբյուրի արձանագրությունը (լուս.՝ արտատպ. Լոքմակէօզեան Ծ., նշվ. հոդվ., էջ 3)

Մամիկոնյան վարժարանի զանձանակը (լուս.՝ արտատպ. Տատուրեան Ն., նշվ. հոդվ., էջ 4)

Գանձանակ (լուս.՝ արտատպ. Մանուկեան Մ., նշվ. հոդվ., էջ 1)

է սրբատեղի դարձած աղբյուր[47]: Հոդվածում առկա լուսանկարի հիմամբ փորձեցինք վերծանել աղբյուրի և դրան կից օրորոցաձև տապանաքարի արձանագրությունները:

Աղբյուր. արձանագրությունն է.

Թ.: | Սա | յիշատակ է. | ո՞վ ուխտաւորք, վայել|էցէք ստրկիս, ողորմի | ասացէք, 1861 ամին:

Ուղղանկյունաձև տապանաքար՝ վերաօգտագործված աղբյուրի կառուցման ժամանակ.

Տապան հանգուցե(ա)լ լո|ւսահոգի ս(է)ր Յոհաննէսի|ն Թառումե(ա)նց, վաղջ(ա)նե(ա)ց | 1872:

ժբ. Նորայր Տատուրեան, **«Բառերու խորհրդաւոր աշխարհը»**[48].

Ծառատունկ իրականացնելու նպատակով դրպրոցում դրամահավաք է կազմակերպվում, որի համար հնավաճառ Մուրադից պղնձե զանձանակ են գնում[49՝] հայերեն հետևյալ արձանագրությամբ.

Գանձանակ | ի նպաստ | Մամիկոնեան երկ(սեռ) վարժարանաց, | 1909, նոյ(եմբեր) 14 | Նոր – Գիւղ:

ժգ. Միհրան Մանուկեան, **«Վաքըֆլը գիւղի թանգարանը կը գործէ»**[50].

47 **Լոքմակէօզեան Ծ.**, նշվ. հոդվ., էջ 3:

48 **Տատուրեան Ն.**, Բառերու խորհրդաւոր աշխարհը, «Ակօս», 2017, № 1093, 12 մայիսի, էջ 4:

49 Նույն տեղում:

50 **Մանուկեան Մ.**, Վաքըֆլը գիւղի թանգարանը կը գործէ, «Ակօս», 2020, № 1249, 12 յունիսի, էջ 1:

Հատված Քասաբամոնուի գերեզմանոցից (լուս.՝ արտատպ. Սոյտան Է., նշվ. հոդվ., էջ 2)

Մուսա լեռան հայաբնակ պատմական Վաքըֆլը գյուղում 2020 թ. բացվում է թանգարան, որտեղ ներկայացվում են իրեր տեղի երբեմնի հայաբնակ յոթ գյուղերից: Դրանցից են՝ գանձանակ, կոճակներ, որոնց վրա հայերեն արձանագրություններ կան[51].

... | 1911 | Աղքատաց գանձանակ:

ժդ. Էրսոյ Սոյտան, **«Քասաբամոնուի հայոց գերեզմանատունը»**[52].

Քասաբամոնու քաղաքի Սեյրանթեփե կոչվող վայրում կան գերեզմանոցներ, որոնցից մեկը հայկական է: Հոդվածագիրն ուշագրավ է համարում շիրմաքարերի վրա հայերեն անունների տակ գրված «Ռուհունա Ֆաթիհա» գրառումը, որը մահմեդականներին հատուկ երևույթ է և թարգմանաբար նշանակում է «Տեր ողորմյա»[53]:

Ի տարբերություն հայկական այլ գերեզմանատների՝ այստեղ մինչև վերջերս էլ թաղումներ են արվում[54]: Սակայն թերթում առկա տապանաքարերի լուսանկարներից և ոչ մեկում չկա «Ռուհունա Ֆաթիհա» գրությունը, որը ոչ թե նշանակում է «Տեր ողորմյա», այլ՝ «Հոգուն Ֆաթիհա» (հատված Ղուրանից):

Այսպիսով՝ փորձենք սույնով ամփոփել մեր վիմագրագիտական պրպտումներն «Ակօս»-ում: Պահպանված արձանագրությունները վկայում են և՛ Կ. Պոլսում, և՛ Արևմտյան Հայաստանում հայկական հետքերի գոյության մասին անգամ մի քանի տասնամյակ տևող մշակութային եղեռնի առկայության պայմաններում: Ցրված[55] և կորսված վիմագրերը մեկտեղելով, դրանց մասին կրկին խոսելով՝ ցանկանում ենք պարզել որոշ անճշտություններ՝ կապված վերծանությունների և վիմագրերի՝ ներկայիս տեղադրության հետ: Այս ուսումնասիրության համար հիմք են եղել այն հոդվածները, որոնց հեղինակներն անդրադարձել են մեր մշակութային ժառանգությանը և պահանջել արժանապատիվ հիշատակում:

51 Նույն տեղում:

52 **Սոյտան Է.**, Քասաբամոնուի հայոց գերեզմանատունը, «Ակօս», 2022, № 1344, 22 ապրիլի, էջ 2:

53 Նույն տեղում:

54 Նույն տեղում:

55 Վտանգված արձանագրությունները գոնե թղթի վրա փրկելու խնդրի լուծմանն է ծառայում նաև Ռ. Քորթոշյանի՝ «Վարձք» հանդեսում հրատարակված «Փրկված մասնիկներ հոշոտված մշակույթից» հոդվածաշարը (տե՛ս «Վարձք», № 15, էջ 19-25; № 17, էջ 52-54; № 18, էջ 52-55; № 19, էջ 1-8; № 20, էջ 31-37):

ԽՆՁՈՐԵՍԿԻ ՍԲ. ՀՌԻՓՍԻՄԵ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՎԱՆԴԱՏԱՆ ՔԵՐԾԱՊԱՏԿԵՐՆԵՐՆ ՈՒ ՔԵՐԾԱԳՐԵՐԸ

Ռաֆֆի Քորթոշյան

Սբ. Հռիփսիմե եկեղեցին (լուս.՝ հոդվածագրի (ՀՃՈՒ), 2024 թ.)

Պատմական ճարտարապետական հուշարձանների՝ համեմատաբար շուտ քայքայվող և հետևապես հաճախակի նորոգվող հատվածներից է ներքին որմերի սվաղը: Այդ շերտի վրա են հիմնականում արվել որմնանկարները և ներկագիր արձանագրությունները, որոնք, շնորհիվ իրենց մշակութային և պատմական բացառիկ արժեքի, մշտապես գտնվել են ուշադրության կենտրոնում և համեմատաբար ավելի լավ պահպանվել, քան նույն շերտի վրա արված հատկապես ԺԸ-Ի դդ. անկումային արվեստի քերծապատկերները և արձանագրությունները (մատիտագիր կամ քերծագիր):

Սույն հրապարակմամբ ներկայացնում ենք Հին Խնձորեսկի[1] (ՀՀ, Սյունիքի մարզ, Գորիս համայնք, Խնձորեսկ գյուղ) Սբ. Հռիփսիմե (1663 թ.) եկեղեցու

Եկեղեցու հյուսիսային ավանդատան հարավային որմը (լուս.՝ հոդվածագրի, 2024 թ.)

1 Գյուղը 1874 թ. ուներ *500* տուն բնակիչ (**Տէր-Յովսէփեան Յ.**, Խնձորէսկ, «Մեղու Հայաստանի», 1874, № 33, 24 օգոստոսի, էջ 3), 1886 թ.՝ *634* (ՀԱԴ, ֆ. 47, ց. 1, գ. 345, թ. 59) 1889 թ.՝ *800* («Նոր-Դար», 1889, № 135, 17 օգոստոսի, էջ 2; № 143, 30 օգոստոսի, էջ 3: **Մելիք-Թանգ. Ն.**, թղթակցություն, «Նոր-Դար», 1889, № 203, 8 դեկտեմբերի, էջ 3), 1890 թ.՝ *900* (**Կ. Ս.**, թղթակցություն, «Նոր-Դար», 1890, № 191, 4 դեկտեմբերի, էջ 2) տուն բնակիչ: Նույն թվականին հիշվում է նաև *606* տուն (**Գէորգ-Բէգեան Բ.**, թղթակցություն, «Նոր-Դար», 1890, № 207, 27 դեկտեմբերի, էջ 3), 1891 թ.՝ մոտ *600* (**Մ. Թանգ. Ն.**, Շուշուց դէպի Հին-Նախիջեւան, «Նոր-Դար», 1891, № 158, 31 հոկտեմբերի, էջ 2), 1895 թ.՝ *700* (ՀԱԴ, ֆ. 47, ց. 1, գ. 345, թ. 59), 1897 թ.՝ *800* (**Միւնեցի Լ.**, Գիւղական ցաւերից, «Ժայռ», 1908, № 89, 30 նոյեմբերի, էջ 2), 1909 թ.՝ *1100* (**Յոմսէ**, Գիւղի իրականութիւնից, «Ժայռ», 1909, № 17, 5 մարտի, էջ 3), 1912 թ.՝ *1200* (**Սազանդարեան**, Գիւղի իրականութիւնից, «Դարաբաղ», 1912, № 6, 22 յունուարի, էջ 4: Տե՛ս նաև ՀԱԴ, ֆ. 56, ց. 1, գ. 11608, թ. 192 շրջ.-193), 1914 թ.՝ *1500* («Հայաստանի կոչնակ», 1927, № 34, 20 օգոստոսի, էջ 1081), 1915 թ.՝ *1600* (**Ա. Մելք.**, Զանգեզուրի կեանքից, «Փայլակ», 1915, № 25, 4 յունիսի, էջ 4), 1916 թ.՝ *1300* (**Աւ. Գ.**, Ահաբեկ գաւառը, «Հորիզոն», 1916, № 218, 30 սեպտեմբերի, էջ 1), 1917 թ.՝ *1200* (**Սազանդարեան**, Տեղեկատու Զանգեզուրի, «Մշակ», 1917, № 222, 19 հոկտեմբերի, էջ 3), 1923 թ.՝ մոտ *1050 տուն՝ 4200 բն.* («Հայաստանի կոչնակ», 1927, № 34, 20 օգոստոսի, էջ 1081), իսկ 1926 թ.՝ մոտ *675 տուն՝ 2700* բնակիչ («Հայաստանի կոչնակ», 1927, № 34, 20 օգոստոսի, էջ 1081): Հին գյուղը լքվել է, իսկ նոր Խնձորեսկը հիմնվել է 1950-ական թթ.:

հյուսիսային ավանդատան հարավային որմի սվաղի շերտի վրա հավանաբար հոգևորականների կողմից արված և երբևէ ուշադրության չարժանացած ԺԸ-ԺԹ դդ. հիշատակագրությունները, քերծապատկերները և ուսումնական գծագրերը[2]:

Զարդերի ստեղծման տեխնիկայի առումով հատկապես հետաքրքրական են ուսումնական գծագրերը, որոնք եկեղեցու շքամուտքի և լուսամուտների զարդերի կրկնօրինակման փորձեր են:

Երկրորդիվ ուշագրավ են մարդկանց և կենդանիների պատկերները: Դրանցից որոշներին կից առկա

Եկեղեցու հարավային շքամուտքը և հատված զարդերից (լուս.՝ հոդվածագրի, 2024 թ.)







Շքամուտքի զարդերի կրկնօրինակման փորձերը (լուս. և գրչ.՝ հոդվածագրի, 2024 թ.)

Հատված լուսամուտի զարդերից (լուս.՝ հոդվածագրի, 2024 թ.)







Լուսամուտի զարդերի կրկնօրինակման փորձերը (լուս. և գրչ.՝ հոդվածագրի, 2024 թ.)

2 Քերծապատկերներն ու քերծագրերը նկատել ենք 2024 թ. մայիսին՝ Սբ. Հռիփսիմե եկեղեցու վերականգնման նախագծի (հովանավոր՝ Save Armenian Monuments կազմակերպություն, իրականացնող՝ «Վիմակերտ» ՍՊԸ) պատրաստման դաշտային աշխատանքների ժամանակ:

Քերծապատկերները (լուս. և գրչ.՝ հոդվածագրի, 2024 թ.)



Քերծապատկերները (լուս. և գրչ.՝ հոդվածագրի, 2024 թ.)



Քերծապատկերին կից արձանագրություն *ա* (լուս. և գրչ.՝ հոդվածագրի, 2024 թ.)

են արձանագրություններ: Մի մասում աշխարհիկ մարդիկ են, մեկը՝ Աղաթոնը, իսկ մեծամասնությունը՝ հոգևորականներ՝ փիլոնով, վեղարով և կրծքախաչով զգեստավորված: Երկու ձիավորներից մեկը, ըստ արձանագրության, սուրբ Գևորգն է, իսկ մյուսի արձանագրությունը հիմնականում ոչնչացված է, հնարավոր է տեսնել միայն թվականը՝ 1766 թ.:

ա. *Ես՝ Աղաթոնը:*

բ. *...էր ը...: | Թվ(ին) ՌՄԺԵ (1766 թ.): | Ի... խը...: | Ես ...ա... | ...ե...:*

գ. *Ս(ուր)բ Գէորգ:*

Պատմական հատուկ կարևորություն ունի 1830 թ. ձեռնադրված քահանայի արձանագրությունը, որ-

Քերծապատկերին կից արձանագրություն բ (լուս. և գրչ.՝ հոդվածագրի, 2024 թ.)

Քերծապատկերին կից արձանագրություն գ (լուս. և գրչ.՝ հոդվածագրի, 2024 թ.)

տեղ հիշվում է Սբ. Հռիփսիմե եկեղեցում ԺԹ դարում[3] պաշտոնավարած քահանաներից[4] մեկի անունը՝ տեր Սարգիս[5]: Վերջինս, ամենայն հավանակա-



Տեր Պետրոսի և տեր Քասպարի տապանաքարերը և տեր Սարգսի արձանագրությունը (լուս. և գրչ.՝ հոդվածագրի, 2024 թ.)

նությամբ, 1874 թ.-ից եկեղեցու քահանա հիշվող տեր Մարտիրոս Տեր-Սարգսյանի[6] հայրն է:

դ. *Ես՝ Սարգիս նորընծաս, որ օրհնե(ա)լն են ՌՄՀԹ (1830 թ.):*

Հավելենք, որ Սբ. Հռիփսիմե եկեղեցու նորոգման նախագիծը[7] հաստատվել է 2025 թ., և շուտով կսկսվեն աշխատանքները, իսկ ԺԸ-ԺԹ դդ. քերծապատկերներով ավանդատան պատն այցելուների համար հետաքրքիր անկյուն կդառնա:

3 Հարկ է նշել, որ եկեղեցու բակում առկա տապանագրերից հայտնի են դառնում նաև ԺԸ դարում քահանայագործած երկու քահանաների անունները՝ տեր Պետրոս (*Տապանս Ղարախանի որդի տ(է)ր | Պետրոսին, թվ(ին) ՌՃԿԲ (1713 թ.)* և տեր Քասպար *(Այս է տապան Մելքումի որդի | տ(է)ր Քասպարին, թվ(ին) ՌՄԼԱ (1782)-ին)*:

4 1842 թ. եկեղեցում քահանայագործում էին տեր Գասպար Մելքումյանը, Գալուստ Տեր-Մինասյանը, Սարգիս Գասպարյանը, Հարություն Լալազարյանը, Սարգիս Ալիխանյան Կարագյոզյանը և Բաղդասար Հովհաննիսյանը (ՀԱԴ, ֆ. 56, ց. 12, գ. 69): 1874 թ. քահանայագործում էին տեր Մկրտիչ Տեր-Օհանյանը, տեր Մովսես Տեր-Հարությունյանցը, տեր Մարտիրոս Խաչատուրյանցը և տեր Մարտիրոս Տեր-Սարգսյանցը (ՀԱԴ, ֆ. 93, ց. 1, գ. 384, թ. 506-507): 1883 թ. պաշտոնավարում է նաև տեր Դավիթ Տեր-Հարությունյանցը (ՀԱԴ, ֆ. 56, ց. 1, գ. 6012, թ. 53 շրջ.): 1895 թ. քահանայագործում էին տեր Մարտիրոս Խաչատուրյանը, Մարտիրոս Տեր-Սարգսյանը և տեր Դավիթ Տեր-Հարությունյանը (ՀԱԴ, ֆ. 47, ց. 1, գ. 345, թ. 59), իսկ 1912 թ.՝ Դավիթ Տեր-Հարությունյանցը, Հովսեփ Տեր-Հարությունյանցը և Հարություն Տեր-Մարտիրոսյանցը (ՀԱԴ, ֆ. 56, ց. 1, գ. 11608, թ. 256): 1917 թ. եկեղեցու հոգևոր հովիվ է հիշվում տեր Հարություն Տեր-Մարտիրոսյանը («Արարատ», Էջմիածին, 1917, № Բ-Գ, փետրուար-մարտ, էջ 94): Խորհրդային տարիներից ի վեր եկեղեցին այլևս չի գործում:

5 Ազգանունը Գասպարյան է: Ծնվել է 1800 թ., քահանա է ձեռնադրվել 1830 թ. (ՀԱԴ, ֆ. 56, ց. 12, գ. 69): Եկեղեցու քահանա է հիշվում նաև 1844 թ. (ՀԱԴ, ֆ. 56, ց. 6, գ. 81):

6 Ծնվել է 1841 թ., քահանա է ձեռնադրվել 1871 թ.: Որպես եկեղեցու քահանա՝ հիշվում է 1874 և 1895 թթ. (ՀԱԴ, ֆ. 93, ց. 1, գ. 384, թ. 506-507: Տե՛ս նաև ՀԱԴ, ֆ. 47, ց. 1, գ. 345, թ. 59):

7 Նախագիծը մշակել է վերականգնող ճարտարապետ Աշոտ Հակոբյանը:

ՆՊԱՏ ԼԵՌԱՆ ԳԱԳԱԹԻ ՎԱՆՔԸ

Աշոտ Հակոբյան

Նպատ լեռը հյուսիսից (լուս.՝ Ս. Դանիելյանի (ՀՃՈՒ), 2025 թ.)

Անհիշելի ժամանակներից Նպատը հայերի համար ամենասրբազան լեռներից է: Նրա ստորոտին՝ Արածանիի ափին են կատարվել նավասարդյան տոնակատարությունները, որի մասին Հայկ Ասատրյանը նշում է. «Հին հայերի Նաւասարդ նշանաւոր աւուր հանդիսավայրն Այրարատ նահանգի Բագրեւանդ (Ալաշկերտ) գաւառի Բագաւան կամ Դիցաւան մեհենական աւանն էր: Բագաւանը գտնւում էր Ձիրաւ լեռնադաշտում՝ Արածանի գետի անմիջական եզրին և Նպատ կոնաձև լերան ստորոտում»[1]:

Նպատի ստորոտի մոտ գտնվող պատմական Բագավան բնակավայրի անունն իսկ հուշում է, որ այնտեղ եղել են հեթանոսական կուռքեր և մեհյաններ: Հավելենք, որ 2025 թ.՝ մեր այցելության ժամանակ, լեռան գագաթին՝ վանքի տարածքում, միջնադարյան խեցեղենից զատ, հայտնաբերել ենք նաև անտիկ[2] ժամանակաշրջանի խեցեղեն:

Հայաստանում քրիստոնեությունը որպես պետական կրոն ընդունելու սկզբնական ժամանակաշրջանում Տրդատ Գ Մեծ արքան (287-330 թթ.) և Սուրբ Գրիգոր Լուսավորչը հանդիպում են Նպատ լեռան ստորոտում: Այդ մասին Ագաթանգեղոսը գրում է. «Լսեց ապա և մեծ թագավոր Տրդատը, որ

Խեցեղեն Նպատ լեռան գագաթին՝ վանքի տարածքում (լուս.՝ Ր. Քորթոշյանի (ՀՃՈՒ), 2025 թ.)

Գրիգորը եկել հասել է մեր Հայոց երկիրը: Առավ իր զորքը, Աշխեն տիկնոջը և իր քույր Խոսրովիդուխտին ու չվեց Այրարատյան գավառից, Վաղարշապատ քաղաքից՝ Գրիգորին ընդառաջ: Եկավ հասավ Բագավան գյուղաքաղաքը, որը պարթևերեն կոչվում է Դիցավան...»[3]: Նրանց հանդիպումից որոշ ժամանակ անց Գրիգոր Լուսավորիչն Արածանի գետում մկրտում է Տրդատ Մեծին, արքունիքին և բանակին. «...երբ լրացավ պաս կատարելու տրված

1 **Հ. Ա.**, Հայոց Նաւասարդականը, «Տարոնի արծիւ», 1938, № 3-4, յունիս-յուլիս, էջ 26: Նաև՝ **Ասատրյան Հ.**, Հատընտիր, Երևան, 2004, էջ 78:

2 Խեցեղենի թվագրումը՝ պրոֆ. դոկ. Համլետ Պետրոսյանի:

3 **Ագաթանգեղոս**, Հայոց Պատմություն, Երևան, 1981, էջ 457:

Նպատ լեռան հյուսիսային ստորոտով հոսող Արածանի գետը, որտեղ Լուսավորիչը մկրտեց Տրդատ Մեծին (լուս.՝ Ս. Դանիելյանի, 2025 թ.)

ժամկետը, երանելի Գրիգորը առավ աշխարհաբանակ զորքը և իրեն՝ թագավորին, նրա տիկին Աշխենին, մեծ օրիորդ Խոսրովիդուխտին, ամենայն մեծամեծներին և բանակի բոլոր մարդկանց, առավոտյան այգը լուսանալուն պես, Եփրատ գետի ափը տարավ և այնտեղ մկրտեց...»[4]: Մկրտությունից հետո լեռան հյուսիսային լանջին Լուսավորիչը կառուցում է եկեղեցի, որտեղ էլ ամփոփում է Հովհաննես Մկրտչի մասունքները. «Այնտեղ հիմքեր դրեց, եկեղեցի շինեց ու սրբերի ոսկորների նշխարները, որ ուներ, տեղավորեց տերունական տանը»[5]:

Է դարում լուսավորչաշեն եկեղեցու տեղում Հերակլ կայսեր (մոտ 575–641) պատվերով կառուցվում է Մեծ Հայքի ամենամեծ եկեղեցիներից մեկը, որն ուներ գմբեթավոր բազիլիկ հորինվածք: Հետագայում այն պարսպապատվում է և դառնում Բագրևանդ գավառի առաջնորդանիստ վանքը՝ Սբ. Հովհաննես անվամբ:

Նպատ լեռը հիշվում է նաև Պապ թագավորի (353-374 թթ.) օրոք՝ հայ-բյուզանդական միացյալ բանակի և պարսից զորքի միջև նրա հյուսիսային կողմում՝ Ձիրավի դաշտում տեղի ունեցած ճակատամարտի առնչությամբ: Մովսես Խորենացին ճակատամարտի սկիզբն այս ձևով է նկարագրում. «Իսկ երբ արևը ծագեց մեր զորքերի դեմ ու դեմ, պղնձապատ վահանների ցոլքը լեռների վրա էր փայլատակում, ինչպես մեծ ամպից...»[6]: Այստեղ՝ դաշտավայրում, հայկական զորքի դիրքի նկարագրությունը համապատասխանում է Նպատ լեռան հյուսիսային կողմում տարածվող դաշտավայրի հետ, որտեղ հայկական բանակը դիրքավորվել էր Արածանիի աջակողմյան վտակի աջ ափին: Այդ տեղանքում դիրքավորված հայոց զորքի առջևում արևելքն է: Պապ թագավորը և Ներսես Մեծը (մոտ 329–373 թթ.) ճակատամարտին հետևում էին Նպատ լեռան գագաթից, որտեղից երևում էր ամբողջ դաշտավայրն իր շրջակայքով: Այդ մասին պատմահայրը նշում է. «Երբ մեծն Ներսես այս բոլորը տեսավ, բարձրացավ Նպատ լեռան գլուխը և ձեռները դեպի երկինք բարձրացրեց և առանց իջեցնելու աղոթք էր անում, նախամարգարե Մովսեսի նման, մինչև երկրորդ Ամաղեկը պարտություն կրեց»[7]:

Փավստոս Բուզանդը Ձիրավի ճակատամարտին (371 թ.) նախապատրաստվելու մասին գրում է. «Այն ժամանակ հայոց Պապ թագավորն էլ հրամայում է զորաժողով անել Բագավանում: Հունաց զորքն էլ, որ գտնվում էր Եռանդում ու Բախիշում, եկավ, միասին հավաքվեցին Պապ թագավորի մոտ, իրենց բանակի շուրջը փոս կտրեցին Նպատ լեռան մոտ, Եփրատ գետից ոչ հեռու. կազմակերպվեցին, պատրաստվեցին ճակատամարտի»[8]: Այնուհետև

4 Նշվ. աշխ., էջ 465:

5 Նշվ. աշխ., էջ 463:

6 **Մովսես Խորենացի**, Հայոց Պատմություն, Երևան, 1981, էջ 275:

7 Նույն տեղում: Գրեթե նույնությամբ կրկնվում է նաև Բուզանդի մոտ. «Իսկ Պապ թագավորն ու Ներսես եպիսկոպոսապետը կանգնած մնացին Նպատ լեռան վրա, և սուրբ Ներսեսը իր մշտատարած ձեռքերը երկինք բարձրացնելով խնդրում էր տիրոջից...» (**Փավստոս Բուզանդ**, Պատմություն հայոց, Երևան, 1968, էջ 236):

8 **Փավստոս Բուզանդ**, էջ 235:

Բագրևանդի Սբ. Հովհաննես վանքը հարավ-արևմուտքից (լուս.՝ անհայտ հեղինակի, 1900-ական թթ.)

շարունակում է. «Դու, արքա՛, արա, ինչ որ ասում ենք քեզ. ա՛ռ Ներսես եպիսկոպոսապետին, գնա՛ Նպատ լեռը, մի ամուր անվտանգ տեղ նստի՛ր, և թող Ներսես եպիսկոպոսապետը աղոթք անի և խնդրի աստծուց, որ մեզ հաղթություն տա: Այնտեղից բարձրից կնայես և կտեսնես մեր ջանքերն ու աշխատանքը պատերազմի ընթացքում, ամեն մեկի քաջությունն ու երկչոտությունը, որ քո առաջ կկատարվեն: Պապ թագավորը համաձայնվեց այս խոսքերին, իր հետ վերցրեց Ներսես քահանայապետին և ելավ նստեց Նպատ լեռան վրա...»[9]: Ճակատամարտի ավարտի մասին էլ նշում է. «Այսպես, լեռան վրա կանգնած, այս և սրանց նման և էլ ավելի բաներ խոսեց (Ներսեսը), մինչ թագավորի հետ կանգնած էր լեռան վրա, բազմաթիվ ու տեսակ-տեսակ աղոթքներ էր անում մինչև երեկո՝ արեգակի մայր մտնելը, մինչև կռիվը վերջացավ»[10]:

Նպատ լեռը հիշատակում է նաև Ղազար Փարպեցին 482 թ. Բագավանում սեպուհ Յազդ Սյունիի նահատակության առնչությամբ. «Անօրեն դատավորները սուրբ Յազդից լսեցին այս խոսքերը և հրամայեցին երանելու գլուխը կտրել առաքելանման նահատակ սուրբ Գրիգորի մատուռին մոտիկ մի վայրում, Բագավան կոչված գյուղում, որ Բագրևանդ նահանգում է, Նպատ կոչված լեռան լանջին, սուրբ մատուռի տեղից երկու քարընկեց հեռու: Սյունյաց սուրբ սեպուհ Յազդը նահատակության իր վախճանը գտավ Հոռի ամսվա տասնվեցին, և նրա նշխարներն ամփոփելով, դրին այնտեղ՝ սուրբ Գրիգորի մատուռի մեջ»[11]:

Խորենացու, Բուզանդի և Փարպեցու նկարագրություններում չի նշվում Նպատի գագաթին գտնվող որևէ սրբավայրի՝ եկեղեցու կամ վանքի գոյության մասին: Հավանաբար այստեղ եկեղեցի կառուցվել է հետագայում՝ ի հիշատակ Ձիրավի ճակատամարտի ընթացքում հայոց բանակի հաղթանակի համար Ներսես Մեծի մեկօրյա ճգնության և աղոթքի:

Հետագա դարերում պատմիչների մոտ այլևս Նպատ լեռը չի հիշատակվում, իսկ վանքի մասին առաջին հիշատակությունները գտնում ենք միայն ԺԹ-Ի դարերի տեղագիր հեղինակների մոտ:

Տեղանունների բառարանում Նպատ լեռան գագաթի սրբավայրն այսպես է նկարագրված. «Լեռան գագաթին գտնվում են **երկու մատուռներ**, իսկ ստորոտում՝ Ս. Լուսավորիչ վանքի ավերակները»[12]: Այսպիսով՝ լեռան գագաթին հիշատակվում են միայն **երկու մատուռները**, իսկ լեռան ստորոտի Սբ. Հովհաննես մեծ վանքը կոչվում է Սբ. Լուսավորիչ:

Սարգիս Հայկունին Բագրևանդի Սբ. Հովհաննես վանքի և Նպատ լեռան գագաթի սրբավայրի մասին գրում է. «Այս հռչակաւոր վանքի դիրքն հոյակապ շինուածքը որմերու վերայ եղած արձանագրութիւնք, շրջակայ աւերակներն, հետաքրքրական հին արձանագրութիւններն, Բագուանայ վայ-

9 Նշվ. աշխ., էջ 236:

10 Նշվ. աշխ., էջ 240:

11 **Ղազար Փարպեցի**, Հայոց պատմություն, Երևան, 1982, էջ 343:

12 **Հակոբյան Թ.**, **Մելիք-Բախշյան Ս.**, **Բարսեղյան Հ.**, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 4, Երևան, 1998, էջ 34:

Ձիրավի դաշտը Նպատ լեռան գագաթից (լուս.՝ Ս. Դանիելյանի, 2025 թ.)

րի ծանօթութիւն, **Նպատայ գագաթն գտնուած եկեղեցին և Մեծն Ներսիսի աղօթատեղին**, վանքի կալուածոց տարածութիւնը և մի անգամ Պարսից և Օսմանցոց պատերազմին վանքիս մէջ անցած դէպքերն, որք շատ հետաքրքրական են և յատուկ առանձին նկարագրութեան են կարօտ»[13]: Հեղինակը լեռան գագաթին նշում է **մեկ եկեղեցու և Ներսես Մեծի աղոթատեղիի**՝ հավանաբար երկրորդ մատուռ-սրբավայրի մասին:

Կարնո նահանգի Բայազետի հայոց առաջնորդարանի 1903 թ. տեղեկագրերից մեկում լեռան գագաթի վանքն առավել մանրակրկիտ է նկարագրվում. «Ս. Յովհաննու անուամբ ծանօթ Ս. Երրորդութիւն վանքէն 20 վայրկեան հեռու դեպի հարաւ Նպատ լեռան գագաթն է **Ս. Յովհաննու վանքը**, որ **Մեծին Ներսէսի ճգնարան** անուամբ ծանօթ է, քարաշէն և կիսաւեր, ունի առանձին ճգնարաններ, քարաշէն գետնադամբարաններ և ստորերկրեայ քարաշէն բնակարաններ, իսկ Ս. Երրորդութեան վանքէն դէպի հիւսիս, Սև լեռան ստորոտը՝ Իւչ-Քիլիսէից 20 վայրկեան հեռու՝ կայ Ամենափրկիչ եկեղեցին՝ կիսաւեր: Սոյն 3 սրբավայրերը միևնոյն գծի վրայ գտնուելուն գիւղը Իւչ-Քիլիսէ անուամբ կը յորջորջուին»[14]: Հեղինակը Նպատ լեռան գագաթի վանքն անվանում է **Սբ. Հովհաննես**, իսկ լանջի մեծ վանքը՝ Սբ. Հովհաննես և Սբ. Երրորդություն:

Արմեն Սասունին Նպատի գագաթի սրբավայրի մասին նշում է. «...Նպատ լեռան ստորոտում, Եփրատի ձախ ափին կառուցած է հոյակապ և պատկառելի Իւչ-Քիլիսէյի (ս. Յովհաննու) վանքը: Նպատ լեռան գագաթում գտնուում է **Յովհաննէս Սկրտիչի գերեզմանը**, ուխտատեղին Ալաշկերտի ժողովուրդին: Նպատ լեռան ստորոտուն Իւչ-Քիլիսէից 50 քայլ հեռու, գտնուում է Բագաւանը...»[15]: Հեղինակը Նպատ լեռան գագաթին միայն հիշատակում է ալաշկերտցիների ուխտատեղի Հովհաննես Սկրտչի գերեզմանը:

Տեղագիր հեղինակների նկարագրություններից պարզվում է, որ Նպատ լեռան ստորոտի հռչակավոր Սբ. Հովհաննես վանքից[16] բացի՝ լեռան գագաթին գոյություն է ունեցել Սբ. Հովհաննես անվամբ ևս մի վանք, որը հայտնի էր նաև Ներսես Մեծի ճգնարան անվամբ: Վանքը բաղկացած էր եկեղեցուց և մատուռ-դամբարանից, ինչպես նաև օժանդակ այլ շինություններից:

Նպատի գագաթի վանքը, ցավոք, երբևէ չի ուսումնասիրվել: Այն հավանաբար ավերվել է առաջ-

13 **Հայկունի Ս.**, Բագրեվանդ. Ջրաբաշխ գավառ, Էջմիածին, 1894, էջ 277-278:

14 Եղիշե Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան (ԳԱԹ), 53, III, թ. 32 (Վիճակագրական տեղեկութիւն Պայազտի առաջնորդութեան 1903 թ.): Տե՛ս նաև «Վարդք», 2024, № 20, էջ 5:

15 **Արմէն Սասունի**, Իգդիրից-Մուշ, «Աշխատանք», 1916, № 51, 26 հոկտեմբերի, էջ 3-4:

16 Նշենք, որ Նպատի լանջի Բագրևանդի Սբ. Հովհաննես պարբսպապատ մեծ վանքը հիմնահատակ ավերվել է 1950 թ., որի քարերով կառուցվել է Ալաշկերտի դաշտավայրի կենտրոնում գտնվող Աղրը քաղաքի Ուլու ջամի անվամբ մզկիթը: Այս մասին Նեջդաթ Այհանը գրում է. «Հայերի կառուցած վանքը 1950 թ. քանդել և քարերը օգտագործել են Աղրըյի կետրոնական մզկիթի կառուցման համար» (**Ayhan N.**, Ağrı kültür ve turizim rehberi, Van, s. 23): 2013 թ. այդ մզկիթը ևս քանդում են և տեղում կառուցում նորը: Այժմ մեզ անհայտ է Բագրևանդի Սբ. Հովհաննես վանքի քարերի ճագատագիրը:



Նպատ լեռան քարքարոտ գագաթը վանքի հետ միասին արևմուտքից, արևելքից և վանքի հատակագիծը (լուս.՝ Ս. Դանիելյանի, չափ.՝ հոդվածագրի, 2025 թ.)

նորդանիստ վանքի կործանման ժամանակաշրջանում:

2025 թ. ՀԵՌԻ հիմնադրամի մեր արշավախումբը Բագրևանդի վանքատեղին այցելելուց հետո բարձրացավ նաև Նպատ լեռ: Առաջին անգամ փորձեցինք մանրակրկիտ հետազոտել համալիրը, որի քննությունն էլ ներկայացնում ենք ստորև:

Պատմիչների նկարագրության համաձայն՝ երևում էին լեռան հյուսիսային կողմում տարածվող Ձիրավի դաշտն ամբողջությամբ և հարակից հարթավայրերը: Ըստ այդմ՝ այդտեղից հնարավոր էր հետևել Ձիրավի ճակատամարտի ողջ ընթացքին: Բուզանդի պատմության մեջ Նպատ լեռան մասին բնութագրվող «ամուր անվտանգ տեղ» արտահայտությունը, իրոք, հավաստի է, քանի որ գագաթն ամբողջովին պատված է հարավ-արևմուտք–հյուսիս-արևելք ձգվող ապարների ժայռային շարքերով, որոնք բնական ամրության դեր են կատարել:

Սբ. Հովհաննես կամ Ներսես Մեծի ճգնարան անվամբ վանքը գտնվում է Նպատ լեռան ժայռոտ գագաթի (39.602828, 43.516569) ամենաբարձրադիր հատվածում: Ծովի մակերևույթից ունի 2150 մ բարձրություն:

Վանքը 13,45 x 10,80 մ արտաքին չափերով, հարավ-արևմուտք–հյուսիս-արևելք երկայնական առանցքով, ուղղանկյուն հատակագծով համալիր է, որի եկեղեցին գտնվում է հյուսիսարևելյան անկյունում: Այն 6,70 x 4,10 մ արտաքին չափերով, միանավ բազիլիկ հորինվածքով, արևելյան կիսաշրջան խորանով կառույց է, որին արևմուտքից կից է ավելի մեծ լայնությամբ գավիթը: Եկեղեցուն հարավից կից են ուղղանկյուն հատակագծով, նեղ, ձգված երկու օժանդակ սենյակներ, իսկ գավթին՝ մեկ լայն սենյակ: Համալիրի հարավային պատին կից է եզրագծից դուրս շեշտված նեղ ուղղանկյուն ևս մեկ օժանդակ սենյակ: Վերջինիս հարավարևելյան

Եկեղեցու ավերակներն արևմուտքից, դամբարանն արևմուտքից (լուս.՝ Ս. Դանիելյանի, 2025 թ.), եկեղեցու խորանի ներքին տեսքը դեպի արևելք և խաչքարի բեկոր վանքի տարածքում (լուս.՝ Ռ. Քորքոշյանի, 2025 թ.)

անկյանը կից է համալիրի առանցքի համեմատ շեղ առանցքով, ուղղանկյուն հատակագծով, թաղածածկ առանձին շինություն, որը հավանաբար եղել է դամբարան կամ Ներսես Մեծի աղոթատեղ-մատուռը: Դամբարանի մուտքը բացված է հարավային պատի արևմտյան եզրից, իսկ երկրորդ հարկում թերևս եղել է մատուռ:

Մեր այցելության ժամանակ վանական համալիրն արդեն ավերված էր: Պահպանվել են եկեղեցու պատերի ստորին շարքերը, գավթի և օժանդակ մյուս շինությունների առանձին հատվածների մնացորդներ, իսկ դամբարանի պատերը կանգուն են, որոնց վրա հենված թաղի կենտրոնական հատվածն է փլուզված: Ըստ պահպանված մնացորդների՝ վանքի գլխավոր մուտքը բացված է եղել գավթի արևմտյան արտաքին պատի կենտրոնից: Ամբողջ համալիրը՝ եկեղեցով և օժանդակ շինություններով հանդերձ, կառուցված է տեղական կապտավուն, կիսամշակ քարերով՝ կրաշաղախի միջուկով: Սրբատաշ շարվածքով է իրականացվել միայն եկեղեցու մուտքը, որից բեկորներ են մնացել: Ըստ շարվածքի ձևի՝ կարելի է ենթադրել, որ վանքը կառուցվել է Ժ-ԺԳ դարերում: Բայազետի հայոց առաջնորդարանի 1903 թ. տեղեկագրում հեղինակի նշված «առանձին ճգնարաններ, քարաշէն գետնադամբարաններ և ստորերկրեայ քարաշէն բնակարաններ»-ը, ցավոք, չեն պահպանվել կամ մնացել են ավերակակույտերի տակ:

Տարածքում հնարավոր եղավ տեսնել ընդամենը մեկ խաչքարի բեկոր: Ուշմիջնադարյան խաչքարից պահպանվել էր ստորին հատվածը:

Վանքը գանձախուզության հետևանքով տակնուվրա է արված: Այդ իսկ պատճառով երբեմնի նվիրական սրբավայրը հայտնվել է իսպառ անհետացման եզրին:

ԾԱԿՈՒՌԻ

Էմմա Աբրահամյան

ԾԱԿՈՒՌԻ. գյուղը հյուսիս-արևմուտքից (լուս.՝ Ս. Սարգսյանի, 2017 թ.)

Տեղադրություն. գտնվում է Արցախի Հադրութի շրջանում (պատմ. Դիզակ գավառ)՝ համանուն քաղաքից 6,6 կմ հյուսիս-արևմուտք: Ծովի մակերևույթից ունի 855 մ միջին բարձրություն:

ԺԹ դարի կեսերին Սարգիս արքեպիսկոպոսը գյուղին առնչվող նկարագրականում նշում է. «...վայելուչ է դիրքն և զարդարեալ հովանաւոր ծառովք»[1]:

Անվանում. հայտնի է նաև Ծագոռ, Ծրկոռէ, Ձկոռի անվանաձևերով:

Բնիկներից ավանդված պատմական հայկական անվանումը հիշողությունից ջնջելու նպատակով 2020 թ. նոյեմբերի 20-ին Ադրբեջանի Միլլի Մեջլիսի որոշմամբ վերանվանվել է Հյունարլի:

Պատմություն. Ծակուռիում և նրա սահմաններում պահպանված նյութական մշակույթի հուշարձանները փաստում են, որ հայոց կյանքն այստեղ սկիզբ է առել դեռևս դարեր առաջ, սակայն գրավոր աղբյուրներն այդ մասին վկայում են միայն ԺԹ դարից ի վեր: Ժամանակագրորեն նշում ենք այդ վկայությունները:

Հայտնի է, որ գյուղը Ծակոռի ձևով հիշվում է 1822 թ. Երուսաղեմի Սբ. Հակոբյանց վանքի նվիրակներից մեկի ստեղծած «Հաշուետումար նուիրակութեան 1818-1826 թթ.» ձեռագիր մատյանում՝ որպես վանքին 1 թուման նվիրած բնակավայր[2]:

ԺԹ դ. Ծակուռին պատկանում էր կալվածատեր Միրզաբեգյանցին[3]:

1917 թ. հոկտեմբերի 26-ին գյուղը հիշվում է ծակուռցի Արտեմ Գրիգորյանցի թալանվելու դեպքի առնչությամբ. «...աւազակը ճանապարհին հանդի-

1 **Ջալալեանց Ս.**, Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, հ. Բ, Թիֆլիս, 1858, էջ 261:

2 **Մաղալյան Ա.**, Արցախի բնակավայրերն ըստ Երուսաղեմի Ս. Հակոբյանց վանքի նվիրակի հաշվետումարի, «Բանբեր Մատենադարանի», 2023, № 35, էջ 263:

3 **Ջալալեանց Ս.**, նշվ. աշխ., հ. Բ, էջ 262:

պում է Ծակօռի գիւղացի զինուոր Արտէմ Գրիգորեանցին, որից ...խլում է մի սուր և 50 ռ. փող...»[4]:

1923 թ. Ծակուռին մտնում էր Լեռնային Ղարաբաղի Ինքնավար շրջանի Շուշիի գավառի Տողի հասարակության մեջ[5]:

1927 թ. Ալեքսանդր Չիլինգարյանը Ծակուռիի Լենկոմերիտմիության բջիջին մեկ տարի ժամանակով նվիրում է «Խորհրդային Հայաստան» և «Կոմունիստ» թերթերը[6], իսկ Մանավազ Ստեփանյանն էլ՝ բազմաթիվ գրքեր[7]:

1930 թ. գյուղի «Ապագա» կոլխոզի նախագահն էր Պավել Հայրապետյանը[8], իսկ 1932 թ.-ից մինչև 1933 թ. աշունը՝ Ալեքսան Չիլինգարյանը[9]: Նրան հաջորդում է Իվան Չիլինգարյանը[10]:

1941-45 թթ. Մեծ հայրենականում մասնակցում են նաև բազմաթիվ ծակուռեցիներ: Զոհվում են 46-ը, որոնց անուններն արձանագրվել են նրանց հիշատակը հավերժացնող հուշարձանի ճակատին (Բենիկ Ավշարի Ամիրջանյան, Արմենակ Ա. Ամիրջանյան, Արտաշ և Բախշի Բեգլարի Առաքելյաններ, Արտաշ Իվանի Բաբայան, Բախշի և Թեոդորոս Բաբայաններ, Արտաշ Իվանի Գրիգորյան, Համբարձում և Շահեն Համբարձումի Թոխունցներ, Մաղաթ Բախշիի և Հմայակ Իվանի Խաչատրյաններ, Աշոտ Օհանի, Ռուբեն և Միշա Ավագումի, Գրիգորի, Աշոտ և Վահան Հայրապետյաններ, Հայկ Ալեքսանի Հարությունյան, Բեհբուդ և Գուրգեն Հակոբի, Հրանտիկ Հայրյաններ, Բախշի Հակոբյան, Արմավել Մուխանի և Ալավերդի Մուսայելյաններ, Մամիկոն Միրզայան, Սուրեն Մարտիրոսյան, Իսակ և Աշոտ Վանեսի Մելքումյաններ, Գուրգեն Ալեքսանի և Աստվածատուր Չիլինգարյաններ, Մեխակ, Ռաֆիկ և Նիկոլայ Պետրոսյաններ, Կոլյա Սեդրակի Պողոսյան, Անդոն և Արմավել Բաբասիի և Միշա Սանամյաններ, Ղևոնդ Լևոնի, Հմայակ և Բենիկ Իվանի, Սեդրակ, Միշա և Գուլում Հայրապետի և Սեդրակ Ստեփանյաններ, Շմավոն Բախշիի Օհանյան)[11]:

Արցախյան առաջին ազատամարտի հերոսներին հավերժացնող խաչքար-հուշարձանը (լուս.՝ Ս. Կարապետյանի (ՀՃՈՒ), 2002 թ.)

Հակառակ Մեծ հայրենականից հետո ստեղծված դժվարությունների, այնուամենայնիվ, գյուղն ընդհանուր առմամբ շարունակել է բարգավաճել և ապրել աշխույժ կյանքով:

Արցախյան առաջին ազատամարտի (1988-1994 թթ.) ժամանակ՝ 1989 թ., Ա. Խաչատրյանի գլխավորությամբ Ծակուռիում ևս ստեղծվում է կամավորական ջոկատ, որը, համագործակցելով շրջանի ինքնապաշտպանական այլ ջոկատների հետ, մասնակցում է հայրենի գյուղի, Հաղրութի տարբեր բնակավայրերի ինքնապաշտպանական, ինչպես նաև Քարվաճառի, Ղուբաթլուի, Ֆիզուլիի, Ջաբրայիլի ազատագրական մարտերին[12]: Ցավոք սրտի, զոհվում են ազատամարտիկներ Կամո Յուրիկի Հակոբյանը (16.09.1962–21.12.1993, Բոյուք Բահմանլու, Ֆիզուլիի շրջան), Աշոտ Սուրենի Մելքումյանը (01.10.1959–03.02.1994, «Աղբուռուն» տեղամաս, Աղդամի շրջան), Գուրգեն Խորենի Չիլինգարյանը (23.02.1957–28.09.1992, Լաչինի շրջան)[13]:

Նշենք, որ ծակուռեցի ազատամարտիկների հիշատակն էր հավերժացնում երախտապարտ հա-

4 **Գիւղացի**, Տեղեկութիւններ գաւառից, «Մշակ», 1917, № 247, 18 նոյեմբերի, էջ 3-4:

5 Կանոնադրություն Լեռնային Ղարաբաղի շրջանային խորհուրդների համագումարի և գործադիր կոմիտեի մասին, Բաքու, 1923, էջ 4:

6 «Խորհրդային Ղարաբաղ», 1927, № 20, 14 մայիսի, էջ 4:

7 «Խորհրդային Ղարաբաղ», 1927, № 25, 25 հունիսի, էջ 4:

8 **Կոլխոզնիկ Միքայել**, Աշնանացանի պլանը գերակատարեցինք, «Խորհրդային Ղարաբաղ», 1930, № 50, 3 դեկտեմբերի, էջ 3: Ի դեպ, կոլխոզը կազմավորվել էր 1929 թ. (**Ճաղարյան Պ.**, Ծակուռի գյուղի կոլխոզի հաղթանակներից, «Խորհրդային Ղարաբաղ», 1933, № 100, 8 մայիսի, էջ 3):

9 **Բրիգադիր՝ Շումանյան**, «Հարսանիքում ենք, ժամանակ չունենք», «Խորհրդային Ղարաբաղ», 1932, № 103, 9 հուլիսի, էջ 3: Նաև՝ «Խորհրդային Ղարաբաղ», 1933, № 220, 11 հոկտեմբերի, էջ 4:

10 **Ծակուռեցի**, Ծակուռի գյուղի կոլխոզն աշխատում է նոր եռանդով, «Խորհրդային Ղարաբաղ», 1933, № 228, 23 հոկտեմբերի, էջ 1:

11 **Բարսեղյան Ս.**, Արցախ-Ղարաբաղը Մեծ Հայրենականում (1941-1945 թթ.), Ստեփանակերտ, 2015, էջ 347-348:

12 Ղարաբաղյան ազատագրական պատերազմ. 1988-1994: Հանրագիտարան, Երևան, 2004, էջ 273:

13 Նշվ. աշխ., էջ 782, 814, 832:



Մանրատեղանունները Ծակուռիում և գյուղամերձ տարածքներում (արտատպ.՝ Կարապետյան Ս., Արցախի մանրատեղանունները, Երևան, 2022, էջ 299)

մագյուղացիների կողմից կանգնեցված խաչքարհուշարձանը[14]:

Արցախյան առաջին ազատամարտի տարիներին հայկական ուժերին հաջողվում է ազատագրել գյուղը: Այնուամենայնիվ, ուրախությունը երկար չի տևում. 2020 թ. նոյեմբերի 7-ին Հադրութի շրջանի հայկական մյուս բնակավայրերի նման Ծակուռին ևս բռնազավթվում է և ցարդ գտնվում է Ադրբեջանի Հանրապետության զինված ուժերի վերահսկողության ներքո: Բռնագաղթի ենթարկված գյուղաբնակները ցրվում են և հաստատվում հիմնականում Հայաստանի Հանրապետության տարբեր բնակավայրերում:

Մանրատեղանուններ. Ծակուռիում և գյուղամերձ տարածքներում հայտնի են հետևյալ մանրատեղանունները՝ Ակնեն, Թեղուն, Կյափունց, Ներսես, Ներքի աղբյուրները, Դերունց սորան անտառը, Սկնուտամի (Սիսեռ աղբրի) գետը, Շինատեղ, Պտկաթաղ, Ցեխեր գյուղատեղիները, Հադրութա խութ, Ճռանախութ լեռնաճյուղերը, Բեբու, Բլեն խմհատ, Գետին քաղեր, Գյունե, Երե բախճա, Թեղունց տափ, Թուքակ, Խնձորուն տափ, Կաղ Չըխկլան, Կետեր, Կրզմանոտի խութ, Մելիքին արտ, Մեծ տափեր, Մեյդակալ, Միջափեն հարթ, Ներքե բախճա, Շեկ տափ, Շլորուտ (Շուլուրուտ), Սակուց յասպան, Սգնուն տակը, Քոսակաց հարթ տեղամասերը և այլն[15]:

Բնակչություն. դարեր ի վեր Ծակուռիի՝ զուտ հայաբնակ լինելու մասին լավագույնս վկայում են գյուղամիջում և մերձակայքում պահպանված հուշարձանները: Սակայն բնակչության թվաքանակի վերաբերյալ առկա ստույգ տվյալներն ի հայտ են գալիս միայն ռուսական տիրապետության հաստատումից հետո, որից էլ երևում է՝ ԺԹ դարում Ծակուռին բնակչության թվաքանակով գավառի փոքր գյուղերից էր:

Ըստ սերնդեսերունդ փոխանցված տեղեկությունների՝ ԺԸ դարում Ասկերանի շրջանի Ավետարանոց գյուղի մոտ գտնվող Ծկոռե բնակավայրից (հետագայում լքվել է և դարձել գյուղատեղի, ապա՝ տեղամաս) փոխադրվել և Ծակուռիում են հաստատվել հետևյալ ազգատոհմերը՝ Չիլինգարանց, Ղվալանց, Զաղունց, Ունջանանց, Քուսականց, Թոխունց, Սինամանց, Իդինանց, Ասրունց և այլն[16]:

14 Ցավոք, հուշարձանի ներկայիս վիճակի մասին տեղեկություններ չունենք, սակայն, կարծում ենք, որ այն Արցախյան ազատամարտի հերոսների հիշատակը հավերժացնող այլ բնակավայրերի հուշարձանների նման ևս ոչնչացվել է:

15 **Բալայան Վ.**, Արցախի Հանրապետության բնակավայրերի պատմության ուրվագծեր, Երևան, 2020, էջ 213-214: **Կարապետյան Ս.**, Արցախի մանրատեղանունները, Երևան, 2022, էջ 299 և կից բառարանը:

16 **Բալայան Վ.**, նշվ. աշխ., էջ 213: Նշենք, որ 1925 թ. հիշվում են ծակուռեցիներ Լևոն Շամիրյան Չիլինգարյանցը և Իվան Սարգսյան Չիլինգարյանցը («Խորհրդային Ղարաբաղ», 1925, № 37, 18 հոկտեմբերի, էջ 4): Նշյալ Չիլինգարյանց ազգատոհմից էր նաև զոհված ազատամարտիկ Գուրգենը:

Հայտնի է, որ ԺԹ դարի կեսերին գյուղում բնակվում էին նաև Ղարադաղից և մոտակա Պտկաթաղ գյուղից փոխադրված հայերը[17]:

Ինչ վերաբերում է բնակչության թվաքանակին, ապա տարբեր տարիների մարդահամարների արդյունքների համադրումը ցույց է տալիս, որ 1880-ական թթ.-ից բնակչության թվաքանակն աստիճանաբար աճել է՝ ամենաբարձր ցուցանիշն արձանագրելով 1933 թ.:

տարեթիվ	տուն	արական	իգական	միասին
1841[18]	13	26	20	46
1851[19]	40			
1876[20]				187
1884[21]	20			
1886[22]	36	135	134	269
1889[23]	40	140	128	268
1893[24]	34	132	92	224
1897[25]	35			
1901[26]		165	121	276
1908[27]				353
1909[28]		208	164	372
1912[29]		212	181	393
1914[30]				244
1922[31]	60	210	190	400
1926[32]	77			398
1927[33]	77			
1933[34]	83	226	210	436
1958[35]	66			
1974[36]				153
1987[37]	50			115
2002[38]	32			106
2005[39]				99
2010[40]	28			101
2018[41]	31			110

Հավելենք, որ բնակիչներին տրվել էր «Ծըրտօտ ճուվարան[42] ծուկուռվըէցէքյ» մականունը[43]:

Տնտեսություն. չնայած այն հանգամանքին, որ գյուղը սակավահող էր, այնուամենայնիվ, բնակիչները հիմնականում զբաղվում էին հողագործությամբ և այգեգործությամբ[44]:

Ծակուռին նաև արցախյան գորգագործական կենտրոններից էր: Հայտնի են ԺԹ դարում և Ի դարասկզբին ստեղծված «Ծաղկագորգ» և «Որոտան-Դիզակ» տեսակի գորգերը և այլն[45]:

Գյուղում կար մետաքսի գործարան, որի տերը Գրիգոր Շահնազարյանն էր: Ի դեպ, մինչև 1910 թվականն աշխատում էին նաև ջրակուսցիները: Գործարանատիրոջ մահվանից հետո այն այլևս չի գործում, իսկ աշխատուժը տեղափոխվում է Տող գյուղի մետաքսի գործարան[46]:

1930-ական թթ. սկզբներին գյուղում կառուցվում են շենքեր կոմինդրի գործարանի և դարբնոցի համար[47]:

Կրթություն. Ծակուռին դպրոց չի ունեցել ո՛չ նախախորհրդային տարիներին և ո՛չ էլ դրանից հե-

17 **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, Բագու, 1895, էջ 72:
18 ՀԱԴ, ֆ. 56, ց. 1, գ. 305, թ. 46:
19 Վաւերագրեր հայ եկեղեցու պատմութեան, գիրք Թ (այսուհետ՝ ՎՀԵՊ, համապատասխան գրքով), Հայ առաքելական եկեղեցու Արցախի թեմը (1813-1933 թթ.), կազմ.՝ **Ս. Թեհբուդեան**, Երեւան, 2001, էջ 207: Ի դեպ, այս թվաքանակի մեջ ներառված է նաև հարևան Մահմեդաձոր, Ջրակույս և Հողեր գյուղերի բնակչության թվաքանակը:
20 ՀԱԴ, ֆ. 56, ց. 1, գ. 6775, թ. 112-113:
21 **Հայկունի**, Ուղեգնացական ակնարկներ, «Մեղու Հայաստանի», 1884, № 89, 15 նոյեմբերի, էջ 1: Նաև **նույնի**՝ Ուղեգնացական ակնարկներ, Երևան, 2010, էջ 88:
22 Свод статистических данных извлеченных из посемейных списков населения Кавказа. Тифлис, 1888. С. 176-177.
23 **Բարխուտարեանց Մ.**, նշվ. աշխ., էջ 73: Ըստ դիվանական վավերագրերից մեկի (ՀԱԴ, ֆ. 56, ց. 1, գ. 8583, թ. 42-43)՝ նույն թվականին գյուղն ուներ 234 բնակիչ (123-ը՝ ար., 111-ը՝ իգ.):
24 ՎՀԵՊ, հ. Բ, Հայ առաքելական եկեղեցու Արցախի թեմը (1649-1917 թթ.), կազմ.՝ **Գ. Ավագյան**, գլխ. խմբ.՝ **Ա. Վիրաբյան**, Երևան, 2017, էջ 330:
25 **Ա-Դօ**, Հայ-թուրքական ընդհարումը Կովկասում (1905-1906 թթ.), Երեւան, 1906, էջ 172:
26 ՀԱԴ, ֆ. 56, ց. 14, գ. 205, թ. 238-239:
27 Кавказский календарь на 1910 г. Тифлис, 1909. С. 403.
28 ՀԱԴ, ֆ. 56, ց. 18, գ. 764, թ. 239-240:
29 ՀԱԴ, ֆ. 56, ց. 1, գ. 11608, թ. 327 շրջ.-328:
30 Кавказский календарь на 1915 г. Тифлис, 1914. С. 200.
31 ՀԱԴ, ֆ. 57, ց. 3, գ. 492, թ. 1-2: Տե՛ս նաև ՎՀԵՊ, գիրք Թ, էջ 759:
32 **Սուր.**, Կյանքը Ծակոռում, «Խորհրդային Ղարաբաղ», 1926, № 5, 31 հունվարի, էջ 4:
33 **Մանավազ**, Անհրաժեշտ է ունենալ կոոպերատիվի բաժանմունք, «Խորհրդային Ղարաբաղ», 1927, № 13, 2 ապրիլի, էջ 3:
34 Административное деление АССР. Баку, 1933, С. 112.
35 **Պողոսյան Ա.**, Հադրութի բարբառը. տեղագրություն և վիճակագրություն, «Հադրութի բառ ու բան», աշխատասիրությամբ և խմբագրությամբ **Արմեն Սարգսյանի**, Երևան, 2023, էջ 39:
36 **Մանուկյան Մ.**, Արցախի (Լեռնային Ղարաբաղ) Հանրապետության շրջանները, քաղաքները, գյուղերը, Երևան, 2019, էջ 192:
37 **Մելքումյան Ս.**, Լեռնային Ղարաբաղ, Երևան, 1990, էջ 273:
38 Ըստ տեղում արված մեր հարցումների:
39 **Մանուկյան Մ.**, նշվ. աշխ., նույն տեղում:
40 Նույն տեղում:
41 **Բալայան Վ.**, նշվ. աշխ., էջ 214:
42 Դարման կամ միրգ տեղափոխելու համար գործածվող մեծ կողով (**Սարգսյան Ա.**, Արցախի ժողովրդագիտություն. բանահյուսություն, հ. 2, Ստեփանակերտ, 2022, էջ 645):
43 **Սարգսյան Ա.**, Արցախի բանահյուսությունը, Երևան, 2015, էջ 606: Նաև **նույնի**՝ Արցախի բանաձևային բանահյուսությունը, Ստեփանակերտ, 2009, էջ 151:
44 **Սուր.**, նշվ. հոդվ., «Խորհրդային Ղարաբաղ», 1926, № 5, 31 հունվարի, էջ 4:
45 Նշենք, որ ԺԹ դ. կեսերին Ծակուռիում գործված «Ծաղկագորգ»-ը Շուշիի գորգերի թանգարանի հիմնադիր Վարդան Ասծատրյանի շնորհիվ արժեքավոր այլ նմուշների հետ 2020 թ. հայ-ադրբեջանական 44-օրյա պատերազմի ժամանակ՝ նոյեմբերի 1-ին, Շուշիի գրավումից մի քանի օր առաջ տարհանվել է և փոխադրվել Երևան: 2021 թ. ցուցադրվել է Ալ. Թամանյանի անվան ճարտարապետության թանգարան-ինստիտուտում: Որոտան-Դիզակ գորգի մասին տե՛ս **Թաքիկյան Վ.**, Արցախի տոհմագորգերը, Երևան, 2004, թիվ 164:
46 **Ս. Ի.** (Սիմոն Իշխանյան), Ջրակոյսի գիւղի իրականութիւնից, «Ղարաբաղ», 1912, № 60, 16 օգոստոսի, էջ 3:
47 **Ճաղարյան Պ.**, Ծակուռի գյուղի կոլխոզի հաղթանակներից, «Խորհրդային Ղարաբաղ», 1933, № 100, 8 մայիսի, էջ 3:

Գորգերի նմուշներ Ծակուռիից՝ Արև-ծիլ, Որոտան-Դիզակ և Ծաղկագորգ (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2002 թ., արտատպ.՝ Թաքիկյան Վ., Արցախի տոհմագորգերը, Երևան, 2004, համար 164 և համացանցից)

Սբ. Աստվածածին եկեղեցին հարավ-արևմուտքից և արևմուտքից (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2002 թ. և Ռ. Քորքոշյանի (ՀՃՈՒ), 2011 թ.)

տո[48], օրինակ, 1920-ական թթ.[49], սակայն դպրոցական շենք կառուցելու նպատակով 1926 թ. ֆոնդ էին ստեղծել: Նույն թվականին գյուղում գործում էր անգրագիտության վերացման ընկերություն[50]:

Վերոնշյալ խնդրին էր ուղղված նաև 1931 թ. Ծակուռիում բացված երկու լիկկայանների գործունեությունը[51]:

48 Չնայած վերնասացյալին, ըստ լրատվական տեղեկություններից մեկի, 1957/58 ուստարում գյուղում գործել է դպրոց՝ ցածր առաջադիմությամբ (**Մարդանյան Գ.**, Դպրոցները պատրաստ են նոր ուսումնական տարվան, «Խորհրդային Ղարաբաղ», 1958, № 67, 30 օգոստոսի, էջ 1): Կարծում ենք, որ այս տվյալն իրականությանը չի համապատասխանում:

49 **Սուր.**, նշվ. հոդվ., «Խորհրդային Ղարաբաղ», 1926, № 5, 31 հունվարի, էջ 4:

50 **Մանավազ**, Անգրագիտության վերացման խնդիրը, «Խորհրդային Ղարաբաղ», 1926, № 52, 31 դեկտեմբերի, էջ 3:

51 **Դասատու**, Ոչ ոք չի հետաքրքրվում, «Խորհրդային Ղարաբաղ», 1931, № 13, 18 փետրվարի, էջ 4:

Սբ. Աստվածածին եկեղեցին հարավ-արևմուտքից մինչև նորոգությունը և դրանից հետո (լուս.՝ Ս. Դանիելյանի (ՀՃՈՒ), 2018 թ. և Ս. Այվազյանի, 2020 թ.)

Լեռնային Ղարաբաղի Ինքնավար շրջանի գործկոմի՝ 1931 թ. օգոստոսի 24-ի որոշմամբ, ի թիվս այլ դպրոցների, 1931/32 ուստարուց սկսած, Ծակուռին ևս անցնելու էր յոթամյա պարտադիր կրթության[52]:

Ըստ տեղում կատարած մեր հարցումների՝ 2001/02 ուստարում Ծակուռին դպրոց չուներ, և 7 աշակերտները սովորում էին Մարիամաձորի կրթօջախում:

52 «Խորհրդային Ղարաբաղ», 1931, № 63, 18 փետրվարի, էջ 4:

Սբ. Աստվածածին եկեղեցի (Ծաղկավանք). ճարտարապետական ուշագրավ կոթողներից է գյուղի կենտրոնում գտնվող (39.569771, 46.984191; ծ.մ. 860 մ) եկեղեցին՝ կառուցված 1682 թ.: Այդ է վկայում արևմտյան շքամուտքից վեր՝ ճակատակալ քարին և եզրային խոյակներին փորագրված 17 տողանի արձանագրությունը.

Ես՝ Յ(ա)կ(ո)ք վ(ա)ռդ(ա)պ(ե)տ, | աշ(ա)կ(ե)ռտ մեծին Յե|սա(յ)եա վ(ա)ռդ(ա)պ(ե)տին Կ(ա)ռճ|ե-ւ(ա)նց(ւ)ոյ, ի գի(ւ)ղաք(ա)ղ(ա)ք(ա)գ(ե)ղ|ջէն թ(ա)ղ-

Սբ. Աստվածածին եկեղեցու ճակատակալի արձանագրությունը (լուս. և գրչ.՝ Ս. Դանիելյանի, 2018 և 2025 թթ.)



Սբ. Աստվածածին եկեղեցու եզրային խոյակների արձանագրությունը (լուս.՝ Ա. Հակոբյանի (ՀՃՈՒ) և Ս. Դանիելյանի, 2015 և 2018 թթ., գրչ.՝ Ս. Դանիելյանի, 2025 թ.)

լ(ա)ոցի, յազգէն Թ/անկոց, տ(ե)սո(ւ)չ եւ առ(ա)ջ-նո[ղդ] | կ(ա)ոգե(ա)լ ի հ(այ)ր(ա)պ(ե)տէն Աղվ(ա)-նից | տ(եառ)ն Եր(ե)միայի, ք(ա)նի մի գ(ի)[ղ](ո)-ոէից | Ղուզայնոց ոչ թ(ո)ղ(ի)ն մեզ | բն(ա)կիլ ի հ(այ)ռենի աթ(ո)ռն մեր, | այլ որ(ո)նե(ա)լ շր/ջեցա եւ ոչ գ/տի առ(ա)ւ(ե)լ ք(ա)ն զա(յ)ս | եւ հ(ա)ճ(ե)ցա բն(ա)կիլ աստ | եւ հ(ա)ոդել զՅնդուսա/ոը ի տ(ե)ղի բն(ա)կութե(ան) եւ սկիզ/բն ար(ա)ոե(ա)լ շ(ի)ն(ե)ցի եկ(ե)ղ(ե)ց(ի)ս մ(ի)ն՛չ | ի կ(ա)թ(ո)ղ(ի)կէն յ(ի)շ(ա)-տ(ա)կ հ(ո)գ(ո)յ իմ(ո)յ | եւ ծն(ո)ղ(ա)ց իմ(ո)ց հ(օ)ոն իմ(ո)յ Դ(ո)լվ(ա)թիա/ր(ի)ն եւ մ(օ)ոն իմ(ո)յ Մ(ա)-ոի(ա)մին եւ դայե(ա)կ սնու/ցիչ ք(ե)ռն իմ(ո)յ Ս(ա)-ռին, յ(ի)շ(ե)ց(է)ք ի Ք(ոիստո)ս: // Ող(ո)ոմ(ո)ւ-թ(եա)ն ամենակալին ա(ստուծո)յ // շին(ե)ց(ա)ւ ս(ուր)ք եկ(ե)ղէցիս ձեռ(ա)մբ Յ(ա)կովբ [վարդապե-տին], // թվին ՌՃԼԱ (1682):

Հրատ. **Ջալալեանց Ս.**, նշվ. աշխ., հ. Բ, էջ 262: **Բարխուտա-րեանց Մ.**, Արցախ, Բագու, 1895, էջ 73: Տե՛ս նաև Դիվան հայ վիմագրության, V (այսուհետ՝ ԴՀՎ, V), Երևան, 1982, էջ 172-173: Արձանագրության ոչ ամբողջական տեքստը ֆրանսերեն թարգմանությամբ տե՛ս **Thierry J. M.**, Églises et couvents du Karabagh, Antélias-Liban, 1971, p. 188.

Ծանոթ. վիմագիրն ընդօրինակել է նաև Խաչիկ վրդ. Դադյանը (ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 107, թ. 24-25):

Ջալալյանցի և Դադյանի ընթերցումներում բացակայում է *«Ող(ո)ոմ(ո)ւթ(եա)ն ամենակալին ա(ստուծո)յ»* հատվածը:

Վիմագրում հիշատակված է Աղվանից կաթողիկոս Երեմիա Բ Հասան-Ջալալյանցը (1676-1700):

Տարընթերցում. Ջալալյանցի մոտ *«հ(ա)ոդել զՅնդուսա/ոը»*-ի փոխարեն՝ *«հորդել դուռս»*, *«Դ(ո)լվ(ա)թիա/ր(ի)ն եւ մ(այ)ոն»*-ի փոխարեն՝ *«Դօլվաթի և մօրն»:* Բարխուտարյանցի մոտ՝ *«Դ(ո)լ-վ(ա)թիա/ր(ի)ն եւ մ(այ)ոն»*-ի փոխարեն՝ *«Դալվաթի սորան և մօ-ոն»*, Խաչիկ վարդապետի մոտ՝ *«Դոլվթիս. արնամայրն»*, իսկ ԴՀՎ-ի հրատարակիչների մոտ՝ *«Դալվաթի և մօրն»:* Նրանց և Բարխուտարյանցի մոտ՝ նաև *«դայե(ա)կ սնու/ցիչ ք(ե)ռն իմ(ո)յ Ս(ա)ռին, յ(ի)շ(ե)ց(է)ք ի Ք(ոիստո)ս: // Ող(ո)ոմ(ո)ւթ(եա)ն ամե-նակալին ա(ստուծո)յ»*-ի փոխարեն՝ *«դահեակ սնուցիչ երկու քոռն իմոյ Սառին, Յաշաքին ողորմութեան, աղաչեմ կենաց»*:

Ծաղկավանքը հիշվում է 1841-1857[53], 1893-1894[54], 1922[55] թթ. վավերագրերում:

Անչափ կարևոր է ԺԹ դ. կեսերին գյուղ այցելած Սարգիս արքեպիսկոպոս Ջալալյանցի՝ եկեղեցու նկարագրությունը. «Աստ է եկեղեցին, զոր կառոյց յանուն Աստուածամօր Յակովբ վարդապետ Մէլիք Թանկեանց ՝ի թուին Հայոց ՌՃԼԱ-ին: Թէպէտ փոքր է շինուածս, բայց ըստ բաւականին շքեղ, կաթուղիկէ սորին մնայ դեռևս անկատար վասն արագահաս վախճանի յիշեալ վարդապետին»[56]:

53 ՀԱԴ, ֆ. 56, ց. 1, գ. 305, թ. 46; ց. 12, գ. 531-533, 538; ց. 18, գ. 542:

54 ՎՀԵՊ, գիրք ԺԹ, Հայ առաքելական եկեղեցու Արցախի թեմը (1649-1917 թթ.), կազմ. **Գ. Ավագյան**, գլխ. խմբ.՝ **Ա. Վիրաբյան**, Երևան, 2017, էջ 330:

55 ՎՀԵՊ, գիրք Թ, էջ 759:

56 **Ջալալեանց Ս.**, նշվ. աշխ., հ. Բ, էջ 261: Նշենք, որ Սարգիս արքեպիսկոպոսի՝ եկեղեցու չկառուցված գմբեթի տեղեկությունը հաստատվում է նաև նորոգությունից առաջ տեղում կատարված ուսումնասիրական աշխատանքի շնորհիվ: Վերականգնման նախագծի հեղինակ ճարտարապետ Սամվել Այվազյանը նշում է, որ գմբեթի փոխարեն շինության կենտրոնական մասը ծածկվել է թույլ կորության թաղով:

Սբ. Աստվածածին եկեղեցին հյուսիսից (լուս.՝ Ս. Դանիելյանի, 2018), ներքին տեսքը դեպի գմբեթ (լուս.՝ Ռ. Քորթոշյանի, 2011 թ.), դեպի արևելք և արևմուտք (լուս.՝ Ս. Դանիելյանի, 2018) և հյուսիսային ավանդատան երկրորդ հարկի ներքին տեսքը դեպի արևմուտք (լուս.՝ Ա. Հակոբյանի, 2015)

Մակար Բարխուտարյանցն էլ Ծաղկավանքի մասին հաղորդում է հետևյալը. «...հոյակապ, կառուցեալ երկու սիների վրայ...: Դասից վերև ունեցած է կաթուղիկէ, բայց խոնարհած է: Երևի թէ վանք եղած է այս, յետոյ փոխած են եկեղեցու, որի երկարութիւնն է 15 մետր 25 սանթիմ, լայնութիւնն 12 մի մետր»[57]:

Խորհրդային տարիներին եկեղեցու շենքը որպես կոլտնտեսության պահեստ էր գործածվում:

2010 թ.-ից Ծաղկավանքի նորոգության համար սկսվում է հանգանակություն: Ի դեպ, վերանորոգության գաղափարի հեղինակը գյուղի վերջին քահանա տեր Մելիքսեթ Տեր-Մարտիրոսյանցի թոռնուհին էր՝ Մոսկվայի Լոմոնոսովի անվան պետական համալսարանի համաշխարհային քաղաքականության ֆակուլտետի պրոֆեսոր, էթնոսոցիոլոգ Սվետլանա Տատունցը: 2015 թ. նախագիծը կազմում է ճարտարապետ Սամվել Այվազյանը: 2019 թ. մայիսին սկսվում է շինարարական աշխատանքների առաջին փուլը. ամրացվում են հիմքերը երկաթբետոնե գոտիով, ճաքերը ներարկվում են կրացեմենտային շաղախով, քանդվում, վերաշարվում են ճակատների քայքայված հատվածները, նորերով լրացվում բացակայող քարերը: Տանիքը, բացի

57 **Բարխուտարեանց Մ.**, նշվ. աշխ., էջ 72-73: Օգտվելով Մակար Բարխուտարյանցի աշխատությունից՝ Ծաղկավանքի մասին տեղեկություններ են տալիս նաև **Համազասպ Ոսկյանը** (Արցախի վանքերը, Վիեննա, 1953, էջ 19) և **Սուքիաս Էփրիկյանը** (Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, հ. Բ, Վենետիկ, 1907, էջ 230-231):



Սբ. Աստվածածին եկեղեցու հյուսիսային և հարավային նավերի ներքին տեսքը դեպի արևելք (լուս.՝ Ս. Դանիելյանի, 2018), ինչպես նաև մկրտության ավազանը և խորանի խորշերից մեկը (լուս.՝ Ա. Հակոբյանի, 2015 թ.)

կենտրոնական գմբեթային հատվածից, կղմինդրապատվում է, իսկ նշյալ հատվածը՝ թիթեղապատվում փայտե հենքի վրա: Կազմվում են նաև եկեղեցու վրա տեղադրվելիք պողպատե խաչի և կից զանգակատան նախագծերը: Ցավոք, աշխատանքներն ընդհատվում են 2020 թ. սեպտեմբերի 27-ին Ադրբե-



Հատվածներ Սբ. Աստվածածին եկեղեցու վերականգնման էքզիզային նախագծից (հեղ.՝ Ս. Այվազյան, 2015 թ.)

ջանի սանձազերծած 44-օրյա պատերազմի և գյուղի բռնազավթման հետևանքով:

Ինչպես ցույց է տալիս արբանյակային լուսանկարը, 2023 թ. սեպտեմբերի 5-ին եկեղեցին տա-

Սբ. Աստվածածին եկեղեցու հարավային պատից բացված լուսամուտի օձաքանդակը (լուս.՝ Ս. Դանիելյանի, 2018 թ.)

Խաչքար (ԺԲ-ԺԳ դդ.) Սբ. Աստվածածին եկեղեցու որմին (լուս.՝ Ս. Այվազյանի, 2015 թ.)

կավին կանգուն էր. քանդված էր միայն արևելքից կից բնակելի տունը:

Հատկանշելի է, որ 2021 թ. մարտին Ծակուռի այցելած Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևը, ցուցելով եկեղեցու՝ 1682 թ. շինարարական արձանագրությունը, հայտարարում է, թե այն կեղծ է և փորագրվել է վերջին շրջանում՝ ուղիական եկեղեցին հայացնելու նպատակով[58]: Ի հետևումն նախագահի խոսքերի՝ 2022 փետրվարին Ադրբեջանի մշակույթի նախարար Անար Քերիմովն էլ հավելում է, որ «ալբանական կրոնական տաճարների վրա հայերի կողմից գրված և հորինված հետքերը» հեռացնելու համար կազմվել է մասնագիտական խումբ[59]: Ասվածը ևս մեկ անգամ հաստատում է այն փաստը, որ հայատյացությունն ու թշնամանքն Ադրբեջանում սերմանվում են պետական բարձր մակարդակով՝ հող ստեղծելով բռնազավթված տարածքներում հայկական մշակութային ժառանգությունը յուրացնելու, այլափոխելու կամ իսպառ անհետացնելու համար:

Ճարտարապետություն. եկեղեցին եռանավ գմբեթավոր բազիլիկ է (արտաքին չափերն են՝ 15,25 x 12,10 մ): Խաչաձև, քառալանջ ծածկի ներքո առնված կիսաշրջան թաղերը ներքուստ պահում են Т-աձև զույգ որմնամույթերին հանգչող թաղակիր կամարները: Կիսաբոլորակ եզրագծով ավագ խորանի երկու կողմերում ուղղանկյուն հատակագծով կրկնահարկ ավանդատներն են: Գեղազարդ և շքեղ կամարակապ շքամուտքը բացված է արևմտյան ճակատից: Կառուցված է կոպտատաշ քարով՝ կրաշաղախի համադրությամբ: Սրբատաշ քարով են շեշտված շքամուտքը, լուսամուտները, սյուները, թաղակիր կամարները և խորշերի եզրակալները: Հարավային պատին բացված լուսամուտի մոտ առկա է օձաքանդակ[60], որը թերևս խորհրդանշում է եկեղեցու պահապանին:

Եկեղեցու որմերին, շինարարական արձանագրությունից զատ, առկա են նաև հիշատակագրություններ և ԺԷ դարի խաչքարեր, այդ թվում՝ արձանագիր: Ահա դրանք.

Արձանագրություն. եկեղեցու հարավային ավանդատան առաջին հարկի արևելյան լուսամուտից վեր՝ արտաքուստ, փորագիր, 1 տող.

Յիշատակ է Ս(ուր)ք խորանս տ(է)ր Ղ(ա)զ(ա)-րին:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. ժամանակը՝ ԺԷ դ.:

58 **Kortoshian R.**, The Endangered Christian Armenain Heritage of Artsakh, Yerevan, 2022, p. 21. **Քորթոշյան Ռ.**, Արցախ. վտանգված ժառանգություն, Երևան, 2023, էջ 11:

59 https://report.az/en/cultural-policy/working-group-set-up-to-restore-armenianized-temples-of-ancient-albania

60 Օձաքանդակի մասին հետաքրքիր է հետևյալ պատումը, որը մեզ է հասել Սարգիս արք. Ջալալյանցի շնորհիվ. «Ի մէջ հարաւային լուսամտի շինեալ կայ օձաձև արձան, որոյ վասն պատմեն ծերունիք, թէ սրտմտեալ երբեմն ճարտարապետի սորա ՝ի վերայ աշակերտի միոյ բարկութեամբ ասէ. «՝ի օձէ հարկանիցիս դու» և ըստ դիպուածոյն ՝ի նմին իսկ աւուր ՝ի բառնալ աշակերտի նորա զքար՝ խածանէ զնա օձն, յորմէ թունաւորեալ մեռանի, վասն որոյ ՝ի նշան արագահաս բանից զոջացեալ աշակերտին խնդրէ ՝ի նմանէ տալ քանդակել զօձաձև քար ՝ի յիշատակ մշտենջենաւոր և ի խրատ ամենայն ստահակ աշակերտաց» (**Ջալալեանց Ս.**, նշվ. աշխ., հ. Բ, էջ 261-262):

ԺԷ դ. արձանագրությունը (լուս.՝ Ս. Այվազյանի, 2019 թ.)

Ի դեպ, հիշատակագրությունը գտնվում էր եկեղեցուն հետագայում արևելքից կցված տան ծածկի տակ:

Խաչքար. եղել է եկեղեցու մոտ.

ԹԻ ՈՒԽԷ (1198):

Հրատ. **Բարխուտարեանց Մ.**, նշվ. աշխ., էջ 73: Տե՛ս նաև ԴՀՎ, V, էջ 172: **Thierry J. M.**, նշվ. աշխ., էջ 188:

Խաչքար. Ծաղկավանքի եկեղեցու որմին, արձանագրությունը՝ 3 տող.

Խաչս / Գաւզալ/ին:

Հրատ. առաջին անգամ:

Խաչքար (լուս.՝ Ա. Հակոբյանի, 2015 թ., գրչ.՝ Ս. Դանիելյանի, 2025 թ.)

Խաչքար. Ծաղկավանքի եկեղեցու որմին, արձանագրությունը՝ 4 տող.

Խաչս / Բիկիխ/ան/այ:

Հրատ. առաջին անգամ:

Խաչքար (լուս.՝ Ա. Հակոբյանի, 2015 թ., գրչ.՝ Ս. Դանիելյանի, 2025 թ.)

Խաչքար. Ծաղկավանքի եկեղեցու որմին, արձանագրությունը՝ 3 տող.

Խաչս Աւ/սն/ին:

Հրատ. առաջին անգամ:



Խաչքար (լուս.՝ Ա. Հակոբյանի, 2015 թ., գրչ.՝ Ս. Դանիելյանի, 2025 թ.)

Արձանագրություն. Ծաղկավանքի եկեղեցու արևելյան ճակատին՝ լուսամուտի երկու կողմերում՝ ներկագիր.

1942 г.:

Հրատ. առաջին անգամ:

1942 թ. արձանագրությունը (լուս.՝ Ա. Հակոբյանի, 2015 թ.)

Հավելենք, որ շինարարական աշխատանքների ընթացքում՝ 2019 թ., եկեղեցու հարավարևելյան կողմում հայտնաբերվում է առանձին շինության պատկանած կիսաշրջան կամարաձև ճակատակալ քար, որի վրա փորագրված արձանագրության մեջ նշված Սբ. Պետրոս եկեղեցու անունը վկայում է տարածքում երկրորդ եկեղեցու առկայության մասին:

Ղազարին, թվ(ին) ՌՅԺ (1861), / եւ Սդեփան(ի)ն, որ է որդին: / Այս է դուռ Ս(ուր)ք Պէտրոսին:

1861 թ. արձանագրությունը (լուս.՝ Ս. Այվազյանի, 2019 թ.)

Քահանա. Ծակուռին, լինելով փոքր գյուղ, իր սեփական քահանան չի ունեցել. հիմնականում սպասավորել են մոտակա գյուղերի հոգևոր հովիվները: ԺԹ-Ի դարերի ընթացքում պաշտոնավարած քահանաներից հայտնի են ներքոնշյալները.

Մելիքսեթ Տեր-Հարությունյան Մովսես-Վարդանյանց. 1817 թ. մարտի 9-ին Գանձասարի վանքում քահանա է ձեռնադրվում Հակակու, Թաղուտ[61], Մահմեդաձոր և Ծակուռի գյուղերի համար[62]: Տեր Մելիքսեթը քահանայագործում է մինչև կյանքի վերջը (1846 թ.)[63]:

Բաղդասար Աստվածատրյան Տեր-Մարտիրոսյանց. հիշվում է 1834-1857 թթ.: Ծնվել է 1804 թ., սովորել Սբ. Ղևոնդյաց վանքում՝ Գալուստ վարդապետի մոտ: Քահանա է ձեռնադրվել 1834 թ. մարտի 31-ին Գանձասարի վանքում[64]:

1851 թ. վերջերին շարունակում էր քահանայագործել Ծակուռի, Մահմեդաձոր, Ջրակույս և Հողեր գյուղերում[65]: Ցավոք, տեր Բաղդասարի մահվան ստույգ տարեթիվը հայտնի չէ, սակայն 1870 թ., ըստ վավերագրերից մեկի, արդեն վախճանված էր[66]:

Գրիգոր Տեր-Բաղդասարյան Տեր-Մարտիրոսյանց. տեր Բաղդասարի որդին էր (ծնվ. 1830 թ.): Քահանայագործում է ձեռնադրումից՝ 1870 թ. օգոստոսի 25-ից մինչև 1912 թ.[67]:

1888 թ. տեր Գրիգորը հիշատակվում է «Արարատ» ամսագրի բաժանորդների թվում[68]:

Մելիքսեթ Տեր-Գրիգորյան Տեր-Մարտիրոսյանց. տեր Գրիգորի որդին էր: 1905 թ. քահանա է նշանակվում Ջրակույս գյուղի համար[69] (ամենայն հավանականությամբ, հովվելու էր նաև Ծակուռի, Մահմեդաձոր և Հողեր գյուղերում): 1912 թ. հիշվում է որպես Դիզակի Բ մասի (Ծակուռի կենտրոնատեղիով) 19 գյուղերի գործակալ[70]:

1922 թ., առանց անունը նշելու, հիշվում է Ծակուռիում հովվող մի քահանա[71]: Ըստ ամենայնի, խոսքը Մելիքսեթ Տեր-Մարտիրոսյանցի մասին է, քանի որ վերջինս, որպես գյուղի վերջին քահանա, հիշատակվում է նաև 1925 թ.[72]:

Աղբյուր. Ծակուռիում են գտնվում Ակնեն, Ներսես, Թեղուն, Կյափունց[73] և Ներքի աղբյուրները:

Նշյալներից արձանագրություն ունի Ներքի աղբյուրը.

Այս աղբու/րս յիշատա/կ է Հովակիմ բեկ / Մեժ/լում բեկ Զոր/աբեանց(ի), 1865:

Հրատ. **Կարապետյան Ս.**, Հայկական աղբյուրներ, Երևան, 2023, էջ 44:

Ներքի աղբյուրը և արձանագրությունը (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2002 թ.)

Գյուղի աղբյուրներից մեկի շարվածքում էլ վերաօգտագործված է ԺԷ դարին բնորոշ մի խաչքար:

61 ՀԱԴ, ֆ. 56, ց. 12, գ. 531, 532:

62 **Թօփճեան Յակոբ**, Ցուցակ ժողովածուաց Դաղեան Խաչիկ վարդապետի, մասն Բ, Վաղարշապատ, 1900, էջ 21, 23:

63 Ամփոփվել է Հակակու գյուղի գերեզմանոցում (տապանագիրը տե՛ս **Աբրահամյան Է.**, Հակակու, «Վարք», 2024, № 19, էջ 28):

64 ՀԱԴ, ֆ. 56, ց. 12, գ. 531-533, 538; ց. 18, գ. 542:

65 ՎՀԵՊ, գիրք Թ, էջ 207:

66 ՀԱԴ, ֆ. 56, ց. 1, գ. 8889, թ. 157 շրջ.-158:

67 Նշվ. գործը, թ. 157 շրջ.-158; գ. 11608, թ. 360 շրջ.; ց. 18, գ. 764, թ. 260-261: Ֆ. 57, ց. 3, գ. 44, թ. 79-80:

68 «Արարատ», 1888, ԺԲ, էջ 807:

69 «Արարատ», 1905, Է-Ը, էջ 593:

70 **Զաւէն վարդապետ**, Համառօտ տեղեկագիր Ղարաբաղի թեմի հայ ազգաբնակութեան, «Ղարաբաղ», 1912, № 42, 7 յունիսի, էջ 3:

71 ՀԱԴ, ֆ. 57, ց. 3, գ. 492, թ. 1-2:

72 **Կուրյեր**, Տերտերները անցել են հալալ աշխատանքի, «Խորհրդային Ղարաբաղ», 1925, № 35, 4 հոկտեմբերի, էջ 5:

73 **Բալայան Վ.**, նշվ. աշխ., էջ 213: Տե՛ս նաև **Դանիելյան Հ.**, Տեղեկատու Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վարչատարածքային միավորների սոցիալ-տնտեսական բնութագրերի, Երևան, 2015, էջ 119:

Աղբյուրը և խաչքարը (լուս.՝ Ռ. Քորթոշյանի, 2011 թ., գրչ.՝ Ս. Դանիելյանի, 2025 թ.)



Պտկաթաղի եկեղեցու հատակագիծը (չափ.՝ Շ. Մկրտչյանի)

Խաչքար. աղբյուրի որմին, արձանագրությունը՝ 3 տող.

Խաչս / Գուզալ/ին:

Հրատ. առաջին անգամ:

Պտկաթաղ գյուղատեղի. գտնվում է Ծակուռիից 1,1 կմ հյուսիս-արևմուտք: 1575 թ. գյուղը հիշվում է գրիչ Պետրոս աբեղայի կողմից Գտչավանքում ստեղծված ձեռագիր Մաշտոցի հիշատակարանում. «Ի դառն եւ ի չար ժամանակի, ի ղանութեան շահ Թահմազին՝ ի երկիրս Դիզակ՝ ի գեղս Պայկայթաղ...»[74]: ԺԹ դարի վերջերին Պտկաթաղում դեռևս բնակվում էր մի քանի տուն հայ[75]:

Պտկաթաղ գյուղատեղիի տարածքում առ 2023 թ. պահպանվում էր կիսավեր եկեղեցին (39.577000, 46.976758)[76], որի կառուցման ստույգ ժամանակաշրջանը հայտնի չէ: Սակայն պատմաբան Շահեն Մկրտչյանը, հենվելով իր կողմից ընդօրինակված, սակայն չհրատարակված շինարարական արձանագրության վրա, կառուցման տարեթիվը նշում է 1670[77]: Ցավոք, 2018 թ. արձանագրությունից պահպանվել էր միայն մեկ փոքր բեկոր.

...[ե]կեղեցոյս...:

Հրատ. առաջին անգամ:



Պտկաթաղի եկեղեցու շինարարական արձանագրության բեկորը (լուս. և գրչ.՝ Ս. Դանիելյանի, 2018 և 2025 թթ.)

Եկեղեցին միանավ թաղածածկ հորինվածքով փոքր կառույց է, որի ծածկը հենվում է զույգ որմնասյուների վրա բարձրացող կամարների վրա: Արևելյան կողմում կիսաշրջան եզրագծով խորանն է, որի երկու կողմերում առկա է ուղղանկյուն հատակագծով մեկական ավանդատուն: Լուսավորվում է արևելյան (3) և արևմտյան (1) ճակատներից բացված դեպի ներս լայնացող լուսամուտներով: Միակ մուտքը բացված է արևմտյան ճակատից: Կառուցված է անմշակ և կոպտատաշ քարով՝ կրաշաղախի համադրությամբ: Սրբատաշ շարվածք ունեն միայն որմնասյուներն ու թաղակիր կամարները:

2018 թ. եկեղեցին կիսավեր էր. ծածկը գոյություն չուներ, մուտքի և որմերի անկյունային հատվածները տեղ-տեղ քանդված էին:

2023 թ. արբանյակային լուսանկարով Պտկաթաղի եկեղեցին տակավին նույն վիճակում էր:

Եկեղեցու որմերին պահպանվել է ԺԷ դարին բնորոշ երկու խաչքար.

Խա/չս / Պա/հա(պան) Հ/ոյ/ին:

Հրատ. **Մկրտչյան Շ.**, նշվ. աշխ., էջ 119:

Տարընթերցում. հրատարակչի մոտ «*Պա/հա(պան) Հ/ոյ/ին*»-ի փոխարեն՝ «*Խաչս ... Հալոյի*»:

74 Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հ. Բ, կազմ.՝ **Օ. Եգանյան, Ա. Ջեյթունցյան, Փ. Անթաբյան**, Երևան, 1970, էջ 404, № 6834: Տե՛ս նաև **Սինասյան Թ.**, Արցախի գրչության կենտրոնները, Երևան, 2015, էջ 41:

75 **Բարխուտարեանց Մ.**, նշվ. աշխ., էջ 72, ծնթ. 1:

76 Եկեղեցու մասին տե՛ս **Հարությունյան Վ.**, Հայկական ճարտարապետության պատմություն, Երևան, 1992, էջ 402:

77 **Մկրտչյան Շ.**, Լեռնային Ղարաբաղի պատմաճարտարապետական հուշարձանները, Երևան, 1985, էջ 119:

Պտկաթաղի եկեղեցին հարավ-արևմուտքից, հյուսիս-արևմուտքից, ներքին տեսքը դեպի արևելք և արևմուտք (լուս.՝ Ս. Դանիելյանի, 2018 թ.)

[Խ]աչս | Թադ(է)|ոս|ին:
Հրատ. **Մկրտչյան Շ.**, նույն տեղում:





Պտկաթաղի խաչքարերը (լուս. և գրչ.՝ Ս. Դանիելյանի, 2018 և 2025 թթ.)

2018 թ. եկեղեցու մոտ դեռևս պահպանվում էր գերեզմանոցի մնացորդը. տեղում առկա էին ուղղանկյուն բարձր տապանաքարեր (հիմնականում հողածածկ էին. նկատելի էին զարդերի և խաչաքանդակների վերին և շատ փոքր հատվածները), քանդակազարդ անարձանագիր մեկ տապանաքար և խաչքարի բեկոր:

Պտկաթաղի գերեզմանոցը, խաչքարի բեկոր և տապանաքար (լուս.՝ Ս. Դանիելյանի, 2018 թ.)

ՓՐԿՎԱԾ ՄԱՍՈՒՆՔՆԵՐ ՍԱԼՆԱՊԱՏԻ ՍԲ. ԳՐԻԳՈՐ ՎԱՆՔԻՑ

Աշոտ Հակոբյան

Սալնապատի Սբ. Գրիգոր վանքը հարավ-արևմուտքից (լուս.՝ Վ. Բախմանի, 1913 թ.) և ավերումից հետո (լուս.՝ Ս. Կարապետյանի (ՀՃՈՒ), 2004 թ.)

Հայ ժողովրդի պատմության և մշակութային ժառանգության ուսումնասիրության բնագավառում չափազանց կարևոր տեղ են գրավում նաև Մեծ եղեռնից փրկված եկեղեցապատկան կիրառական արվեստի նմուշները:

Սույն հոդվածը նվիրված է ՀՀ Արագածոտնի մարզի Ափնագյուղի բնակիչ Հայրապետ Մխիթարյանի մոտ պահվող Սալնապատի Սբ. Գրիգոր վանքին պատկանող 1821 թ. սկիհին և 1906 թ. խաչվառի գագաթի խաչին:

Վանի հռչակավոր հոգևոր կենտրոններից էր Սալնապատի Սբ. Գրիգոր վանքը: Այն, ըստ ավանդության, հիմնել է Գրիգոր Լուսավորիչը: Գտնվում է Վան քաղաքից 10 կմ արևելք՝ Կողբանց (այժմ՝ Սարմաչ) գյուղից 1 կմ հարավ՝ Վարագա լեռան հյուսիսային ձորի ձախափնյա լանջին (38.496669, 43.487106):



Վանքի պաշտամունքային կառույցների հատակագիծը (չափ.՝ Վ. Բախմանի, 1913 թ.)

Վանքը բաղկացած էր Սբ. Աստվածածին և Սբ. Կարապետ գմբեթավոր երկու եկեղեցիներից, գավթից և պարսպին կից օժանդակ շինություններից: Հին՝ Սբ. Կարապետ եկեղեցուն հարավ-արևելքից կից էր Սբ. Աստվածածինը, իսկ հարավից՝ փայտածածկ գավիթը: Վանքը կանգուն է եղել մինչև Ի դարի սկիզբը: Թալանվել և հրկիզվել է 1915 թ. ցեղասպանության ժամանակ, որի մասին վկայում է Լիմ անապատի վանահայր Հովհաննես վրդ. Հյուսյանը. վանքի «մէջ եղած հարիւրաւոր գրչագրերը, եկեղեցական Ս. անօթեղինաց եւ հնութեանց հետ թալանի մատնուեցան, եւ շինութիւններն հրկիզուեցան»[1]: Հետագայում ավերվել է պայթեցումով, որից ցարդ պահպանվում են միայն Սբ. Կարապետ եկեղեցու խորանի և Սբ. Աստվածածնի հարավային պատի ավերակները:

Ինչպես արդեն վերը նշեցինք, ափնայաբնակ Հայրապետ Մխիթարյանի տանն է պահվում Սալնապատի Սբ. Գրիգոր վանքից փրկված երկու մասունք՝ եկեղեցու սկիհը և խաչվառի գագաթի խաչը: Դրանք փրկել է նրա պապը՝ Միսակ Հայրապետի Խաչատրյանը (ծնվ. 1896 թ., Ապարանի շրջան, Ափնագյուղ)[2]: Անդամագրվելով Զորավար Անդրանիկի՝ 1914 թ. կազմած և գլխավորած առաջին հայ կամավորական ջոկատին և մասնակցելով Արևմտյան Հայաստանի ազատագրման կռիվներին,

1 **Գօլանճեան Ս., Հիւսեան Յ., Կիլլասէրեան Բ., Տէր-Վարդանեան Գ.**, Եղեռնը եւ մեր ձեռագրերի կորուստներն ու փրկութիւնները, Մայր Աթոռ Սբ. Էջմիածին, 2015, էջ 87-88: Տե՛ս նաև **Քոլանջյան Մ.**, Հայկական կոտորածները և մեր ձեռագրական կորուստները, «Էջմիածին», 1965, Ե-Է, էջ 143:

2 Նշենք, որ Միսակի պապը՝ Խաչատուրը, գաղթել է 1829 թ. Ալաշկերտի Խաստուր գյուղից:

Վանքի Սբ. Կարապետ եկեղեցու խորանի ավերակները (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2004 թ.)

եղել է նաև Մեծ եղեռնի ժամանակ թալանված Սալնապատի Սբ. Գրիգոր վանքում: Այդտեղ տեսնելով գետնին ընկած նշյալ իրերը՝ վերցրել է՝ փրկելով կորստից: Այժմ դրանք, որպես թանկագին մասունքներ, սերնդեսերունդ փոխանցվելով, պահվում են Հայրապետի տանը:

Սկիհից պահպանվել է բաժակը կոթով, իսկ հիմքի լայն պատվանդանը չի պահպանվել (հավանաբար 1915 թ. կոտրել են վանքն ավերած թուրք և քուրդ հրոսակները): Արծաթաջրած պղնձե սկիհի վերին հատվածում՝ արտաքին մակերեսին, ողջ շրջագծով փորագրված է երկտող արձանագրությունը.

Սկիհը (լուս.՝ հոդվածագրի (ՀԵՌՒ), 2020 թ.)

(Յ)իշատակ է սկի(հ)ս Կողբանից խասարակ ժողովէրդեան, որ ետուն ի դուռն Ս(ուրբ)ք Գրիգոր Լուսա-{յ}(ւ)որչ/ուն եւ Ս(ուրբ)ք Կարապետայ, ՌՄՀ (1821 թ.):

Ծանոթ. հիշատագրության մեջ *Լուսավորչ/ուն* անվան մեջ չ-ն շրջագիր է: Արձանագրությունը վկայում է, որ 1821 թ. պատրաստված սկիհն ընծայվել է Սալնապատի Սբ. Գրիգոր վանքին և մասնավորապես Սբ. Կարապետ եկեղեցուն:

Խաչվառի գագաթի պարզառճ պղնձե խաչը պահպանվել է իր կորավուն պատվանդանով: Խաչի հարթ մակերեսին փորագրված է 10 տողանի արձանագրություն.

1906 / աբ(ռիլի) / 16, / յիշ(ատակ է) Գաբրիէլ(ի), սծ.՞ / վ(ա)ս(ն) / Ս(ուրբ)ք / Կա/ռա/պե(տ) / եգեղ(եցուն):

Ծանոթ. ըստ արձանագրության՝ նվիրվել է Սալնապատի Սբ. Գրիգոր վանքի Սբ. Կարապետ եկեղեցուն:

Ամփոփելով վերնասացյալը՝ նշենք, որ Միսակ Խաչատրյանի շնորհիվ Սալնապատի Սբ. Գրիգոր վանքից փրկված արժեքավոր այս մասունքներն իրենց արձանագրություններով ունեն ոչ միայն նվիրատվական նշանակություն, այլև չափազանց կարևոր են հայկական կիրառական արվեստի իրերի ուսումնասիրության և վանքի պատմությունն ամբողջացնելու առումով:

Խաչվառի գագաթի խաչը (լուս.՝ հոդվածագրի, 2020 թ.)

ՎԱՆԻ ՏԻՐԱՄԱՅՐ ՍԲ. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԶԱՆԳԸ

Էմմա Աբրահամյան

Տիրամայր Սբ. Աստվածածին եկեղեցին (լուս.՝ Ս. Դանիելյանի (ՀՃՈՒ), 2017 թ.)

Հայ ժողովրդի պատմության, մշակույթի և ինքնության վկաներից են նաև եկեղեցական զանգերը: Մեր փոքրիկ հոդվածը նվիրված է Մեծ Հայքի Վասպուրական աշխարհի Վան քաղաքի Տիրամայր Սբ. Աստվածածին եկեղեցու՝ 1915 թ. Մեծ եղեռնը «վերապրած» զանգին: Այն տեսել և լուսանկարել է ՀՃՈՒ հիմնադրամի երկրորդ արշավախումբը (ղեկ.՝ Սամվել Կարապետյան) 2016 թ. օգոստոսի 13-ին Իրանի Իսլամական Հանրապետության Ուրմիա քաղաքի Ազգագրության թանգարանում:

Ցեղասպանությունից հետո Սբ. Աստվածածին[1] եկեղեցին ավերվում է, իսկ եկեղեցական իրերն ու

Տիրամայր Սբ. Աստվածածին եկեղեցու զանգը (լուս.՝ Ս. Կարապետյանի (ՀՃՈՒ), 2016 թ.)

զանգը հափշտակվում են: Իսկ թե ինչպե՞ս է այն հայտնվել թանգարանում, հայտնի չէ:

Զանգը պղնձից է: Ունի սնամեջ տանձաձև իրան՝ ստորին մասում փռված լայնաշուրթ բերանով: Վերնամասով և կենտրոնով ձգվում է բուսազարդ նրբագեղ գոտին, որի հակադիր երկու կողմերում՝ ուղղանկյուն շրջանակի մեջ, պատկերված են Աստվածամայրը մանկան հետ և 3 սուրբ հեծյալներից (Սարգիս, Թեոդորոս, Գևորգ) մեկը[2]՝ վիշապին նիզակահարելիս: Վերին մասում կան ունկաձև բռնակներ՝ զանգը կախելու համար: Բուսազարդերի միջև և ստորին շուրթին բոլորաձև գոտևորում է նվիրատվական բնույթի եռատող արձանագրությունը.

Այս զանկակը յիշատակ է Աստին Փանոսեան Ֆրանգուլեանցէն | Վանայ Տիրամօր եկեղեցւոյն, 1888 թ. 7 յուլիսի: | 343/4:

1 Տիրամայր Սբ. Աստվածածին եկեղեցու ավերակները գտնվում են Վան քաղաքի Քաղաքամեջ թաղամասում (38.501064, 43.343728; ծ. մ.՝ 1667 մ): Հիմնադրման տարեթիվն անհայտ է: 1775 թ. եկեղեցին նորոգվում է, որի մասին պատմող արձանագրությունը փորագրված էր դարպասին (**Տեր-Ստեփանյան Ա.**, Վիմագրերը Մատենադարանի ձեռագրերում, «Վարձք», № 11, էջ 18, արձ. ԺԷ), իսկ 1816 թ. պատրաստվում է խաչկալը (նշվ. հոդվ., էջ 19, արձ. ԻԵ): Եկեղեցին ուներ բազմաթիվ կալվածքներ և հարուստ էր «...թանգագին ոսկեայ, արծաթեայ և ակունքներով զարդարուած փորագրուած զարդ-սպասներով...» (**Շէրենց Գ.**, Սրբավայրեր, Թիֆլիս, 1902, էջ 23): ԺԹ դարավերջին այստեղ էր պահվում հրաշագործ «Մարխաս» կամ «Մալխաս» Ս. Աւետարան ձեռագիր և ծաղկանկար, որն հիւանդների վրայ տարվում է» (նշվ. աշխ., էջ 24):
1915 թ. Վանի ինքնապաշտպանության օրերին՝ ապրիլի 24-25-ին, «խոշոր աւերումներ ստացան Ս. Նշան, Ս. Պօղոս եւ Տիրամայր եկեղեցիները» (**Կոսոյեան Հ.**, Վան-Քաղաքամիջի ապրիլեան կռիւները, «Հայրենիք», 1929, № 5, էջ 140), իսկ «Ռուս բանակի վերջին նահանջէն յետոյ, հազարէ աւելի քիւրտեր մտեր են Վան, եւ ...այրեր են ...Արարուց թաղի մեծ եկեղեցին, Այգեստանի վարժարանները եւ Քաղաքամէջի Տիրամայր անուն տաճարը...» (Վասպուրականեան խապրիկներ, «Կոչնակ», 1916, № 4, էջ 95):

2 Հավանականը Սբ. Գևորգն է, քանի որ ԺԵ դարից սկսած՝ սրբապատկերներում հաճախ են Աստվածամայրը և Սբ. Գևորգը ներկայացված միասին, ինչպես նաև, ի տարբերություն խնդրո առարկայի, Սբ. Թեոդորոսն ավելի տարեց և մորուքով է պատկերվում, իսկ Սբ. Սարգիսը՝ հիմնականում որդու՝ Մարտիրոսի հետ, հազվադեպ՝ նաև վիշապ սպանելիս:

ԵԶՆԱԳՈՄԵՐՑԻ ՄԵԼԻՔ ՄԻՐԶԱԽԱՆԻ ՆՈՐԱՀԱՅՏ ՏԱՊԱՆԱՔԱՐԸ

Ռաֆֆի Քորքոշյան

1720-ական թթ. երկրորդ կեսին Արցախը ենթարկվում է օսմանյան բանակի ավերիչ ներխուժումներին, որին հաջորդած աննախադեպ հալածանքների պատճառով հայաբնակ շրջանները՝ Ծար, Քաշաթաղ, Քաշունիք և Կովական, գրեթե ամբողջությամբ դատարկվում են[1]: Այդ բռնագաղթի մասին է անուղղակիորեն վկայում Իրանի Նոր Ջուղայի հայկական գերեզմանոցում մեր[2] կողմից 2012 թ. ուշադրության արժանացած Քաշաթաղի շրջանի եզնագոմերցի մելիք Միրզախանի նորահայտ տապանաքարը:

Վերջինս 1696 թ. դեռևս իր տիրույթում էր, Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի թիվ 6725 ձեռագիր Մաշտոցում նա հիշվում է Եզնագոմեր գյուղի[3] «առաջնորդ»՝ տանուտեր[4]:

Տապանաքարի՝ ԺԸ դարի հակիրճ արձանագրությունը կարևոր է նաև նրանով, որ այն անվանափոխված[5] գյուղի պատմական հայկական անվանման ևս մեկ հիշատակությունն է, առաջինը՝ 1696 թ.[6], երկրորդը՝ 1730 թ.[7]:

Մելիք Միրզախանի տապանաքարը (լուս.՝ Ա. Հակոբյանի (ՀՃՈՒ), 2012 թ., գրչ.՝ Հ. Ղազարյանի (ՀՃՈՒ), 2022 թ.)

Ուղղանկյունաձև տապանաքարի երեսին փորագիր եռատող արձանագրությունն է.

Եզնագումար/ցի մէլիք Մի/րզախանին:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. ըստ պատմական տեղեկությունների և ոճական առանձնահատկությունների՝ այն թվագրում ենք ԺԸ դարի սկզբով:

---

1 **Քալայան Վ.**, Արցախի պատմություն, Երևան, 2002, էջ 151-170: **Կարապետյան Ս.**, Հայ մշակույթի հուշարձանները Խորհրդային Ադրբեջանին բռնակցված շրջաններում, Երևան, 2001, էջ 12 և 126: **Նույնի**՝ Արցախ քարտեզագիրք, Երևան, 2016, էջ 2: Տե՛ս նաև **Յովհաննիսեան Ա.**, Պետրոս դի Սարգիս Գիլանենց, Վաղարշապատ, 1916, էջ 16:

2 ՀՃՈՒ հիմնադրամի արշավախումբ՝ Էմմա Աբրահամյան, Ռաֆֆի Քորքոշյան և Աշոտ Հակոբյան:

3 Գյուղում առկա պատմական հուշարձանների հետքերը վկայում են, որ այն հայաբնակ է եղել մինչև ԺԸ դարի սկզբները (**Կարապետյան Ս.**, Հայ մշակույթի հուշարձանները..., էջ 127): Ուշագրավ է գյուղի հյուսիսային կողմում գտնվող ԺԷ-ԺԸ դդ. թվագրվող տանուտիրոջ կամ քահանայի երկսենյականոց տունը (նշվ. աշխ., էջ 128), որը, մեր կարծիքով, ամենայն հավանականությամբ, մինչև բռնագաղթը պատկանել է մելիք Միրզախանին:

4 **Յակոբեան Ա.**, Հակարիի վերնահովտի նորայայտ վիմագրերը. Բ «Արևելագիտական ժողովածու», 2009, № 27, էջ 237, 250: Հարկ է նշել, որ ձեռագրի հիշատակարանից հստակ չէ, թե մելիք Միրզախանը Եզնագոմեր գյուղի՞, թե՞ Ալբաուտ գավառի «առաջնորդն» էր (**Յակոբեան Ա.**, նշվ. հոդվ., էջ 250), որն արդեն վերջնականապես պարզվում է այս նորահայտ տապանագրով:

5 Եզնագոմեր գյուղը ցարական քարտեզներում և ուշ ժամանակի գրականության մեջ հանդիպում է Ղարաքեշիշ անվանաձևով: Խորհրդային տարիներին այն վերանվանվել է Լենինքյանդ (**Կարապետյան Ս.**, Հայ մշակույթի հուշարձանները..., էջ 127): Արցախի Հանրապետության ժամանակաշրջանում՝ 1994-2020 թթ., հիշվում է Լեռնահովիտ և Եզնագոմեր տարբերակներով: 2020 թ.-ից անցնելով Ադրբեջանի հսկողության տակ՝ վերանվանվել է Քարակեչիդ:

Հարկ է նշել՝ կան բազմաթիվ փաստեր առ այն, որ հայկական բնօրրան ներթափանցած և բնակություն հաստատած քոչվոր տարբեր ցեղեր ժամանակի ընթացքում, իրենց մայրենիի հնչյուններին համահունչ, աղավաղել կամ հիմնովին փոխել են բնակավայրերի հայկական պատմական անվանումները: Այդ գործընթացը, սակայն, պետական քաղաքականության է վերածվում հատկապես Օսմանյան կայսրության մայրամուտին և շարունակվում է Թուրքիայի Հանրապետության օրոք՝ հատկապես 1950-ական թթ. (Այդ մասին տե՛ս **Պօղոսեան Ն.**, Պատմական Հայաստանի տեղանունների թուրքացումը, «Սիոն», 2001, № 4-6, էջ 141-147: **Սահակյան Լ.**, Հայկական տեղանունների թուրքացման քաղաքականությունը Օսմանյան կայսրությունում և հանրապետական Թուրքիայում, «Վէմ» համահայկական հանդես, 2010, № 1, էջ 83-96: **Nişanyan S.**, Hayali Coğrafyalar: Cumhuriyet Döneminde Türkiye'de Değiştirilen Yeradları, İstanbul, 2011): Ադրբեջանում նմանատիպ քաղաքականություն «գործի է դրվել» դեռևս խորհրդային տարիներին և շարունակվում է առ այսօր:

6 Հիշվում է ՄՄ թիվ 6725 ձեռագիր Մաշտոցի 1696 թ. հիշատակարանում (**Յակոբեան Ա.**, նշվ. հոդվ., էջ 237):

7 Գյուղը հիշատակվում է Օրբելյանի «Ժամանակագրութիւն» հավելվածում. այն Տաթևի վանքի նոր հարկացուցակում (1730 թ.) առավելագույն պտղահարկ մուծող՝ 6700 միավոր, գյուղ էր, որն ինքնին գյուղի բազմամարդության վկայությունն է (Ժամանագրութիւն **Ստեփանոսի Օրբէլեանի** (հավելված), Երևան, 1942, էջ 42: **Կարապետյան Ս.**, Հայ մշակույթի հուշարձանները..., էջ 127: **Յակոբեան Ա.**, նշվ. հոդվ., էջ 236): Ըստ այլ աղբյուրի՝ Տաթևի վանքի նոր հարկացուցակը նշվում է 1781 թ. (**Հակոբյան Թ.**, **Մելիք-Բախշյան Ստ.**, **Բարսեղյան Հ.**, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 2, Երևան, 1988, էջ 169-170):

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ԵՆՔ ՀԱՅՏՆՈՒՄ

ՆՅՈՒԹԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

- «**Գալուստ Գյուլբենկյան**» հիմնարկությանը
- «**Հ. Հովնանյան**» ընտանեկան հիմնադրամին
- ՀՃՈՒ հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամ **Մարգրիտ Հախնազարյանին**
- ՀՃՈՒ հիմնադրամի գիտական խորհրդի անդամ **Հովան Սիմոնյանին**

ՏԵԽՆԻԿԱՅՈՎ ԱՂԱՀՈՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ

- «**Save Armenian Monuments**» կազմակերպությանը
- «**Հզորացնենք Հայաստանը**» բարեգործական կազմակերպությանը
- ՀՃՈՒ հիմնադրամի բարեկամ **Վահագն Նազարյանին**

ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԾՈՒ ՆՎԻՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ

- **Զավեն Սարգսյանի ընտանիքին**
- **Հարություն Խաչատրյանին**
- **Միհրան Ղազարյանին**
- **Ժան-Կլոդ և Շանթել Հոթելիեներին**
- **Սամվել Այվազյանին**
- **Լեռնիկ Հովհաննիսյանին**

ՀԱՋՎԱԾՈՒՏ ԾՐԲԵՐ ՆՎԻՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ

- **Ժիրայր Քոչարյանին**
- **Հովան Սիմոնյանին**

ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ
ՀՈՎԱՆԱՎՈՐ
ՀՀ ԿԳՄՍ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ
ՀՈՎԱՆԱՎՈՐՆԵՐ
RAA-USA
 ԵՒ
Հ. ՀՈՎՆԱՆՅԱՆ
ԸՆՏԱՆԵԿԱՆ ՀԻՄՆԱՐԱՄՆ

ՀԱՅԿԱԿԱՆ
ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՂ ՀԻՄՆԱՐԱՄ
RESEARCH ON ARMENIAN
ARCHITECTURE

ԵՐԵՎԱՆ - YEREVAN
2025

ISSN 1829-2003